

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**АРТАК МОВСИСЯН[†], РОБЕРТ КАЗАРЯН,
РУСЛАН ЦАКАНЯН, ЛИАННА КАРАПЕТЯН**

**АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В ПИСЬМЕННЫХ
ИСТОЧНИКАХ ДРЕВНЕГО ВОСТОКА В III
ТЫСЯЧЕЛЕТИИ И ПЕРВОЙ ПОЛОВИНЕ II
ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э.**

КНИГА I

**ИСТОЧНИКИ III ТЫСЯЧЕЛЕТИЯ ДО Н.Э. ОБ
АРМЯНСКОМ НАГОРЬЕ**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2023**

**YEREVAN STATE UNIVERSITY
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**ARTAK MOVSISYAN†, ROBERT GHAZARYAN,
RUSLAN TSAKANYAN, LIANNA KARAPETYAN**

**THE ARMENIAN HIGHLAND IN WRITTEN SOURCES OF
THE NEAR EAST IN THE III MILLENNIUM AND THE FIRST
HALF OF THE II MILLENNIUM BC**

BOOK I

**SOURCES OF THE III MILLENNIUM BC ABOUT THE
ARMENIAN HIGHLAND**

**YEREVAN
YSU PRESS
2023**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՐՏԱԿ ՄՈՎԱՍԻՍՅԱՆ[†], ՌՌԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՌՈՒՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒԱՇԽԱՐՀԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ
Ք.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԵՎ II ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ
I ԿԵՍԻ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Գիրք I

**Ք.Ա. ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2023**

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

Հ 253

**Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական
համալսարանի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհուրդների որոշմամբ:**

Հ 253 Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի Ք.Ա. III հազարամյակի և II հազարամյակի առաջին կեսի գրավոր աղբյուրներում / Ա. Մովսիսյան, Ռ. Ղազարյան, Ռ. Ցականյան, Լ. Կարապետյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2023.- Գիրք I: Ք.ա. III հազարամյակի սկզբնաղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին.- 194 էջ:

Աշխատությունը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի երկրների և բնակավայրերի հնագույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից Ք.ա. III հազարամյակի միջագետքյան սեպագիր տեքստերի գիտական հրատարակությունը՝ կից պատմագիտական հեղափոխությամբ:

Աշխատությունը «Հայկական լեռնաշխարհը Հին Արևելքի Ք.ա. III հազարամյակի և II հազարամյակի I կեսի գրավոր աղբյուրներում» շարքի առաջին հատորն է և կարող է օգտակար լինել հայագետներին ու արևելագետներին, ինչպես նաև Հին Արևելքի պատմությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրի շրջանակում (20TTSH-047, 2020-2023 թթ.):

ՀՏԴ 930.2

ԳՄԴ 63.2

Գիրքը տպագրվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

ISBN 978-5-8084-2650-4

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426504>

© ԵՊՀ հրատ., 2023

© Հեղ. խումբ, 2023

**Գիրքը նվիրվում է
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր
Արտակ Մովսիսյանի հիշատակին
(1970-2020 թթ.)**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	8
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	10
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ, ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	12

ԳԼՈՒԽ 1

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՆ

ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ	13
ԷՆՄԵՐՔԱՐԸ ԵՎ ԷՆՍՈՒԽԳԻՐԱՆՆԱՆ.....	13
ԷՆՄԵՐՔԱՐԸ ԵՎ ԱՐԱՏՏԱՅԻ ՏԻՐԱԿԱԼԸ.....	30
ԼՈՒԳԱԼՔԱՆԴԱՆ ԼԵՌՆԵՐԻ ԽԱՎԱՐՈՒՄ	69
ԳԻԼԳԱՄԵՇԸ ԵՎ ԽՈՒՎԱԿԱՆ	80

ԳԼՈՒԽ 2

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ.....

.....	93
ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿՐԻՐԸ ԱԴԱՔԻ ԼՈՒԳԱԼ-ԱՆՆԵ-ՄՈՒՆԴՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	95
ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿՐԻՐԸ ԼԱԳԱՇԻ ԷԱՆԱՏՈՒՄ ԱՐՔԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	102
ՈՒՐՈՒԿԻ ԱՐՔԱ ԼՈՒԳԱԼՁԱԳԵՍԻԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	107

ԳԼՈՒԽ 3

ԱՔՔԱԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

.....	110
ՍԱՐԳՈՆ ԱՔՔԱԴԱՅՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	110
ՍԱՐԳՈՆ ԱՔՔԱԴԱՅՈՒ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	119

ԱՔՔԱԴԻ ԱՐՔԱ ՌԻՄՈՒՇԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	125
ՆԱՐԱՄ-ՍԻՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	127
ՇԱՐ-ԿԱԼԻ-ՇԱՐՐԻԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	158

ԳԼՈՒԽ 4

ԼԱԳԱՇԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԿԱԼ ԳՈՒԴԵԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	165
---	------------

ԳԼՈՒԽ 5

ՈՒՐԻ III ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ	168
---	------------

SUMMARY	181
ՔԵՅԻՍՈՄԵ.....	182
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	183
ՀԱՎԵԼՎԱԾ.....	187
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ.....	187
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	191

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հնագույն պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրներ են հայտնաբերվել հին Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր գիր ունեցող երկրներում, ինչը խոսում է հնագույն ժամանակներում մեր երկրի՝ տարածաշրջանում ունեցած կարևոր դերակատարման մասին:

Հայաստանի պատմության մասին ամենահին տեղեկությունները հաղորդում են Շումերի, Էբլայի, Աքքադի, Միջագետքի հյուսիսից և Իրանի տարածքից հայտնաբերված Ք.ա. III հազարամյակով թվագրվող սեպագիր արձանագրությունները:

Հայկական լեռնաշխարհի տարածքում ձևավորված առաջին պետական կազմավորումների վերաբերյալ սեպագիր սկզբնաղբյուրները վկայում են Արատտա, Հայա և Սուբուր երկրների մասին:

Հայաստանին տրված հնագույն անվանումները՝ Արատտա-Արարատ/Ուրարատ - Ուրարտու, Ս/Շուբուր - Ս/Շուբարտու - Շուբրիա, Արման(ի/ում) -Արմի/ե - Արմինա տարբերակներով, վկայված են Ք.ա. III հազարամյակի առաջին կեսից, երբ, ըստ լեզվաբանության տվյալների, հայերենը դարձել էր ինքնուրույն լեզու, իսկ վաղնջահայերենի կրողները Ք.ա. III-II հազարամյակներում բնակվում էին Հայկական լեռնաշխարհում:

Ք.ա. XXVIII-XXVII դարերից մինչև Աքքադի թագավորության ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհի և նրա բնիկների մասին տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը վերաբերում է Միջագետքում բնակություն հաստատած սուբարեցիներին, երկրորդը՝ Հայկական լեռնաշխարհին:

Առաջին խմբի առավել վաղ բնագրերը (որոնք գտնվել են Ֆառայից և թվագրվում են Ք.ա. XXVI-XXV դարերով) սուբա-

րեցիներին հիշատակում են որպես դպիրներ, դպրապետեր, հացթուխներ, հացթուխապետեր, դարբիններ, իսկ քիչ ավելի ուշ շրջանի բնագրերը՝ դարբիններ, այգեպաններ և այլն:

Երկրորդ խումբը կազմում են Ք.ա. XXV-XXIV դարերում իշխած երեք՝ Ադաբի, Լագաշի և Ումմայի արքաների արձանագրությունները¹:

Ք.ա. III հազարամյակում Հայկական լեռնաշխարհի հարավում և նրա հարակից տարածքներում է հիշատակվել Սուբուր/Սուբիր կամ *U/Շուբարյու* երկիրը:

Սուբուր երկրի անվանումը սեպագիր արձանագրություններում շատ հաճախ տարբեր կերպ է արձանագրվել՝ ŠUBUR, SU.BIR₄.KI (SU₆.BIR₄.KI)SU, SU, SU.EDEN, SU.BAL.BIR.KI, SU.BAPPIR, SUBAR, արքադերեն *Š/SUBARTU(M)*² և այլն: Տարածքային առումով Սուբուր երկիրն ընդգրկել է զգալի մեծ տարածք՝ Վանա լճի ավազանը (հարավում սահման ունենալով Թալմուս-Ազուխինում գիծը), և Ուրմիո լճի ավազանով աղեղնաձև ձգվել է Զագրոսյան լեռներով դեպի հարավ³:

¹ Տե՛ս **Մովսիսյան 2005**, 5-14, 31-55, **Մովսիսյան 2013**, 29-33, 56-48:

² Տե՛ս **RIA 2011-2013**: 225-226, **Ungnad 1936**: 24-30, **Gelb 1944**: 28, **Speiser 1948**: 11, **O'Callaghan 1948**: 38, 42, **Մովսիսյան 2005**, 48-55:

³ Տե՛ս **Մովսիսյան 2005**, 32, **Մովսիսյան 2013**, 40, 48, հմմտ. նաև՝ **Ղազարյան, Ցականյան 2021a**, 117:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատությունում տեղ են գտել տվյալ ժամանակաշրջանի աղբյուրների հիմնական մասը, որոնք ունեն պատմագիտական որոշակի նշանակություն Հին Հայաստանի պատմության համար:

Տեքստերի թարգմանությունը, տառադարձումը, մեկնաբանությունները կատարելիս հաշվի ենք առել վերջին տարիների սեպագրագիտության նոր մոտեցումները: Առանձին ներկայացվել են նաև այդ աղբյուրներում տեղ գտած անձնանունների և տեղանունների ցանկերը:

Աշխատությունում օգտագործել ենք նաև մի շարք հատուկ նշաններ, հապավումներ, որոնց ամբողջական ցուցակը տրված է աշխատության սկզբնամասում:

Սույն ուսումնասիրության մեջ կիրառվել են հետևյալ սկզբունքները՝

- ներկայացվել է աղբյուրների ամբողջական տառադարձումը, այնուհետև տրվել է ամբողջական թարգմանությունը,
- տառադարձման ժամանակ նշվել են մեր կամ այլ հեղինակների նկատառումները,
- թարգմանության ժամանակ որոշ բառեր կամ բառակապակցություններ ավելի հասկանալի դարձնելու համար տրվել են նաև մեր մեկնաբանությունները դրանց վերաբերյալ,
- հատուկ անունների դեպքում պահպանվել է ներկայումս սեպագրագիտության մեջ ընդունված գրելաձևը,
- տեքստում օգտագործված շումերերեն բառերը, վերջավորությունները, սահմանիչները (դետերմինատիվները) տառադարձման ժամանակ տրվել են լատինե-

րեն մեծատատերով, իսկ աքքադերեն բառերը՝ շղագիր լատիներեն,

- սահմանիչները, շումերագիր և աքքադագիր վերջավորությունները տրվել են բառերի վերևի մասում:

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ,
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դկ – Դիմային կողմ

Հկ – Հակառակ կողմ

[.....] – վնասված, բացակայող և չվերականգնված հատված

[] – բացակայող, սակայն վերականգնված հատված

Դ Դ – վնասված կամ վատ ընթեռնելի մեկ կամ մի քանի սեպանշան

LՇԳ – «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան:

AfO – Archiv für Orientforschung.

JAOS – Journal of the American Oriental Society (since 1843).

JCS – Journal of Cuneiform Studies (since 1947).

RA – Revue d'Assyriologie et d'archéologie orientale, Paris (since 1884).

RIA – Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Berlin-Leipzig-New York.

ZA – Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archäologie (since 1886).

ԳԼՈՒԽ 1
ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՆ
ԱՐԱՏՏԱ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

ԷՆՄԵՐՔԱՐԸ ԵՎ ԷՆՍՈՒԽԳԻՐԱՆՆԱՆ

Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ առաջին տեղեկությունները պատկանում են շումերներին: Շումերական գեղարվեստական գրականության մեջ Հայկական լեռնաշխարհի հարավային, միգուցե նաև կենտրոնական շրջաններում հիշատակվում է Արատտա երկիրը: Բավականին ուշագրավ են նաև «Էնմերքարը և Էնսուփգիրաննան»⁴ ու «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» վիպերգերը:

Ըստ «Էնմերքարը և Էնսուփգիրաննան» (շուրջ 280 տող) վիպերգի՝ Եփրատ գետով բարձր լեռնային Արատտա երկրից ռազմարշավ է իրականացվել դեպի Շումեր: Ըստ «Էնմերքարը և Էնսուփգիրաննան» բնագրի՝ կործանված Խամազի երկրից Արատտա է եկել նրա ներկայացուցիչը՝ առաջարկելով Արատտայից Շումեր ռազմական արշավանք կատարել Եփրատով: Առաջարկը նա ներկայացրել է Արատտայի կառավարիչ Անսիզգարիային, որն էլ իր հերթին՝ Արատտայի քրմապետ-արքա Էնսուփգիրաննային: Վերջինս հարցը ներկայացրել է Ավագների ժողովին, որում հարցին դրական լուծում չի տրվել: Քրմապետ-արքան, այնուամենայնիվ, որոշել է իրականացնել արշավանքը և այդ նպատակով տրամադրել է հինգ մինա ոսկի, նույնքան էլ արծաթ, պարենամթերք: Խամազի ներկայացուցիչը հասել է Եփրատի ափին գտնվող

⁴ Վիպերգի վերնագրի երկրորդ անձնանունը վիպերգի այլ տարբերակներում ու պատճեններում ունի տարբեր ընթերցումներ՝ Էնսուքուշիրաննա, Էնսուծքեշրաննա, Էնսուխեշրաննա և այլն, տե՛ս **Մովսիսյան 2005**, 16, ծնթ. 2:

Էրեշ քաղաքը, սակայն այնտեղ անհաջողություն է կրել, որից հետո Արատտայի տիրակալն ընդունել է Ուրուկի տիրակալ Էնմերքարի առաջնությունը՝ նրան կոչելով «մեծ եղբայր»:

Սկզբնաղբյուրների համադրման արդյունքում Արատտա երկրի տեղադրության հարցի քննությունը ցույց է տալիս, որ այդ երկրի կազմի մեջ մտել են առնվազն Եփրատի՝ Հայկական Տավրոսով անցման շրջանը, Վանա ու Ուրմիո լճերի ավազանները: Փաստվում է նաև, որ շումերական աղբյուրներում հիշատակված Արատտան և Աստվաճաշնչի Արարատը միևնույն երկրի՝ Հայաստանի հնագույն անվանումներն են շումերական ու եբրայական աղբյուրներում⁵:

Vanstiphout 2003: 28-45, Berlin 1979: 48-59.

Գիտական տառադարձումը

1. sig₄ KUR.ŠUBA-ta ed₂-a
2. KUL.ABA₄.KI IRI.KI an ki-da mu₂-a
3. UNUG.KI-ga mu-bi ^dtir-an-na-gin₇
4. an-ne₂ us₂-sa-bi si-muš₃ gun₃-a
5. an-na gub-ba-bi ud-SAKAR GIBIL na-nam
6. me GAL.[GAL] nam-nun-na du₃-a
7. KUR SIKIL-la UD DUG₃-ga KI ġar-ra
8. iti₆-gin₇ KALAM.MA e₃-a
9. ud ZALAG-gin₇ KALAM-ma si sa₂
10. AB₂.UR₃ AB₂.SAĤAR_x(NE)-gin₇ ĥe-nun-ta e₃-a
11. UNUG.KI-ga ka tar-ra-bi KUR-ra ba-teġ₃
12. me-lem₄-bi kug-me-a zid-da-am₃
13. ARATTA.KI-a tug₂-gin₇ ba-e-dul gada-gin₇ ba-e-bur₂
14. ud-ba ud en-na-am₃ ġi₆ BARAG-ga-am₃ ^dUTU LUGAL-am₃
15. SUKKAL EN ARATTA.KI-ka SUKKAL AN-sig₇-ga-ri-a mu-ni ĥe₂-en-na-nam

⁵ Տե՛ս Մովսիսյան 1992, Մովսիսյան 2005, 16, 21, Մովսիսյան 213, 29 և հաջորդիվ:

16. SUKKAL En-me-er-kar₂ EN KUL.ABA₄.KI-ke₄ Nam-en-na-tum₂-ma mu-ni
17. EN ri₂ e-ne nun ri₂ e-ne
18. EN ġi₆-ri₂ e-ne nun ġi₆ ri₂ e-ne
19. EN ġi₆-ġi₆.ri₂ e-ne nun ġi₆-ġi₆.ri₂ e-ne
20. lu₂ DIĠIR-še₃ tu-ud e-ne
21. lu₂ DIĠIR-še₃ pa ed₂ e-ne
22. EN UNUG.KI-ga EN KUL.ABA₄.KI-ra ur₅-bi a-da-min₃ na-e-de₃
23. EN ARATTA.KI EN-suh-gir₁₁-an-na-ke₄
24. IGI-bi IGI UNUG.KI-še₃ KIĠ₂.GI₄.A-ar INIM mu-na-ni-ib₂-be₂
25. e-ne ġa₂-a-ra gu₂ ħa-ma-an-ġa₂-ġa₂ ĠIŠ.ŠUDUL₄ ħa-ma-ab-il₂-e
26. ud-da gu₂ ma-an-ġar gu₂ na-ma-an-ġar u₃ e-ne u₃ ġa₂-e
27. [e-ne]^d INANA-da E₂-ġar₈-a-ka hu-mu-da-an-til₃
28. [ġa₂]^l e^l INANA-da E₂-za-gin₃ ARATTA.KI-ka ħu-mu-da-an-til₃-e-en
29. ġiš-nu₂ GIRIN-a-ka ħu-mu-un-de₃-nu₂
30. še-er-kan₂ DUG₄ u₃ DUG₃ ku-ku-de₃ ħu-mu-de₃-nu₂-en
31. e-ne^d INANA-da ġi₆-a ma-mu₂-da IGI ħu-mu-ni-in-du₈
32. ġa₂-e^d INANA-da ĠIRI₃ BABBAR-ra-na INIM mu-da-bal-e
33. e-ne KUR-gi₄.MUŠEN še ħe₂-bi₂-ib₂-gu₇-e
34. ġa₂-e KUR-gi₄.MUŠEN še ba-ra-bi₂-ib₂-gu₇-e
35. ġa₂-e KUR-gi₄.MUŠEN NUNUZ-bi ġir₃-lam-ma AMAR-[bi ĠAR la₂-e]
36. di₄-di₄-bi UTUL₂-mu-še₃ GAL.GAL ŠEN maḥ-[mu-še₃]
37. KUR-gi₄.MUŠEN ki-a ba-ra-ab-tak₄-[a-bi]
38. ENSI₂ KUR-ra-ke₄ gu₂ mu-un-ġar-[re-eš-a] mu-da-an-gu₇ -[u₃-ne]
-
- ...
52. en-ra [ĠI₆.PAR₄] KUG-ga-ni-še₃ im-ma-ši-in-ku₄-ku₄
- 52a. En-me-er-kar₂ <KI> KUG-KUG-ga-ni-še₃ im-ma-ši-in-ku₄-ku₄
53. za-e-še₃ LUGAL-mu mu-e-ši-in-gi₄-gi₄
54. EN ARATTA.KI En-suh-gir₁₁-an-na-ke₄ mu-e-ši-in-gi₄-gi₄
- 54a. LUGAL-zu dug₄-ga-ni nam-mu taḥ-a-ni nam-mu
- 54b. En-suh-gir₁₁-an-na-ke₄ dug₄-<ga>-ni nam-mu taḥ-a-ni nam-mu
- 54c. LUGAL-mu a-na bi₂-in-dug₄ a-na bi-in-taḥ-am₃
- 54d. En-suh-gir₁₁-an-na-ke₄ a-na bi₂-in-dug₄ a-na bi₂-in-taḥ-am₃
55. LUGAL-mu na-ab-be₂-a
56. e-ne ġa₂-a-ra gu₂ ħa-ma-an-ġa₂-ġa₂ ĠIŠ.ŠUDUL₄ ħa-ma-ab-il₂-e

57. ud-da gu₂ ma-an-ĝar gu₂ [na-ma-an-ĝar u₃ e]-¹ne¹ u₃ ĝa₂-e
58. e-ne ^dINANA-da ¹E₂-ĝar₈¹-[a-ka ĥu-mu-da]-an-til₃
59. ĝa₂-e ^dINANA-da E₂-za-gin₃ [ARATTA.KI-ka ĥu-mu]-da-an-til₃-
en
60. ĝiš-nu₂ GIRIN-a-ka ĥu-mu-un-[de₃-nu₂]
61. še-er-KAN₂ DUG₄ u₃ DUG₃ ku-ku-da [ĥu-mu-de₃-nu₂-en]
62. e-ne ^dINANA-da ĝi₆-a¹ ma-mu₂¹-[da IGI ĥu-mu-ni-in-du₈]
63. ĝa₂-e ^dINANA-da ĜIRI₃ BABBAR-ra-na INIM [mu-da-bal-e]
64. e-ne KUR-gi₄.MUŠEN še ĥe₂-bi₂-[ib₂-gu₇-e]
65. ĝa₂-e KUR-gi₄.MUŠEN še ba-ra-bi₂-[ib₂-gu₇-e]
66. ĝa₂-e KUR-gi₄.MUŠEN NUNUZ-bi ĝir₃-lam-[ma AMAR-
bi ĜAR la₂-e]
67. di₄- di₄-bi UTUL₂-mu-še₃ GAL.GAL ŠEN maĥ-mu-še₃
68. KUR-gi₄.MUŠEN ki-a ba-ra-ab-tak₄-bi
69. ¹ENSI₂ KUR-ra gu₂¹ [mu]-¹un¹-ĝar-re-eš-am₃ [mu-da]-gu₇-u₃-ne
70. EN UNUG.KI-ga [X] si¹-muš₃-bi X-da ĜIŠ.ZI-gan-bi-im
71. [...] ĜIŠ.RAB₃ šu ri-bi
72. [...] KI us₂-sa-a-ba
73. SUR₂.[DU₃].MUŠEN an-na dal-e-da-bi gu MUŠEN-na-bi -[im]
74. ¹šig₁₂¹ [E₂] GAL ARATTA.KI-ka SUR.SUR maĥ ĥe₂-[...] -¹im¹?
75. [...] ¹GAL¹.GAL ARATTA.KI-¹a NAM¹ [...] maĥ-bi-im
76. [...] ba²-DU-a-aš [...] ĝal₂
77. [im]-gin₇ šu bi₂-in-ra im-gin₇ IGI i-ni-in-bar
78. [e-ne] ^dINANA-da E₂-za-gin₃ ARATTA-ka ĥu-mu-da-an-til₃
79. ĝa₂-e [X] ¹AN¹-ta KI-a gub-ba-ni ĥu-mu-da-an-til₃-en
80. še-er-kan₂-na DUG₄ u₃ DUG₃ KU.KU-da ĥu-mu-un-de₃-nu₂-en
81. ĝa₂-e ĝiš-nu₂ gi-rin ^dINANA-ka u₂ za-gin₃ BARAG-ga-a-ba
82. EĜAR-bi-še₃ UG.AM₃ SAĜ-bi-še₃ PIRIĜ.AM₃
83. UG-e PIRIĜ im-sar-re
84. PIRIĜ-e UG [im]-sar-re
85. UG-e PIRIĜ im-[sar]-re-da-bi
86. PIRIĜ-e UG im-[sar]-re-da-bi
87. UD nu-um-zal ĝi₆ [U₃-na] nu-ru-gu₂
88. ĝa₂-e ^dINANA-da KASKAL DANNA [X]-¹am₃¹ šu ĥu-mu-un-da-
[NIĜIN₂.NIĜIN₂]
89. ^dUTU SUĤ KUG-ĝa₂ IGI nu-mu-un-[bar]
90. ĜI₆.PAR₄ KUG.ĜA₂ ba-e-ši-in-[ku₄-ku₄]

91. ^dEn-lil₂-le AGA ZID ^ʃĜIDRU^ʃ [...]
92. ^dNIN.URTA DUMU ^dEn-lil₂-la₂-ke₄
93. ĜIŠ KUŠ.UMMUD-da-gin₇ ur₂ ^ʃmu-un-tal₂^ʃ-[tal₂]
94. ^dA-ru-ru NIN₉ ^dEn-lil₂-la₂-ke₄
95. UBUR zid-da-ni ma-an-la₂ UBUR gab₂-bu-[ni ma-an-la₂]
96. eš₃ GAL-še₃ ed₃-de₃-da-mu-ne
97. NU.GIG-e ANZUD.MUŠEN AMAR-ra-gin₇ ^ʃur₅ mu^ʃ-[ša₄]
98. min₃-kam-ma-še₃ ed₃-de₃-da-mu-ne
99. uz AMAR-ra nu-me-en-na šeg₁₁ mu-un-[gi₄]
100. IRI.KI tu-da-ni-ta NE im-ta-[...]
101. IRI.KI du₃-gin₇ IRI.KI na-me ba-ra-dim₂
102. ^dINANA UNUG.KI-ga ħe₂-en-til₃ ARATTA.KI-aš a-na me-a-bi
103. ŠIG₁₂ KUL.ABA₄.KI-ka ħe₂-en-til₃ KUR me SIKIL-še₃ a-na-am₃ ab-ak-e
104. MU 5-AM₃ MU 10-AM₃ ARATTA.KI-aš ba-ra-ĝin
105. ud ARATTA.KI -aš in-ga-an-du-a-ba
106. KUG GAL NIN E₂-an-na-ke₄
107. ad-bi mu-un-da-gi₄-a-aš INIM-bi mu-un-zu-a-aš ARATTA.KI-aš ba-ra-ĝin
108. e-ne nu-tuku-da-am₃ KUR-gi₄.MUŠEN še ba-ra-bi₂-ib₂-gu₇-e
109. ĝa₂-e KUR-gi₄.MUŠEN še ħe₂-bi₂-ib₂-gu₇-e
110. ĝa₂-e KUR-gi₄.MUŠEN NUNUZ-bi ĝir₃-lam-ma AMAR-bi ĜAR la₂-e
111. di₄-di₄-bi UTUL₂-mu-še₃ GAL.GAL šen maḥ-mu-še₃
112. KUR-gi₄.MUŠEN ki-a ba-ra-ab-tak₄-a-bi
113. ENSI₂ KI.EN.GI.RA gu₂ mu-un-ĝar-re-eš-a mu-da-gu₇-e-ne
114. KIĜ₂.GI₄.A En-me-er-kar₂ En-suḥ-gir₁₁-an-na-ke₄
115. ĜI₆.PAR₄ KUG KI KUG.KUG-ga-ni-še₃
116. KI KUG-KUG-ga ba-da-an-KU-a DAĜAL-bi ba-na-teĝ₃
117. En-suḥ-gir₁₁-an-na-ke₄ a₂ AĜ₂.ĜA₂ gu₃ ba-an-de₂ INIM im-kiĝ₂-kiĝ₂-e
118. IŠIB Lu₂-maḥ GUDU₄ ĜIRI₃.SIG₁₀.GA ĜI₆.PAR₄-ra til₃-la
119. gu₂ X mu-ni-in-ĝar šag₄ mu-da-ab-kuš₂-u₃
120. a-na ga-an-na-ab-be₂ a-na ga-an-na-ab-be₂
121. EN UNUG.KI-ga en KUL.ABA₄.KI-ra a-na ga-an-na-ab-be₂
122. [GUD]-da-ni GUD-mu-da ^ʃLIRUM^ʃ im-da-ab-zi
123. GUD UNUG.KI-ga-ke₄ A₂ bi₂-ib-ĝar

124. LU₂-ni LU₂-mu-da USU im-da-ab-ra₂
125. LU₂ UNUG.KI-ga-ke₄ A₂ bi₂-ib-ĝar
126. UR-ra-ni UR-mu-da USU im-da-ab-ra
127. UR UNUG.KI-ga-ke₄ KA.NI ba-ab-ĝar
128. UNKEN ĝar-ra si sa₂-na mu-un-na-ni-ib-gi₄-gi₄
129. za-e-me-en UNUG.KI-ga-še₃ dub-saĝ-ta
130. NIĜ₂ GAL.GAL En-me-er-kar₂-ra kiĝ₂-gi₄-a-aš mu-un-gi₄
131. En-me-er-kar₂ la-ba-du₃-e-en za-e-me-en ba-e-du₃-e-en
132. zi gi₄-ba šag₄-zu NIĜ₂ na-me na-an-tum₃ en-na ba-e-zu-zu
133. IRI-mu DUL ĥe₂-a ĝa₂-e ŠIKA-bi ĥe₂-me-en
134. EN UNUG.KI-ga EN KUL-ABA₄.KI-ra gu₂ ba-ra-na-an-ĝa₂-ĝa₂
135. MAŠ.MAŠ DIM₂-ma-ni DUMU Ĥa-ma-zu-ke₄
136. UR.ĜIR₃.NUN-na DIM₂-ma-ni DUMU Ĥa-ma-zu-ke₄
137. Ĥa-ma-zu ĤUL-a-ta ARATTA.KI-aš BAL-a
138. e₂-ĜI₆.PAR₄ NAM.MAŠ.MAŠ-e da[?]-ga[?]-na na-mu-un- KU
139. SUKKAL AN-sig₇-ga-ri-a gu₃ mu-un-na-de₂-e
140. LUGAL-mu ad-đa GAL.GAL IRI.KI-ke₄-ne
141. [LIBIR-ra uš] ¹KI ĝar-ra-ke₄-ne
142. [...] X-ka a-na-aš-am₃ nu-um-ĝa₂-ĝa₂-ne ad nu-um-gi₄-gi₄ -ne
143. [ĝa₂-e ID₂] UNUG.KI-ga-ke₄ ga-am₃-ba-al
144. [ITIMA] ARATTA.KI-ka GU₂ ga-mu-ni-ib₂-ĝar
145. [INIM] [UNUG].KI-ga-ke₄ KA×X um-mi-in-tag
146. [ERIN₂ GAL-mu SIG].TA IGI.NIM-še₃ AB-ta KUR ĜIŠ.ERIN-
še₃
147. IGI.NIM-[ta KUR] ŠIM ĜIŠ.ERIN-na-še₃ gu₂ ga-mu-ni-ib-ĝar
148. UNUG.KI-ge NIĜ₂-GUR₁₁ ni₂-ba-ke₄ ĜIŠMA₂ [he₂]-em-da-gid₂-
de₃
149. ĜIŠ.MA₂ he₂-em-da-la₂-e E₂.ZA.GIN₃ ARATTA.KI-še₃
150. SUKKAL AN-sig₇-ga-ri-a IRI[?]-na mu-ni-zig₃ KIŠI₄-na mu-ni-
šub
151. [...] lu₂ [...] AN-sig₇-ga-ri-a na-mu-ni-¹...-KA¹-[.....]
152. [...] -e[?] nu-uš-ma-ab-[.....]
153. LUGAL-mu AD.DA GAL.GAL IRI.KI-ke₄-[ne]
154. LIBIR-ra uš KI ĜAR-ra-ke₄-ne
155. KI ¹SUKKAL¹ E₂.GAL-la a-na-aš-am₃ [nu-um-ĝa₂-ĝa₂-
ne] AD nu-um-[gi₄-gi₄-ne]
156. ĝa₂-e ID₂ UNUG.KI-ga-ke₄ ga-am₃-ba-al

157. ¹ITIMA¹ ARATTA.KI-ka gu₂ ga-mu-ni-ib-ĝar
158. INIM UNUG.KI-ga-ke₄ KAXX um-mi-in-tag
159. ERIN₂ GAL-mu SIG.TA IGI.NIM-še₃ AB-ta KUR ĜIŠ. ERIN-še₃
160. IGI.NIM-še₃ KUR ŠIM ĜIŠ.ERIN-na-še₃ gu₂ ga-mu-ni-ib-ĝar
161. UNUG.KI-ga niĝ₂-ga ni₂-ba-ke₄ ĜIŠ.MA₂ he₂-em-da-gid₂-de₃
162. ĜIŠ.MA₂ he₂-em-da-la₂-e E₂.ZA-GIN₃ ARATTA.KI-še₃
163. EN-ra hul₂-la-gin₇ im-ma-na-ni-ib-ĝar
164. 5 MA.NA KUG.SIG₁₇ mu-na-ab-šum₂-mu
165. 5 MA.NA KUG.BABBAR mu-na-ab-šum₂-mu
166. u₂ nir-¹ĝal₂¹ gu₇ ba-bi mu-na-ab-be₂
167. a nir-¹ĝal₂¹ naĝ ba-bi mu-na-ab-be₂
168. ud nam-ra-aš lu₂-bi ak-am₃
169. zi-zu niĝ₂-ĝa₂ a-la šu-zu he₂-ĝal₂ mu-na-ab-be₂
.....
255. ¹MAŠ¹.MAŠ-e mu-un-na-ni-ib-gi₄-gi₄
256. nu-zu-a-mu-ne i-im-ĝin-ne-en
257. nam-gur₄-ra-zu i₃-zu nam-ba-an-sis-e-de₃-en
258. šu kir₄-na i-ni-in-ĝal₂ šud₃ mu-un-na-an-ra₂-aš
259. šu ba-mu-u₈ NIN-mu šu ba-mu-u₈
260. SILIM-ma-bi IRI.KI-mu-še₃ ga-ĝin
261. ARATTA.KI KUR me SIKIL-la-še₃ ZI.MU ga-ba-ši-de₆
262. nam-mah-zu KUR.KUR-ra ga-bi₂-ib-zu
263. ARATTA.KI KUR me SIKIL-la-ka ka tar-zu ga-si-il
264. um-ma SAĜ.BUR-ru mu-un-na-ni-ib-gi₄-gi₄
265. tur₃ AMAŠ-a NIĜ₂.GIG-ga bi₂-ak i₃ ga ba-e-ni-kal
266. ĜIŠ.BANŠUR AN.BAR₇ ĜIŠ.BANŠUR KIĜ₂.¹[NIM KIĜ₂].SIG
mu-e-su₃
267. KIĜ₂.SIG UNU₆ GAL-la i₃ ga ba-e-ku₅ niĝ₂-gig-bi X-DU
268. nam-tag-zu i₃ ga [...] nu-mu-e-tum₃
269. ^DNANNA LUGAL X AMAŠ-¹a[?] MU [...] GA ba-e-šum₂-mu
270. nir-da i₃-ĝa₂-ĝa₂ zi ¹nu-mu¹-ra-ab-šum₂-mu
271. um-ma saĝ-bur-ru maš-maš-e UNKEN[?]-ni INIM-ma-ni mu-ni-in-
sag₃
272. ŠAĜA-a-ni gu₂ ID₂.BURANUN-na-[ka] i-ni-in-šub
273. zi nam-til₃-la ba-da-an-kar IRI.KI-ni EREŠ₂.KI-še₃ ba-e-gur
274. EN-suĥ-gir₁₁-an-na-ke₄ INIM-bi ĝiš ba-an-tuku-a-ta
275. EN-me-er-kar₂-ra lu₂ mu-un-ši-in-gi₄-gi₄

276.za-e-me-en EN KI AG₂^dINANA-me-en DILI-zu-ne mah-me-en
 277.^dINANA-ke₄ ur₂ KUG-ga-ni-še₃ zid-de₃-eš mu-un-pad₃-de₃-
 en ki [aĝ₂-ĝa₂]-ni-me-en
 278.SIG-ta IGI-nim-še₃ EN GAL-bi za-e-me-en ĝa₂-e us₂-sa-zu-me-en
 279.a ri-a-ta gaba-ri-zu nu-me-en ŠEŠ.GAL za-e-me-en
 280.ĝa₂-e nu-mu-da-sa₂-e-en ud da-ri₂-še₃

Թարգմանություն

1. Հե՛յ աղյուսագործություն, որը բարձրանում է անաղարտ լեռից,
2. հե՛յ Կուլաբա⁶, Երկնքից Երկիր հասնող քաղաք,
3. հե՛յ Ունուգ (*Ուրուկ – հեղ.*)⁷, որի համբավը Ծիածանի⁸ պես է՝
4. այն հասնում է դեպի Երկինք շլացուցիչ փայլով,
5. ինչպես նորալուսինը, այն կանգնած է Երկնքի դեմ:
6. Այն կառուցվել է իշխանական ձևով՝ օժտված բոլոր մեծ գորություններով:
7. Որպես անարատ լեռ՝ այն հիմնադրվել է երանության օրը,
8. քանի որ Լուսնի լույսը բարձրանում է Երկրի⁹ վրա,
9. ինչպես պայծառ Արևը ճառագում է Երկրի վրա,
10. ինչպես կովը հորթի հետ՝ հղի կով, այն հայտնվում է ճոխությամբ:
11. Ունուգի փառքը հասնում է լեռնաշխարհին,

⁶ Կուլաբան (Կուլաբ կամ Ունուգ-Կուլաբ) հաճախ Ունուգի հետ միասին հիշատակվում է որպես երկվորյակ-քաղաք: Հավանաբար, ի սկզբանե այն եղել է Ունուգի (տաճարի քառո՞րդ) մի մասը, տե՛ս **Vanstiphout 2003: 175:**

⁷ Ունու(գ)ը (UNUG.KI կամ UNU.KI) շումերական քաղաք էր Միջագետքի հարավում (գտնվում էր Բաղդադից մոտ 30 կմ հարավ): Քաղաքն առավել-լապես հայտնի է Ուրուկ անվամբ, տե՛ս **Bryce 2009: 754f., Vanstiphout 2003: 176:**

⁸ Ըստ երևույթին, ակնարկ շումերական սիրո, պտղաբերության և պատե-րազմի աստվածուհի, Երկնքի տիրուհի Իննանային (աքք.՝ Իշթար): Ծիա-ծանը համարվում էր նրա խորհրդանիշներից մեկը, տե՛ս **Black, Green 2004: 108f., Vanstiphout 2003: 46, ծնթ. 11:**

⁹ Նկատի ունի Շումերը, տե՛ս **Vanstiphout 2003: 46, ծնթ. 13:**

12. և նրա ապշեցուցիչ փայլը, որն իսկապես նման է գտված արծաթի,
13. նույնիսկ կտորի պես ծածկում է Արատտան, սավանի պես պառկում է վրան:
14. Այդ ժամանակներում Յերեկը տերն էր, Գիշերը՝ իշխանը, իսկ Արևը՝ թագավոր:
15. Արատտայի տիրակալի կառավարչի անունը կառավարիչ Անսիգարիա էր:
16. Կուլաբի տիրակալ Էնմերքարի կառավարչի անունը կառավարիչ Նամենաթումա էր:
17. Այժմ այդ մեկը տիրակալ էր, այն մեկը՝ արքայազն:
18. Նա տիրակալ էր այդ գիշեր, նա արքայազն էր այդ գիշեր,
19. բայց այդ (մյուսը) տիրակալ էր շատ գիշերներ, նա արքայազն էր շատ գիշերներ:
20. Նա աստված լինելու համար ծնված մարդ էր:
21. Եվ նա իսկապես աստծո տեսք ուներ:
22. Ունուգի և Կուլաբայի այս տիրակալի հետ էր, որ Էնսուփգիրաննա անցկացրեց այս կոփվը:
23. Էնսուփգիրաննան՝ Արատտայի տերը,
24. առաջինն էր, որը խոսեց սուրհանդակի հետ Ունուգի մասին.
25. «նա պետք է ենթարկվի ինձ, նա պետք է կրի իմ լուծը:
26. Եթե նա լավ և ճշմարիտ ենթարկվում է ինձ, ապա նրա և ինձ համար սա նշանակում է,
27. (որ) նա կարող է ապրել Իննանայի հետ Էգարայում¹⁰,
28. բայց ես կապրեմ Իննանայի հետ Արատտայի Էգագինայում¹¹:
29. Նա կարող է պառկել նրա հետ ծաղկավոր մահճակալի վրա,

¹⁰ Էնմերքարի պալատը, տե՛ս Vanstiphout 2003: 174:

¹¹ Էնսուփգիրաննայի պալատը, տե՛ս Vanstiphout 2003: 174:

30. բայց ես կպառնեմ նրա հետ քաղցր նիրհի մեջ՝ զարդարված բազմոցի վրա:
31. Նա կարող է գիշերը երազում հանդիպել Իննանայի հետ,
32. բայց ես Իննանայի հետ կխոսեմ նրա փայլուն ոտքերի արանքում:
33. Նա կարող է կերակրել սագերին գարիով,
34. ես գարիով ոչ մի սագ չեմ կերակրելու:
35. Ո՛չ, ես կհավաքեմ նրանց ձվերն ու ձագերը զամբյուղի մեջ,
36. փոքրերն իմ կաթսայի, մեծերը՝ իմ թեյնիկի համար:
37. Ինչ էլ որ մնա սագերից,
38. Լեռնաշխարհի կառավարիչները, որոնք հնազանդվել են ինձ, կսպառեն այդ ինձ հետ»:

-
52. Նա տիրակալ Էնմերկարի ներկայությամբ մտավ իր սուրբ Գիպարը¹²:
- 52a. Նա Էնմերքարի ներկայությամբ մտավ իր ամենասուրբ վայրը և խոսեց.
53. «Իմ թագավորն ուղարկել է ինձ քեզ մոտ:
54. Ինձ քեզ մոտ է ուղարկել Արատտայի տերը՝ Էնսուփգիրաննան»:
- 54a. «Ի՞նչ է քո թագավորի խոսքն ինձ. ո՞րն է ինձ նրա ուղերձը:
- 54b. Ի՞նչ է Էնսուփգիրաննայի խոսքն ինձ. ո՞րն է ինձ նրա ուղերձը»¹³:
- 54c. «Սա է իմ թագավորի խոսքը. սա է նրա ուղերձը»¹⁴:

¹² Գիպարը (GI/E6.PAR4, աքք.՝ *giparu*) եղել է շումերական քրմերի և քրմուհիների նստավայրը և տնտեսությունների վարչական կենտրոնը: Բառը շումերերեն ունեցել է նաև «սրբավայր» նշանակությունը, տե՛ս **Black, Green 2004**: 91f., **Vanstiphout 2003**: 174:

¹³ Արատտայի սուրհանդակին հարցնում է Էնմերքարը (հեղ.):

¹⁴ Արատտայի տիրակալ Էնսուփգիրաննայի սուրհանդակը Էնմերքարին ներկայացնում է իր տիրոջ պահանջները (հեղ.):

- 54d. «Սա Էնսուխգիրաննայի խոսքն է. սա է նրա ուղերձը:
55. Այսպես սասց իմ թագավորը.
56. «Նա պետք է ենթարկվի ինձ, նա պետք է կրի իմ լուծը...
- 57-69. *Sunawghorēn kṛkēvluṃ tēn 26-38-րդ փողերը:*
70. Ունուգի տերը ... նա նրանց քանակն է, նա նրանց ղեկն է:
71. ...Նա այն պարանոցն է, որը զսպում է նրանց:
72. ... Դեպի այն տեղը, որտեղ այն հանգչում է:
73. Նա նրանց բազեն է, որը սավառնում է երկնքում. նա նաև նրանց թռչունների ցանցն է:
74. Արատտայի մեծ տաճարի աղյուսը ...
75. ... Արատտայում ... հիանալի
76. ... բերել (") ...
77. Նա կավից կավե տախտակ շինեց: Նա զննեց այն որպես կավե տախտակ:
78. Նա կարող է ապրել Իննանայի հետ Արատտայի Էզագինայում,
79. բայց ես ապրում եմ նրա հետ, երբ նա իջնում է Երկնքից Երկիր:
80. Նա կարող է պառկել նրա հետ քաղցր նիրհում՝ զարդարված բազմոցի վրա,
81. բայց ես պառկած եմ Իննանայի ծաղկուն անկողնում՝ սփռված փայլուն բույսերով:
82. Նրա հետևում կա մի սց-առյուծ¹⁵, նրա առջևում կա փրից-առյուծ¹⁶,
83. սց-առյուծը հետապնդում է փրից-առյուծին,
84. փրից-առյուծը հետապնդում է սց-առյուծին,
85. սց-առյուծը հավերժ հետապնդում է փրից-առյուծին,
86. իսկ փրից-առյուծը հավիտյան հետապնդում է սց-առյուծին:
87. Եվ այսպես, ցերեկը չի լուսանում, գիշերը չի անցնում:

¹⁵ Առյուծի ինչ-որ տեսակ, տե՛ս **Vanstiphout 2003**: 176:

¹⁶ Առյուծի ինչ-որ տեսակ, տե՛ս **Vanstiphout 2003**: 175:

88. «Ես Իննանայի հետ շրջում եմ ամբողջ ճանապարհորդության ընթացքում [...] մղոններով:
89. Ութուն¹⁷ աչք չի դնում իմ սուրբ պսակին:
90. Մի անգամ նա մտավ իմ սուրբ Գիպարը:
91. Որովհետև Էնլիլ¹⁸ ինձ տվեց ճշմարիտ թագն ու գավազանը:
92. Նինուրտան¹⁹ Էնլիլի որդին,
93. բռնեց ինձ իր գրկում, ինչպես որ շրջանակը պահում է ջրի շերտը:
94. Արուրուն²⁰ Էնլիլի քույրը,
95. պառկեցրեց ինձ նրա աջ կրծքին, պառկեցրեց ինձ նրա ձախ կրծքին:
96. Երբ ես բարձրանում եմ մեծ տաճար,
97. ու-gig (տիրուհին) աղաղակում է Անզուդի²¹ թռչնի պես:
98. Եվ երբ ես նորից գնամ այնտեղ,
99. նա ծաղրում է երիտասարդ թռչնի պես, թեև այդպես չէ:
100. Նա չի հեռանա իր ծննդավայր քաղաքից:
101. Երբեք քաղաք չի կառուցվել այնքան լավ, որքան Ունուգը:
102. Իննանան ապրում է Ունուգում: Ինչ վերաբերում է Արատտային, ապա ի՞նչ
103. Նա բնակվում է աղյուսով կառուցված Կուլաբայում, փայլուն զորությունների լեռը, ինչ կարող է դա անել:

¹⁷ Ութուն շումերների արևի աստվածն է, տե՛ս **Black, Green 2004**: 182f.:

¹⁸ Շումերական դիցարանի գլխավորը՝ հայր-աստվածը, որը Երկնքի աստծո որդին էր և Լուսնի աստծո հայրը, տե՛ս **Black, Green 2004**: 76:

¹⁹ Շումերական դիցարանի պատերազմի և անասնապահության աստվածը, տե՛ս **Black, Green 2004**: 182f.:

²⁰ Շումերական դիցարանի ծննդաբերության աստվածուհին, տե՛ս **Vanstiphout 2003**: 173:

²¹ Շումերա-աքքադական դիցաբանության մեջ աստվածային ծագում ունեցող հսկայական թռչուն՝ առյուծի գլխով և արծվի մարմնով: Շումերի և Արատտայի միջև ընկած լեռնաշղթաների պահապանը, տե՛ս **Black, Green 2004**: 107f., **Vanstiphout 2003**: 173, 174:

104. Հինգ, տասը տարի նա չի գնա Արատտա:
 105. Որովհետև նա գնացել է Արատտա:
 106. Էանայի²² մեծ սուրբ տիրուհին
 107. խորհրդակցել է ինձ հետ, ես գիտեմ նրա որոշումը, նա չի՛ գնա Արատտա:
 108. Ով ոչինչ չունի, չի կարող սագերին կերակրել գարիով,
 109. բայց ես, անկասկած, կարող եմ սագերին կերակրել գարիով:
 110. Նաև ես կհավաքեմ սագերի ձվերն ու ձագերը զամբյուղի մեջ,
 111. Փոքրերը իմ կաթսայի համար, մեծերը իմ թեյնիկի համար...
 112. Փոքրերը իմ կաթսայի համար, մեծերը իմ թեյնիկի համար,
 113. Շումերի կառավարիչները, որոնք հպատակվել են ինձ, կսպառեն դրանք ինձ հետ»:
 114. Էնմերքարի սուրհանդակը հասավ Էնսուֆգիրաննային,
 115. իր սուրբ Գիպարում՝ իր ամենասուրբ վայրում:
 116. Ամենասուրբ տեղը, որտեղ նա նստում էր, և նրա հարթակը:
 117. Էնսուֆգիրաննան խորհուրդ խնդրեց, փնտրեց պատասխան²³:
 118. Գիպարում ապրող išib, lumah, gudu և girsiga²⁴,
 119. նա կանչեց ու խորհրդակցեց նրանց հետ:
 120. «Ի՞նչ ասեմ նրան, ի՞նչ ասեմ նրան:
 121. Ի՞նչ ասեմ Ունուգի տիրոջը՝ Կուլաբայի տիրոջը:

²² Իննանայի հիմնական տաճարը Ուրուկում՝ **Black, Green 2004**: 73, **Vanstiphout 2003**: 174:

²³ Այստեղ միանշանակ խոսքը վերաբերում է Արատտայում ավագների ժողովի ինստիտուտին, մանրամասն տե՛ս՝ **Մովսիսյան 1992**:

²⁴ išib, lumah, gudu-ը քրմերի տեսակ էին, իսկ girsiga-ն՝ շումերական տաճարների կամ պալատի սպասավորներ, տե՛ս **Vanstiphout 2003**: 47, ծնթ. 30:

122. Նրա ցուլը ոտքի կանգնեց՝ կռվելու իմ ցլի դեմ,
123. և Ունուգի ցուլը հաղթեց:
124. Նրա մարդը գոտեմարտեց իմ մարդու հետ,
125. և Ունուգի մարդն ավելի ուժեղ էր:
126. Նրա շունը գոտեմարտեց իմ շան հետ,
127. և Ունուգի շունը գերազանցեց նրան»:
128. Գումարված ժողովը նրան ուղիղ պատասխանեց.
129. «Դուք առաջինն էիք, որ ուղարկեցիք Ունուգ,
130. մեծ խոսքերը որպես ուղերձ Էնմերքարի համար:
131. «Դուք չեք կարող գերազանցել Էնմերքարին, դու ինքդ
կպարտվես:
132. Հանձնվի՛ր, քո փառասիրությունը քեզ ոչինչ չի բերի,
ե՛րբ կհասկանաս դա»:
133. «Իմ քաղաքը կարող է դառնալ ավերակների կույտ, իսկ
ես՝ բեկոր նրա մեջ,
134. բայց ես երբեք չեմ ենթարկվի Ունուգի և Կուլաբայի
տիրոջը»:
135. Այդժամ կար մի կախարդ, որի կախարդությունը
պատկանում էր Խամագուին²⁵,
136. Ուրգիրնունա անունով, որի կախարդությունը Խամա-
գուից էր:
137. Խամագուն կործանվեց. նա անցել էր Արատտա:
138. Այնտեղ, որտեղ նա այժմ զբաղվում էր իր կախարդու-
թյամբ՝ Գիպարի ներսի սենյակներում:
139. Նա խոսեց կառավարիչ Անսիգարիայի հետ.
140. «Տե՛ր իմ, ինչո՞ւ են քաղաքի ավագները,
141. հին ժամանակների հիմնադիր հայրերը
142. այլևս չեն հարգում կառավարչի կոչումը, այլևս առողջ
խորհուրդ չեն տալիս:

²⁵ Խամագին շումերական գրականության մեջ հանդես է գալիս որպես «ստի քաղաք»: Այն գտնվել է Բաբելոնից հյուսիս-արևելք, Քիրքուկից արևելք, տե՛ս Vanstiphout 2003: 47, ծնթ. 32:

143. Ինչ վերաբերում է ինձ, ապա ես Ունուգում ջրանցքներ կփորեմ,
144. ես կստիպեի այն հանձնել Արատտայի սրբավայրին:
145. Ունուգի մասին որոշումը կայացնելուց հետո
146. ես կստիպեի նրանց բոլորին ենթարկվել իմ մեծ բանակների՝ հարավից հյուսիս, օվկիանոսից մինչև Մայրու լեռը²⁶,
147. Հյուսիսից մինչև Մայրու անուշահոտ լեռը:
148. Ունուգը պետք է նավով տեղափոխի իր ապրանքները:
149. Նավակները կկապվեն Արատտայի էզագինայում»:
150. Կառավարիչ Անսիգարիայի վեր կացավ իր քաղաքում, և նա...
151. ... Անսիգարիա ...
152. ... նա չպետք է ...
- 153-162. *Տառացիորեն կրկնվում են 140-149-րդ գրողերը:*
163. Դա այնքան հաճելի էր տիրոջը,
164. որ հինգ մինա ոսկի տվեց նրան
165. և հինգ մինա արծաթ:
166. Նա ասաց նրան, որ իր չափաբաժինը կլինի ամենալավ ուտելիքը
167. և լավագույն ըմպելիքները:
168. Երբ այդ մարդկանց կդարձնեն պատերազմական ավար,
169. ձեր կյանքը կլինի ունեցվածքով (լի)՝ նա խոստացավ նրան:
-
- 170-254. *ներկայացվում են սև մոգության, կախարդի և իմաստուն կին Սագբուրուի մասին պատումը:*
255. Կախարդը պատասխանեց²⁷.

²⁶ Աքքադական դյուցազնավեպում մայրիների լեռներ են կոչվում Լիբանանի լեռները: Շումերական վիպերգերում Մայրիների լեռները որևէ անուն չեն կրում. կարծիքներ են հայտնվել այդ լեռների՝ ինչպես Լիբանանի շրջանում, այնպես էլ Շումերից հյուսիս և արևելք գտնված լիներու մասին, տե՛ս **Մովսիսյան 2005**, 118 ծնթ. 1:

256. «Ես գնացի այնտեղ՝ չիմանալով, թե ինչ եմ արել:
257. Այժմ ես ընդունում եմ ձեր իշխանությունը, խնդրում եմ մի՛ բարկացեք»:
258. Նա խոնարհվեց, նա աղաչեց նրան.
259. «Թո՛ւյլ տվեք ինձ, քույրիկ, թույլ տվեք գնամ:
260. Թո՛ւյլ տվեք ապահով վերադառնալ իմ քաղաք:
261. «Թո՛ւյլ տվեք անվնաս վերադառնալ Արատտա՛ն անխորտակելի լեռնային երկիրը:
262. Ես քո մեծությունը կհռչակեմ բոլոր երկրներում:
263. Ես քո փառքը երգելու եմ Արատտայում՝ անձեռնմխելի լեռնային երկրում»:
264. Իմաստուն կին Սագբուրուն պատասխանեց նրան.
265. «Ախողում թշվառություն բերեցիր, դու սակավ դարձրիր սերուցքն ու կաթը:
266. Դու վերացրեցիր ճաշը, նախաճաշը և ընթրիքը:
270. Ուստի ձեր մեղքը մեծ հանցանք է, ես չեմ կարող ձեզ կյանք տալ»:
271. Իմաստուն կին Սագբուրուն հաստատեց իր օրինական դատավճիռը կախարդի վերաբերյալ:
272. Նա իր զոհին զցեց Եփրատի ափին,
273. խլեց նրա կենսական ուժը և վերադարձավ իր քաղաքը՝ Էրեշ²⁸:
274. Երբ Էնսուֆգիրաննան սա լսեց,
275. նա ուղարկեց Էնմերքարին.
276. «Դու իսկապես Իննանայի սիրելին ես, միայն դու ես մեծագույնը:
277. Իննանան իսկապես ընտրել է քեզ իր սուրբ թիկունքի համար: Դու նրա սիրելին ես:

²⁷ Պատումի այս հատվածում ներկայացվում է իմաստուն կին Սագբուրունի կախարդի խնդրանքի նկարագիրը (հեղ.):

²⁸ Հավանաբար գնտվել է Նիպպուրից հյուսիս՝ ներկայիս Թէլլ Աբու-Սալա-բիխ բնակավայրի տարածքում, տե՛ս Bryce 2009: 233:

278. Արևմուտքից արևելք դու ես մեծ տեր, և ես խոնարհաբար հետևում եմ քեզ:

279. Քո բեղմնավորման պահից ես երբեք քեզ հավասար չեմ եղել: Դո՛ւ ես ավագը.

280. Ես երբեք չեմ կարող համեմատվել քեզ հետ»:

ԷՆՄԵՐՔԱՐԸ ԵՎ ԱՐԱՏՏԱՅԻ ՏԻՐԱԿԱԼԸ

«Էնմերքարը և Արատտայի տիրակալը» հերոսապատման բնագրում (շուրջ 640 տող) հաղորդվում է, որ Ուրուկի առաջին հարստության երկրորդ արքա Էնմերքարի և Արատտայի տիրակալի միջև ընթանում էր երկարատև պայքար: Շումերի արքան պահանջում էր մետաղներ, թանկարժեք քարեր ու վարպետներ՝ տաճարներ կառուցելու նպատակով: Ի պատասխան դրան՝ Արատտայի արքան պահանջում էր մեծ քանակությամբ երկրագործական ապրանքներ, որոնցով հարուստ չէր լեռնային Արատտան: Շումերի արքան անցնում է սպառնալիքների, որին Արատտայի տիրակալը պատասխանում է նույն ոգով՝ անընդհատ ընդգծելով իր երկրի՝ սրբազան ու ժողովրդի՝ աստվածընտրյալ լինելու հանգամանքը: Բանագնացները ստիպված էին չորս անգամ Շումերից մեկնել Արատտա և վերադառնալ: Ի վերջո Շումերի արքան ստիպված էր տեղի տալ, և երկարատև բանակցություններն ավարտվեցին հաշտությամբ ու տոնախմբությունների կազմակերպմամբ:

Պայմանավորվածության համաձայն՝ շումերները պետք է Արատտա ուղարկեին երկրագործական ապրանքներ՝ փոխարենը ստանալով մետաղներ: Բացի այդ՝ Արատտայի վարպետները համաձայնեցին Շումերում կառուցել ճարտարապետական կոթողներ:

Mittermayer 2009: 115-153, **Vanstiphout 2003:** 56-93, **Cohen 1973:** 55-61, **Kramer 1952:** 5-48.

Գիտական տառադարձումը

25. [... G]UNU₃

26. [^{GE6}ĜEPA]R... [¹KI ku₃]-g[a] [¹SUKUD[?]]-a-am₃-a[?]

27. [¹ša₃-bi¹ ĜEŠ.MEŠ₃ BABBAR.GEN₇ GURUN si₁₂-ga-am₃

28. ^dINANA-ra EN ARATTA.KI-ke₄

- 29.SAĜ.MEN ku₃-si₂₂(-ga) mu-na-ni-in-ĝal₂
30.EN KUL.ABA₄.KI-a-gen₇ nu-mu-na-sa₆
31.ARATTA.KI eš₃ E₂.AN.NA ^{ĜE6}ĜEPAR KI ku₃¹-gen₇
32.ku₃^dINANA-ra šeg₁₂ KULABA₄.KI-gen₇ nu-mu-un-na-du₃
-
.....
.....
- 38.NIN₉-ĝu₁₀ ARATTA.KI UNU.KI-še₃
39.ku₃-si₂₂ ku₃-BABBAR ĥa-ma-an-GALAM-e
40.^{na4}za-gin₃ DURU₅ LAGAB-ta [...] X
41.sud-ra₂-aĝ₂^{na4}za-gin₃ [DURU₅ [...] X
42.UNU.KI-ga KUR ku₃ [...] X X
43.E₂ an-ta [ed₃-de₃ KI] gub¹-ba-za
44.[ARATTA.KI eš₃] E₂.AN.NA ĥe₂-en-du₃
45.[^{ĜE6}ĜEPA]R ku₃ AN¹ ĝar-ra-za
46.[š]a₃-bi ARATTA.K[I] ĥa-ma-an-[GALAM]¹-e
47.ĝe₂₆-e ša₃-ba [AMAR za-gin₃-gen₇ mu?-x-la₂¹-la₂
48.ARATTA.KI U[NU.KI-š]e₃ [gu₂ ĝeš ĥa-ma-[ĝa₂-ĝa₂¹
49.nam-lu₂-lu₇^{LU} ARATTA.KI-[ke₄]
50.na₄ ĥur-saĝ-ĝa₂ K[UR-bi u]m-ma-ab-[e₁₁]¹
51.eš₃-GAL ĥa-ma-du₃-e UN[U₂] [GAL ĥa-ma-ĝa₂-ĝa₂¹
52.[UNU₂ GAL UNU₂] D[IĜIR-re]-[ne-ke₄ pa-e₃ ĥa-ma-ab-AK-e]¹
53.me-ĝu₁₀ KUL.ABA₄.KI-a¹ si ĥa-ma-ni-ib¹-sa₂-e
54.ABZU KUR ku₃-gen₇ ĥa-ma-ab-mu₂-mu₂
55.ERIDU.KI ĥur-saĝ-gin₇ ĥa-ma-ab-SIKIL-[e]¹
56.eš₃ ABZU KUG ki-in-[dar-ra]¹-gen₇ pa-e₃ ĥa-ma-ab-AK-e
57.ĝe₂₆-e ABZU-ta za₃-mim du₁₁-ga-ĝu₁₀-ne
58.[ER]IDU.KI-ta me de₆-a-ĝu₁₀-ne
59.nam-en-na men AB bar-gen₇ si₁₂-ga-mu₁₀-ne
60.UNU.KI KUL.ABA₄.KI-a saĝ-men ku₃ ĝal₂-la-ĝu₁₀-ne
61.[ĝ]e₂₆-e eš₃ GAL-la-ke₄ ^{ĜE6}ĜEPAR-[še₃ ĥu¹-mu-un-tum₂-mu
62.[ĝ]e₂₆-e ^{ĜE6}ĜEPAR-ra-ke₄ eš₃ GAL-la ĥu-mu-un-tum₂-mu
63.[NAM]-lu₂-lu₇ u₆ du₁₀-ge-eš ĥu-mu-un-e
64.[^d] [UTU]¹ IGI ĥul₂-la ĥe₂-em-ši-bar-bar-re
65.[u₄-bi]-a GIRI₁₇.ZAL AN ku₃-ga NIN KUR-ra IGI ĝal₂
66.in-NIN₉^dAMA.UŠUMGAL-an-na ŠEMBI zi-da-ni

- 67.^dINNANA NIN KUR.KUR-ra-ke₄
68.EN-me-er-kar₂ DUMU ^dUTU-ra[[]gu₃[]] mu-na-de₂-e
69.EN-me-er-kar₂ ĝa₂-nu na ga-e-de₅ na-de₅-ĝu₁₀ ħe₂-e-dab₅
70.ENIM ga-ra-ab-du₁₁ [[]ĜISSAL.SAL4[]] ħe₂-ši-AK
71.kiĝ₂-ge₄-a ENIM zu za₃-še TUKU ERIN₂-ta u₃-ba-[[]re[]]-pa₃
72.ENIM GAL ^dINNANA GAL ZU ENIM-[[]ma-ke₄ me-a ħu-mu-na-ab[]]-tum₃
73.ĤUR.SAĜ ZUBI-še₃ ħe₂-bi₂-in-e₁₁-de₃
74.ĤUR.SAĜ ZUBI-ta ħe₂-em-ma-da-ra-e₁₁-de₃
75.[[]ŠUŠIN[]].KI-e KUR An-ša₄-an.KI-a-še₃
76.peš₂-tur-gen₇ GIRI₁₇ šu ħu-mu-na-ab-ĝa₂
77.ĤUR.SAĜ GAL.GAL ni₂-ba lu-a
78.SAĤAR-ra ħu-mu-na-d[a-ni₁₁-ni₁₁]
79.ARATTA.KI UNU.KI-še₃ gu₂ ĝeš ma-ĝa₂-ĝa₂
80.nam-lu₂-lu₇ ARATTA.KI-ke₄
81.na₄ ĤUR.SAĜ-ĝa₂ KUR-bi um-ta-[a]b-e₁₁
82.eš₃-GAL ħa-ra-du₃-e UNU₂ GAL ħa-ra-[[]ĝa₂-ĝa₂[]]
83.UNU₂ GAL UNU₂ DIĜIR-re-e-ne-ke₄ pa-e₃ ħa-ra-ab-AK-e
84.me-zu KUL.ABA₄.KI-a si ħa-ra-ni-ib₂-sa₂-e
85.ABZU KUR kug-gen₇ ħa-ra-ab-mu₂-mu₂
86.ERIDU.KI ĤUR.SAĜ-gen₇ ħa-ra-ab-SIKIL-e
87.eš₃ ABZU ku₃ ki-dar-ra-gen₇ pa-e₃ ħa-ra-ab-[[]AK-e[]]
88.za-e ABZU-ta za₃-mim du₁₁-ga-zu-ne
89.ERIDU.KI-ta ME de₆-a-[z]u-n[e]
90.nam-en men-na AB ba[r-gen₇ si₁₂-ga]-zu-ne
91.UNUKI-e KUL.ABA₄.KI-a saĝ-m[en k]u₃ ĜAL₂-la]-zu-ne
92.[z]a-a eš₃-GAL-la-ke₄ ^{ĜE6}ĜEPA[R]-še₃ ħu-mu-e-tum₂-mu
93.[za-a] ^{ĜE6}ĜEPAR-ra-ke₄ eš₃ GAL-la ħu-mu-e-tum₂-mu
94.[nam-lu₂-L]U₇ u₆ du₁₀-ge-eš ħe₂-mu-e-e
95.^DUTU IGI ħul₂-la ħe₂-mu-e-ši-bar-bar-re
96.[nam]-lu₂-LU₇ ARATTA.KI-ke₄
97.[X] NE ud šu₂-uš-ta um-[ta]-ab-il₂-ke₄-eš
98.[X] NE ud te-en-e um-ma-[taĝ]-e-ta
99.KI ^dDUMU-zi-da u₈ maš₂ SILA₄[?]-ni lu-a
100.A KALAG-ga a-ša₃ ^dDUMU-zi-da-ka
101.UDU KUR-ra-gen₇ du₁₀ ħa-ra-ni-ib-ĝar
102.GABA kug-ĝa₂-a u₄-gen₇ e₃-ni

103. ʃi-pa¹-aĝ₂-ĝa₂ niĝ₂-MUŠ₃-bi ħe₂-me-en
104. za-ra En-me-er-kara₂ DUMU^dUTU za₃-mim
.....
108. ĤUR.SAĜ ZUBI-ka ħe₂-bi₂-in-e₁₁-de₃-en
109. ĤUR.SAĜ ZUBI-ta ħe₂-em-ma-da-ra-an-e₁₁-de₃-en
110. ŠUŠIN.KI-e [KUR] [An]-ša₄-an.KI-a-ke₄
111. peš₂-tur-gen₇ GIRI₁₇ šu ħu-mu-na-ab-ĝal₂
112. ĤUR.SAĜ GAL.GAL ni₂-ba lu-a
113. SAĤAR-ra ħu-mu-na-da-ni₁₀-ni₁₀
114. kiĝ₂-gi₄-a EN ARATTA.KI-ra u₃-na-du₁₁ u₃-na-de₃-taĥ
115. IRI-ni IRSAĜ.SAĜ.MUŠEN-gen₇ ĝeš-bi-ta na-an-na-ra-ab-dal-en
116. MUŠEN-gen₇ gud₃ us₂-sa-bi-a nam-bi₂-ib-dal-en
117. KILAM ĝal₂-la-gen₇ na-an-si-ig-en
118. IRI GUL.GUL-lu-gen₇ SAĤAR nam-bi₂-ib-ħa-za-en
119. ʃARATTA¹.KI¹a₂¹-dam^dEN-ki-ke₄ NAM ba-an-ku₅
120. KI bi₂-in-gul-la-gen₇ KI nam-ga-bi₂-ib-gul-en
121. ʃĒĜER¹-bi^dINNANA ba-ši-in-zi
122. gu₃ im-[mi-in-ra še₂₅ im]-mi-in-ge₄
123. kuš₇ b[i₂-in-su-a-gen₇ ku]š₇ nam-ga-bi₂-ib-su-su
124. ku₃-si₂₂ [u₃-du₂-da]-ba KUŠ.LU.UB₂ ú LU.UB₂.ŠIR a-ba-ni-in-
AK
125. ku₃ me-a ʃSAĤAR-ba¹ za₃ u₃-ba-ni-in-us₂
126. ku₃ saĝ-PA-[še₃] u₃-mu-un-dim₂-dim₂
127. ANŠE KUR.KUR-ra-ke₄ PARA₁₀ um-mi-in-la₂-la₂
128. ĝa₂-e-še₃-am₃ ^dEN-lil₂ BANDA₃ KI-en-gi-ra-ke₄
129. EN ^dNU.DIM₂.MUD ša₃ ku₃-ge pa₃-da
130. KUR ME SIKIL-la-ke₄ ħa-ma-du₃-e
131. ĜEŠ.DAŠGARI-gen₇ ħi-li ħa-ma-ab-AK-e
.....
156. MIN-kam-ma-še₃ en-e kiĝ₂-ge₄-a KUR-še₃ du-ur₂
157. ARATTA.KI-aš INIM mu-na-ab-taĥ-e
.....
160. kiĝ₂-ge₄-a INIM LUGAL-la-na-ke₄ saĝ-keše₂ ba-ši-in-AK
161. ĝe₆ u₃-na-ka mul-am₃ im-DU
162. an-bar₇-GANA₂-ka ^dUTU an-na-ta mu-un-de₃-DU
163. INIM GAL ^dINNANA ge zu₂-lum-ma DU me-a mu-na-ab-tum₃
164. ĤUR.SAĜ ZUBI-še₃ bi₂-in-e₁₁-de₃

- 165.ĤUR.SAĜ ZUBI-ta im-ma-da-ra-ab-e₁₁-de₃
166.ŠUŠIN.KI-e KUR AN-ša₄-an.KI-a-še₃
167.peš₂-tur-[┘]gen₇[┘]GIRI₁₇ šu mu-na-ab-ĝal₂
168.ĤUR.SAĜ[┘]GAL[┘].GAL ni₂-ba lu-a
169.SAĤAR-ra mu-na-da-ni₁₀-ni₁₀
170.ĤUR.SAĜ IA₂ [ĤUR.SAĜ] AŠ₃ ĤUR.SAĜ UMUN₇-e im-me-ri-
BALA.BALA
171.[IGI mu-un-i]₂ ARATTA.KI-aš ba-te
172.[┘]KISAL ARATTA[┘].KI-ka ĜIRI₃ ĥul₂-la mi-ni-in-gub
173.nam-nir-ĝal₂ LUGAL-a-na mu-un-zu
174.bur₂-ra-bi ENIM ša₃-ga-na bi₂-[┘]ib₂[┘]-be₂
175.kiĝ₂-ge₄-a EN-[┘]ARATTA[┘].KI-ra mu-na-ab-BALA-e
.....
179.LUGAL-ĝu₁₀ a-na bi₂-in-du₁₁ a-n[a bi₂-in-ta]ĥ-am₃
180.LUGAL-ĝu₁₀ u₃-du₂-da-ni-ta nam-en-na tum₂-ma
181.EN UNU.KI-ga MUŠ SAĜ.KAL KI-en-gi-ra til₃-la KUR
ZI₃.GEN₇ ma₅-ma₅
182.TARAĤ.MAŠ KUR-bad₃-da A₂ NUN ĝal₂
183.ŠILAM-za MAŠ NAĜA ku₃-ga UMBIN[┘]sud₂-sud₂[┘]-e
184.AB₂ zi-de₃ KUR-ša₃-ga du₂-da
185.EN-me-er-kar₂ DUMU^dUTU-ke₄ mu-e-ši-in-ge₄-nam
186.LUGAL-ĝu₁₀ na-ab-b[e₂]-a
187.IRI-ni IRSAĜ.SAĜ.MUŠEN-gen₇ ĝeš-bi-[┘]ta[┘] na-ra-[┘]ab-dal[┘]-[en]
188.MUŠEN-gen₇ gud₃ us₂-sa-bi-a na-an-bi₂-[┘]ab-dal[┘]-e[n]
189.KI.LAM ĝal₂-la-gen₇ na-an-si-[┘]ge-en[┘]
190.IRI GUL.GUL-la-gen₇ [┘]SAĤAR[┘] na-an-[┘]bi₂[┘]-[[┘]ib-ĥa-za]-en
191.ARATTA.KI a₂-dam[┘]EN-ki-[┘]ke₄ nam ba-an[┘]-ku₅
192.KI bi₂-in-gul-la-gen₇ KI nam-ga-bi₂-ib-gul-en
193.EĜER-bi^dINNANA ba-ši-in-zi
194.gu₃ im-mi-in-ra še₂₅ im-mi-in-gi₄
195.kuš₇ bi₂-in-su-a-gin₇ kuš₇ na-an-ga-bi₂-ib-su-su-un
196.ku₃-si₂₂ u₃-du₂-da-ba KUŠ.LU.UB₂ .LU.UB₂.ŠIR a-ba-ni-in-AK
197.ku₃ me-a SAĤAR-ba za₃ u₃-ba-ni-in-us₂
198.ku₃ saĝ-PA-še₃ u₃-mu-un-dim₂-dim₂
199.ANŠE KUR.KUR-ra-ke₄ PARA₁₀ um-mi-in-la₂-la₂
200.ĝa₂-e-še₃-am₃ ^dEN-lil₂-BANDA₃ KI-en-gi-ra-ke₄
201.EN ^dNU.DIM₂.MUD-e ša₃ ku₃-ge[┘]pa₃[┘]-da

- 202.KUR ME SIKIL-la-ke₄ ḥa-ma-du₃-[e¹]
 203.ĜEŠ.DAŠGARI-gen₇ ḥi-li ḥa-ma-ab-[AK¹]-e
 204.^dUTU E₂.NUN-ta e₃-a-gen₇ si-[muš₃¹] ḥa-ma-ab-GUNU₃.GUNU₃
 205.za₃-[du₈¹]-za₃-du₈-ba URIN ḥa-ma-mul-e
 206.[E₂.NUN.E₂¹].NUN-ba šer₃ ku₃ nam-šub du₁₂-a-ba
 207.[nam-šub^d NU.DIM₂.MUD-[kam¹] ḡa₂-ra du₁₁-m[u-na-a]b
 208.a-na ma-ab-be₂-en-na-bi u₃-m[u-e-du₁₁]
 209.[a¹ ru-a sum₄^{na4} za-gin₃ [e₁₁[?]]-da-[ar]
 210.ab₂ kal-la-ga-ni KUR me SIKIL-la-k[a du₂-da-ar]
 211.[SAḤAR ARATTA].KI-ka²⁹ a₂ e₃-[a-ar]
 212.AKAN ab₃ zi-da ga gu₇-[a-ar]
 213.KUL.ABA₄.KI KUR ME GAL.GAL-la-ka [nam¹]-nun-[na¹] tum₂-ma-[ar]
 214.EN-me-er-kara₂ DUMU ^dUTU-ra

 218.ur₅-gen₇ ḥu-mu-na-ab-be₂-a-ka
 219.kiḡ₂-ge₄-a LUGAL-zu EN KUL.ABA₄.KI-a-ra u₃-na-du₁₁ u₃-na-de₃-taḥ
 220.ḡe₂₆-e-me-en EN šu SIKIL-la tum₂-ma
 221.ĜEŠ.RAB (MAḤ) an-na NIN AN KI-ke₄
 222.in-nin₉ me šar₂-ra ku₃ ^dINNANA-ke₄
 223.ARATTA.KI KUR me SIKIL-la-še₃ ḥu-mu-un-tum₂-en
 224.KUR-ra ĜEŠ.IG GAL-gen₇ IGI-ba bi₂-in-tab-en
 225.ARATTA.KI UNU.KI-še₃ gu₂ a-gen₇ i₃-ḡa₂-ḡa₂
 226.ARATTA.KI UNU.KI -še₃ gu₂ ḡa₂-ḡa₂ nu-ḡal₂ e-ne-ra du₁₁-mu-na-ab
 227.ur₅-gen₇ ḥu-mu-na-ab-be₂-a-ka
 228.kiḡ₂-ge₄-a EN ARATTA.KI-ra mu-na-ni-ib-ge₄-ge₄
 229.NIN GAL an-na me ḥuš-a u₅-a
 230.ḤUR.SAĜ KUR SUBI₂-ka dur₂ ḡar-ra
 231.PARA₁₀ KUR SUBI₂-ka še-er-ka-an du₁₁-ga
 232.EN LUGAL-ḡu₁₀ SUBUR-a-ni(-im)
 233.^dNIN.E₂-an-na-ka mu-na-ni-in-ib-ku₄-re(-eš)
 234.EN ARATTA.KI gu₂ KI I₃-ḡal₂

²⁹ Ք. Միտտերմայերը վնասված հատվածը վերականգնում է՝
 «[SAḤAR UN]U.KI-ka», տե՛ս Mittermayer 2009: 126:

-
242. kiĝ₂-g[e₄-a] LUGAL-zu EN KUL.ABA₄.KI-a-ra [u₃]-na-du₁₁ u₃-na-de₃-taḥ
243. ḤUR.S[A]Ĝ GAL ĜEŠ.MEŠ₃ an-da mu₂-a
244. ur₂-bi-še₃ sa-par₄-am₃ pa-bi ĝeš-bur₂-am₃
245. [x (x)]³⁰ UMBIN-bi ANZU^{MUŠEN} ḥu-ri₂-in-MUŠEN-na
246. [xxx]³¹ dINNANA ḤI.KA-ge gib-ba
247. UMBIN ḥu-ri₂-in^{MUŠEN}-bi u₃-mun KUR-ra KUR ŠUBA-da ed₃-da³²
248. ARATTA.KI IR₂ [(x) nu[?]-še₂₂[?]-še₂₂[?]]
249. a BALA.BALA-am₃ zi₃ DUB-DUB(-ba)-am₃
250. KUR-ra SISKUR₂ a-ra-zu-a GIRI₁₇ šu ĝal₂-[la₁]-am₃
251. LU₂ IA₂ nu-me-a LU₂ U nu-me-a
252. UNU.KI zi-ga ḤUR.SAĜ ZUBI-še₃ saĝ a-gen₇ i₃-ĝa₂-ĝa₂
253. LUGAL-zu ĜEŠ.TUKUL-[ĝa₂] saĝ [ḥa₁]-ba-an-šum₂
254. ĝe₂₆-e a-da-min₃-na saĝ [ga[?]]-[b]a-an-šum₂
255. a-da-min₃ nu-[um-zu¹] UR [nu-u]m-gu₇
256. GUD-de₃ [GUD-da¹] ĝal₂-bi [nu-um]-[zu¹]
257. [a-da-mi]n₃ um-zu UR um-[gu¹]
258. [GUD-d]e₃ GUD-da ĝal₂-bi um-[zu¹]
259. [e-n]e a-da-min₃ mi-ni-in-da₁₃-da₁₃-an
260. [e-n]e NIĜ₂ LU₂ nu-si₃-ke
261. [e]-ne in-ga-mu-ni-in-da₁₃-da₁₃(-an)
262. [MIN₃-kam]-ma-še₃ kiĝ₂-ge₄-a ENIM mu-ra-[be₂(-en)]¹
263. [...] de₂-a ša-ra-ab-GALAM-e-en DU-a ḥe₂-mu-e-ši-dib₅
264. [E₂]-an-na PIRIĜ šu-ba nu₂-a
265. [ša¹]-bi-ta gud gu₃ NUN di-dam
266. ^{ĜE6}ĜEPAR ĜEŠ.MEŠ₃ GIBIL-gen₇ GURUN il₂-la-na
267. LUGAL-zu EN KUL.ABA₄.KI-a-ra šu-a ge₄-mu-na-ab
268. ḤUR.SAĜ ur-saĝ SUKUD si-ga-am₃

³⁰ Հ. Վանսթիփօւթը վնասված հատվածում վերականգնում է՝ «[BURU₅]», տե՛ս Vanstiphout 2003: 70:

³¹ Հ. Վանսթիփօւթը վնասված հատվածում վերականգնում է՝ «[keš₂-da]», տե՛ս Vanstiphout 2003: 70:

³² Ք. Միտտերմայերի կողմից տողի այլ վերականգման համար տե՛ս Mittermayer 2009: 128:

269. AN.USAN₆-na ^dUTU e₂-bi-še₃ DU-gen₇
270. IGI-bi-ta uš₂ la₂-la₂-e-gen₇
271. ^dNANNA si-un₃-na maḥ-a-gen₇
272. saĝ-ki-bi me-lem₄ ĝal₂-la-gen₇
273. ĞEŠ-gen₇ KUR.KUR-ra gib-ba-gen₇
274. saĝ MUŠ₃ ARATTA.KI-ke₄
275. ^dLAMA sa₆-ga KUR me SIKIL-la-še₃
276. u₄-da ARATTA.KI AGA KUG an-na-gen₇ si mu-na-an-sa₂
277. ĝe₂₆-e u₄-ba nam-maḥ-ĝu₁₀ ga-an-zu
278. še PARA₁₀-ga nam-mu-un-si-si-ig-ge mar-e nam-ma-e
279. še-bi KUR.KUR-ra nam-il₂-e
280. ERIN₂-na (mu)-un-ku₅ nam-mu-un-ĝa₂-ĝa₂
281. še sa-al-kad₅-e u₃-mu-ni-in-si-si
282. ANŠE PARA₁₀ la₂-e um-mi-in-la₂
283. ANŠE.BALA-e da-bi-a a-ba-an-si₃
284. TUKUMBI KISAL ARATTA.KI-ka KURU₁₃-še₃ mu-dub-be₂
285. i₃-ge-en am₃-dub-be₂ KURU₁₃(-a) ḥi-li-bi
286. KUR.KUR-ra IZI ĝar-ra-bi a₂-dam me-te-bi-im
287. BAD₃ UMUN₇-e še-er-ka-an du₁₁-ga
288. NIN ur-saĝ me₃-a tum₂-ma
289. ^dINNANA ur-saĝ me₃ [SAḤAR-ra]¹-ka saĝ EŠEMEN₂(-eš₂) di-
dam³³
290. i₃-ge-en ARATTA.KI UR ADDA sar-gen₇ šu-ta im-ta-ri
291. ĝe₂₆-e u₄-ba ša-ba(-an)-na-GAM-e-de₃-en
292. e-ne nam-maḥ-a-ni ši-im-ma-an-zu-zu-un
293. IRI-gen₇ NAM.DUMU-ĝu₁₀ gu₂ ši-im-ma-ĝa₂-ĝa₂-an e-ne-
ra dug₁₁-mu-na-ab
294. ur₅-gen₇ [ḥu]¹-mu-na-ab-[be₂]¹-[a-ka]
295. kiĝ₂-ge₄-a EN ARATTA.KI-ke₄
296. gu₃-ni-gen₇ ka-ka-na ba-an-si₃
297. SUMUN₂-gen₇ ḥaš₂-a-na mu-un-gur
298. NIM.SAḤAR-ra-gen₇ ter u₄ zal-le-[na-mu]¹-un-[DU]¹
299. šeg₁₂ KUL.ABA₄.KI-a-ka ĝiri₃ ḥul₂-la [mu]¹-ni-[in]¹-gub
300. KISAL maḥ-e KISAL gu₂-en-na-ka kiĝ₂-[ge₄]¹-a i-im-bur₂
301. [LUGAL]¹-a-[ni-ir]¹ EN KUL.ABA₄.K[I-ra]

³³ Տողի այլ վերականգնման համար տե՛ս և հմմտ.՝ Vanstiphout 2003: 72:

- 302.gu₃-ni-gen₇ šu mu-na-an-g[e₄(-x)]
 303.gud-gen₇ gu₃ mu-na-an-šum₂-[mu]
 304.gud DU.DU-a-gen₇ ĞEŠ.TU₂.ĞEŠTU mu-na-an-[ĝa₂-ĝa₂]
 305.LUGAL-e za₃ zi-da-ni NE im-mi-in-/g[e₄?]
 306.za₃ GABU₂ BU-ni im-ma-ni-in-ge₄
 307.i₃-ge-en ARATTA.KI ḠALGA Ḡ šum₂-ma im-ma-zu im-me
 308.u₄ im-zal ḠUTU Ḡ im-ta-e₃-a-ra
 309.ḠUTU KALAM-Ḡ ma-ka saĝ x-x³⁴-il₂ Ḡ
 310.LUGAL-e ḠIDIGNA ḠBURANUN[A]-Ḡ bi[?]-da[?] im-ma-da-an-tab
 311.ḠBURANUN^{na} ḠIDIGNA-da im-ma-da-an-tab
 312.BUR GAL.GAL an-ne₂ ba-su₈-su₈-ug
 313.BUR TUR.TUR SILA₄ u₂ šem-ma-gen₇ za₃-bi-a im-ma-an-us₂
 314.BUR IGI an-na da-bi-a ba-su₈-ug
 315.LUGAL-e eš-da ku₃-si₂₂-ga-ke₄
 316.EN-me-er-kara₂ DUMU ḠUTU-ke₄ du₁₀ mu-un-BAD.BAD-re₇
 317.u₄-bi-a DUB IGI im me-a ge-DU₃ UNKEN-na
 318.ALAN ku₃-si₂₂-ga u₄ du₁₀-ga du₂-da
 319.ḠNANIBGAL₂ si₁₂-ga Ḡ x sikil x Ḡ-da
 320.ḠNISABA NIN ĞEŠ.TU₂.ĞEŠTU ḠDAĞAL Ḡ-la-ke₄
 321.E₂.ĞEŠ.TU₂.ĞEŠTU.ḠNISABA ku₃-ga-ni ĝa₂ mu-na-[an]-taka₄
 322.E₂.GAL an-na-ka ku₄-ra-ni ĞEŠ.TU₂.ĞEŠTU mu-un-ĝa₂-ĝa₂
 323.en-e ĝa₂-nun maḥ-a-ni ĝa₂ Ḡba-an-taka₄ Ḡ
 324.ḠEŠ.LI₂ Ḡ-id-ga maḥ-a-ni KI Ḡ x Ḡ-[x]³⁵-us₂
 325.LUGAL-e še-ta še LIBIR-Ḡ ra-ni šu Ḡba-ra-an-t[i]
 326.MUNU₄ KI šar₂-ra A ba-ni-i[n-si]
 327.sum₄-bi U₂.ḠURIN.ḠU.RI₂.IN Ḡ x Ḡ [xx]-Ḡ x-ge³⁶
 328.sa-al-kad₅-e IGI im-mi-in-tur-tur
 329.še KURU₁₃ ka i-ni-in-si zu₂ BURU₅-bi Ḡi-ni-in Ḡ-taḥ
 330.ANŠE PARA₁₀ la₂-e um-mi-in-la₂
 331.ANŠE-BALA(-e) da-bi-a ba-an-si₃

³⁴ Հ. Վանսթիփոյրը վնասված հատվածում վերականգնում է՝ «[bi₂-ib]», **Vanstiphout 2003: 72:**

³⁵ Հ. Վանսթիփոյրը վնասված հատվածում վերականգնում է՝ «ba-[an]», **Vanstiphout 2003: 74:**

³⁶ Հ. Վանսթիփոյրը վնասված հատվածում վերականգնում է՝ «AN [X]-sug₄-ge», **Vanstiphout 2003: 74:**

- 332.LUGAL EN ĞEŠ.TU₂.ĞEŠTU DAĞAL-la-ke₄
333.EN UNU.KI-ga EN KUL.ABA₄.KI-ke₄
334.ḥar-ra-an ARATTA.KI-ke₄ si bi₂-in-sa₂
335.NAM.LU₂.LU₇ KIŠI₆ ki-in-dar-ra-gen₇
336.ARATTA.KI-aš ni₂-ba mu-un-su₈-be₂-eš
.....
339.KIĜ₂-ge₄-a EN ARATTA.KI-ra u₃-na-du₁₁ u₃-na-de₃-taḥ
340.ĜIDRU-ĝa₂ ur₂-bi me nam-nun-na-ka
341.pa-bi KUL.ABA₄.KI-a an-dil₂-eš i₃-AK
342.PA MUL.MUL-la-bi eš₃ e₂-an-na-ke₄
343.ku₃ ^dINNANA-ke₄ ni₂ im-ši-ib-te-en-te
344.ĜIDRU um-ta-an-kid₇ ḥu-mu-un-da-ĝal₂
345.NA₄.GUG ĞEŠ.DILI NA₄.ZA.GIN₃ ĞEŠ.DILI-gen₇ šu-ni-a ḥu-
mu-un-ĝal₂
346.EN ARATTA.KI-ke₄ IGI-ĝu₁₀-še₃ ḥu-mu-un-DU e-ne-ra du₁₁-mu-
na-ab
347.ur₅-gen₇ ḥu-mu-na-ab-be₂-a-ka
348.kiĝ₂-ge₄-a ARATTA.KI-aš du-ni
349.SAḤAR KASKAL-la ĞIRI₃-na mu-un-e₃
350.na₄ TUR.TUR ḤUR.SAĜ-ĝa₂-ke₄ suḥ₃-saḥ₄ mu-un-da-ab-za
351.UŠUMGAL EDIN-na ba-kiĝ₂-ĝa₂-gen₇ GABA-ri nu-mu-ni-in-
TUKU
352.kiĝ₂-ge₄-a ARATTA.KI-aš um-ma-te-a-ra
353.NAM.LU₂.LU₇ ARATTA.KI-ke₄
354.ANŠE PARA₁₀ la₂-e u₆ di-de₃ im-ma-su₈- su₈-ge-eš
355.ᵀkiĝ₂¹-ge₄-a KISAL ARATTA.KI-ka
356.še KURU₁₃-ka ᵀbi₂¹-in-si zu₂ BURU₅-bi bi₂-in-ta[ḥ]
357.IM.A an-na u₄ ĝal₂-la-gen₇
358.ARATTA.KI ḥe₂-ĝal₂-la i₃-du₃
359.DIĜIR dur₂-bi-a ba-da-ab-ge₄-a-g[en₇]
360.ARATTA.KI ša₃-ĝar-ra-ni ᵀam₃-la₂¹-[la₂]
361.NAM.LU₂.LU₇ ARATTA.KI-[ke₄]
362.MUNU₄ a si-ga-na a-ša₃ mu-ni-[x-x]
363.ᵀEĜIR¹-ba ra₂-GABA ša₃-ta[m ...]
364.[...] KI A TAKA₄-ba [...]
365.[.....]
366.[...] ᵀMUNU₄ NI¹ [...]

367. GAL[?] zu[?] ARATTA.KI ĠEŠ. TU₉.ĠEŠTU¹ [...]
368. ARATTA.KI-aš ENIM mu-un-bu[r₂(-x)]
369. ur₅-da ARATTA.KI-a šu/ta\ [...]
-
412. ur₅-gen₇ hu-mu-na-ab-be₂-a-ka
413. kiġ₂-ge₄-a DUR₃^{UR3} si¹-ma¹ ku₅-ra₂-gen₇ GIRI₁₇ si-il-la mu-un-DU
414. ANŠE EDIN-na BAR.BARIM-ma KAŠ₄ di-gen₇ KUŠU i₃-ta₃-ta₃-ge
415. GIRI₁₇-ni TUMU-a bi₂-ib-zi-zi-zi
416. UDU ZULUMĤI UDU¹ sumur-ba¹ du₇¹ du₇¹-gen₇ du₁₀-us₂¹ AŠ¹ mu-un-dab₅
417. šeg₁₂ KUL.ABA₄.KI-a-ka ġiri₃ hu₂-la mi-ni-in-gub
418. LUGAL-a-ni EN KUL.ABA₄.KI-a-ra
419. KA ENIM-ma mu-na-ra-si-si
420. EN-me-er-kar₂-ra^D EN¹-ki-ke₄¹ ĠEŠ. TU₉.ĠEŠTU mu-na¹-an-šum₂¹
421. [E]N-e ĠEŠĠEM maḥ-a-[ni[?]] a₂¹ ba-da¹-an-aġ₂[?]
422. E₂ GAN₂¹ NI₂[?] [...]
423. LUGAL-e¹ šu[?]¹ [...] šu ba-ra¹-an¹-ti
424. mu-un-DU₆¹ x šu¹ bi₂-[.....³⁷] IGI bi₂-in¹-KARA₂[?]
425. ^{NA4}NA ZU₂-ZU₂ tub₂-gen₇ b[a-ni-i]n-ra
426. gi su-lim-ma-ka i₃-gen₇ mu-ni-in-de₂
427. u₄-ta ĠESSU-še₃ am₃-e₃-e¹
428. ĠESSU-ta u₄-še₃ am₃-e₃¹-e
429. MU IA₂-am₃ MU U-am₃ ba-zal-[la]-ri
430. ge su-lim-ma giġ₄-gen₇ bi₂-in-gaz
431. EN-e IGI hu₂-la im-ši-in-bar
432. i₃-li i₃-li₂ KUR SUBI-a-ka sag₃-ga i-ni-in-de₂
433. EN-e kiġ₂-ge₄-a KUR-še₃ du-ur₂
434. ĠIDRU šu-na mu-un-na-ġa₂-ġa₂
435. kiġ₂-ge₄-a ARATTA.KI-aš du¹-a¹-ni
436. u₅ MUŠEN-gen₇ ĤUR.SAĠ-ġa₂ NIM-gen₇ saḥar IŠI-[I]ŠI-a
437. [.....]³⁸-gen₇ KUR ur₃-ur₃-ru-d[a]-ni¹ ARATTA.KI-aš b[a-t]e

³⁷ <. Վանսթիփոուրը վնասված հատվածում վերականգնում է՝ «[in-GUR.GUR]», Vanstiphout 2003: 80:

- 438.KISAL ARATTA.KI-ka ĠIRI₃ ħul₂-la mi-ni-in-gub
439.ĠIDRU TE SI na-mu-[u]n-DU
440.šu-kin si bi₂-in-sa₂-a[┐]KIĠ₂ bi₂-AK[┐]-e
441.EN ARATTA.KI-ke₄ ĠIDRU-ta IGI tab-ba
442.ITIMA-ka ki-tuš ku₃-ga-ni-a ni₂ im-KARA₂.KARA₂.KA
443.en-e ša₃-tam-a-ni-ir gu₃ mu-na-de₂-e
444.ARATTA.KI[┐]u₈[┐] sag₂-[gen₇?][┐] ħe₂[┐]-em KASKAL-bi[┐] KASKAL?[┐]
ki[┐]?[┐]-BALA ħe₂-em
445.MAĦ ARATTA.KI[┐]KU₃[┐]d INNANA-ke₄
446.EN KUL.ABA₄.KI-ra mu-na-an-šum₂-ma-ta
447.lu₂ kiĠ₂-ge₄-a mu-un-ge₄-a-ni
448.^dUTU e₃-de₃ ENIM DUGUD PA e₃-de₃
449.a-da-al ku₃ ^dINNANA-ke₄ IGI me-ši-KARA₂.KARA₂
450.ARATTA.KI-a LUL-e me-[┐]a[┐] ħe₂-en-de₃-dib-e
451.AL me-da-aš šu al-ZIL₂.ZIL₂-i-a
452.me-en-de₃ su₃-ga LUL-la-bi-eš₂
453.EN KUL.ABA₄.KI-ra ^{NA4}GUG LUL-la-me-a mu-na-dur₂-ru-ne-
en-de₃-en
454.EN ARATTA.KI-ke₄ KIĠ₂-ge₄-a-ar
455.ENIM-ma DUB maĥ-gen₇ šu mu-na-an-šum₂
.....
.....
500.du₁₁-ga-ni-am₃ ša₃-bi su-su-a-am₃
501.KIĠ₂-ge₄-a ENIM i₃-DUGUD šu nu-mu-un-da-an-ge₄-ge₄
502.BAR KIĠ₂-ge₄-a ENIM i₃-DUGUD šu nu-mu-un-da-an-ge₄-ge₄-
[┐]da[┐]-kam
503.EN KUL.ABA₄.KI-a-ke₄ im-e šu bi₂-in-ra ENIM KIŠEB-
gen₇ [┐]bi₂-in[┐]-gub
504.u₄-bi-ta ENIM im-ma gub-bu nu-ub-ta-ġal₂-la
505.i-ne-eš₃ ^dUTU u₄-ne-a ur₅ ħe₂-en-na-nam-ma-am₃
506.EN KUL.ABA₄.KI-a-ke₄ EN[┐]IM im-ma b[┐]i₂-in-gub ur₅ ħ[e₂-en-
na]-nam-ma
507.KIĠ₂-ge₄-a MUŠEN-gen₇ A₂ TUB₂ i₃-AK-e
508.ur-bar-ra maš-e us₂-sa-gen₇ GURUŠ₃^{UŠ} i₃-bur₂-bur₂-re

³⁸ Հ. Վանսթիփոյթը վնասված հատվածում վերականգնում է՝
«HI.SUHUR^{ku6}», Vanstiphout 2003: 80:

509. ҲUR.SAĜ IA₂ ҲUR.SAĜ AŠ₃ ҲUR.SAĜ UMUN₇ im-me-ri-
BALA.BALA

510. IGI mu-un-il₂ ARATTA.KI-aš ba-te

511. KISAL ARATTA.KI-ka ĠIRI₃ ḫul₂-la mi-ni-in-gub

512. nam-nir-ġal₂ LUGAL-a-na mu-un-zu

513. bur₂-ra-bi ENIM ša₃-ga¹-na bi₂-ib₂-be₂

514. KIĜ₂-gi₄-a EN¹ARATTA¹.KI-ra mu-na-ab-BALA-e

518. LUGAL-ġu₁₀ [a-na bi₂-i]n-du₁₀ a-na bi₂-in-taḫ-am₃

519. LUGAL-ġu₁₀ [x x]¹x (x)³⁹ DUMU^dEN-lil₂-la₂-ke

520. ĠIŠ-x¹ [.....]¹KI²-da mu₂-a

521. [...]¹ [... an²-n]e₂² us₂-sa-am₃

522. [ur₂-bi ki-a]⁴⁰[x]¹ gub-ba-bi

523. [NAM.E]N NAM.LUGAL-la pa-e₃ AK-a

524. [E]N-me-er-kar₂ DUMU^dUTU-ke₄ IM ma-an-šum₂

525. EN ARATTA.KI-ke₄ IM IGI u₃-ni-bar ša₃ ENIM-ma u₃-bi₂-zu

526. a-na ma-ab¹-be₂¹-en-na¹-bi u₃-mu-e-du₁₁

527. [a r]u-a¹sum₄¹ NA₄.za-gin₃¹e₁₁²-da-ar

528. ab₂ kal-la-ga-ni KUR me SIKIL-la-ka du₂-da-ar

529. SAḪAR¹ UNU.KI⁴¹-ga-ka a₂¹e₃¹-a-ar

530. AKAN¹ ab₂ zid-da-ka ga gu₇-a-ar

531. KUL.ABA₄.KI KUR me GAL.GAL-la-ka nam-en-na tum₂-ma-ar

532. EN-me-er-kar₂ DUMU^dUTU-ra

533. ENIM-bi eš₃ E₂-an-na-ka ENIM du₁₀ ga-mu-na-ab-du₁₁

534. ĠE₆ĠE₆PAR₄ ĠE₅MES₃ GIBIL-gen₇ GURUN il₂-la-na

535. LUGAL-ġu₁₀ EN KUL.ABA₄.KI-ra šu-a ga-mu-na-ab-ge₄

536. ur₅-gen₇ ḫu-mu-na-ab-be₂-a-ka

537. EN ARATTA.KI-ke₄ KIĜ₂-ge₄-a-ar

538. im šu-NIĠIN₂-na-ni šu ba-ši-in-ti

539. EN ARATTA.KI-ke₄ im-ma IGI i-ni-in-bar

³⁹ Հ. Վանսթիփոյը վնասված հատվածում վերականգնում է՝
«[ĠIŠMES] GAL», *Vanstiphout* 2003: 86:

⁴⁰ Հ. Վանսթիփոյը վնասված հատվածում վերականգնում է «[ur₂-bi ki-a]»,
տե՛ս *Vanstiphout* 2003: 86:

⁴¹ Հ. Վանսթիփոյը հնարավոր է համարում նաև «ARATTA.KI» ընթերցումը,
տե՛ս *Vanstiphout* 2003: 86:

- 540.u₄-ba du₁₁-ga-ni-am₃ saĝ¹-ki mi-ri₂-da-am₃
 541.EN ARATTA.KI-ke₄ im šu-NIĜIN₂-na-ni IGI im-bar-bar-re
 542.u₄-ba EN MEN NAM.EN-na tum₂-ma DUMU^dEN-lil₂-la₂-ke₄
 543.^[d]IŠKUR AN KI-a gu₃ nun-bi di-dam
 544.u₄ du₇-du₇ UG GAL¹AN² KI x¹ KA¹ ĞIRI-ni¹ nam-mi-ni-in-gub
 545.KUR-KUR [..... mu-n]a²-TUKU₄.TUKU₄-e
 546.ĤUR.SAĜ¹ [.....] mu-un-da-peš-peš-e
 547.¹IM [] GABA-na ĝal₂-la-bi
 548.ĤUR.SAĜ¹ GIRI₁₇-zal-la SAĜ¹ mi-ni-in-il₂
 549.ARATTA.KI BAR UD-bi ša₂ ĤUR.SAĜ¹-ĝa₂-ka
 550.KIB₃ ni₂-bi mu₂-a gu₂ ni₂-bi an-ga-mu₂-a
 551.KIB₃ ni₂-bi mu₂-a KURU₁₃-ka
 552.EN ARATTA.KI-ra mu-na-ni-in-S[UD²-x]
 553.KISAL ARATTA.KI-a-ka IGI-ni-še₃ i-im-¹si²
 554.EN ARATTA.KI-ke₄ KIB₃-e IGI bi₂-in-du₈
 555.KIĜ₂-ge₄-a IGI PA.PA-a-ni mu-un-ši-ib-¹il₂-il₂¹-e
 556.EN ARATTA.KI-ke₄ KIĜ₂-ge₄-a-ar gu₃ mu-un-na-de₂-e
 557.MAĤ-bi^dINANA¹ NIN¹ KUR.KUR-ra-ke₄
 558.¹IRI²-ni ARATTA.KI šu li-bi₂-in-dag UNU.KI-e¹ la¹-ba-an-du₁₁⁴²
 559.E₂ ZA-gin₃-na-ka-ni šu li-bi₂-in-dag eš₃ E₂-an-na-ka la-ba-an-du₁₁
 560.KUR ME SIKIL-la-ka šu li-bi₂-in-dag šeg₁₂ KUL.ABA₄. KI-a-ke₄ la-ba-an-du₁₁
 561.ĝeš-nu₂ še-er-gan₂-kad šu li-bi₂-in-dag ĝeš-nu₂^{GE} GERIN-na la-ba-an-du₁₁
 562.en-ra šu SIKIL-la-ka-ni šu li-bi₂-in-dag EN UNU.KI-ga EN KUL.ABA₄.KI-a-ra la-ba-an-du₁₁
 563.ARATTA.KI zid-da GAB₂ BU-ba
 564.^dINANA NIN KUR.KUR-ra-ke₄
 565. MAĤ E₃-a-gen₇ mu-un-na-NIĜIN₂.NIĜIN₂
 566.LU₂-bi-ne LU₂ LU₂-ta suĥ-a
 567.LU₂^d DUMU.ZI-de₃ lu₂-ta e₃-a-me-eš
 568.ENIM ku₃^d INNANA ki-bi-še₃ ĞAR.ĞAR-me-eš
 569.ur-IGI-ĝal₂-la¹ EMEDU¹^d DUMU.ZI-da ĥe₂-ši-im-¹
 570.ul₄ ĝa₂-nam-ma dumu ur₄-[...]⁴³

⁴² 558-562-րդ տողերի այլ վերականգնումների ու ընթերցումների համար տե՛ս Vanstiphout 2003: 88:

- 571.[IGI a]-ma-ru-ka gub-ba-me-eš
572.[EG]IR a-ma-ru ba[┐]ur[┐]₃-ra-ta
573.^dINANA NIN KUR.KUR-ra-ke₄
574.NAM GAL KI aĝ₂ ^dDUMU.ZI-da-ke₄
575.a nam-til₃-la-ka mu-un-ne-sud-sud
576.gu₂ KALAM-ma-ka [ĝ]eš mu-un-ne-en-ĝal₂
-
- 588.um-ma KUR me SIKIL-še₃ du-a-ni
589.KI-SIKIL u₄-da-na til-la-gen₇ im-ma-na-ta-e₃
590.ŠEMBI-zid-da IGI-na mu-un-gunu₃
591.[x] BABBAR-ra za₃ mu-ni-in-keše₂
592.[AGA[?]] zid-da iti₆-gen₇ mu-un-e₃
593.[X] X X saĝ si ba-ni-in-sa₂
594.[EN-me]-er-kara₂ saĝ si ba-ni-in-sa₂-[┐]a[?]
595.[.....] um-mi-in-zi-zi
596.[ši-i]m-[┐]da-lu-lu ARATTA.KI[┐]-aš u₈-da SILA₄-bi
597.[ši-im]-[┐]da-lu-lu ARATTA.KI[┐]-aš [┐]ud₅[┐]-da maš₂-bi
598.[ši-im]- [┐]da-[┐]lu-lu[┐] ARATTA.KI-aš ab₂-da AMAR-bi
599.[ši-i]m-da-lu-lu ARATTA.KI-aš EME₅ DUR₃^{UR3}[┐]...[┐] GEGGE-ga
600.[.. AR]ATTA.KI(-)a na-an-da-be₂-a
601.[... ħe₂]-em-dub-dub gu₂ ħe₂-em-ĝar-ĝar
602.[....] [┐]...[┐] (-)za-a ħe₂-ĝal₂-[┐]zu[┐]
603.[.... E]N ARATTA.KI-ra u₃-mu-ni-in-[┐]AK[┐]
604.[....] [┐]x x kur[?]-ra[┐] ħe₂-en-[....]
605.[....] mu-un-di-ni-ib-x-e
606.[....] mu-un-ta-e₃
607.[....] [┐]...[┐] mu-un-na-[┐]...[┐]
608-610. [.....]
611.[.....] me-te-aš [.....] ĝal₂
612.[.....] ... SI i-lu ša₃-[.....] ..
613.[.....]-ni-a ħe₂-ĝal₂-zu diĝir [.....]
614.[AIA[?]] [┐]dEN[┐]-lil₂-le saĝ-eš mu-ri-in-rig₈ [....] [┐]...[┐]-la-[┐]še₃[┐] ħe₂-zu-zu

⁴³ Վերականգնումն ըստ Հ. Վանսթիփհուտի՝ Vanstiphout 2003: 88 ք. Միտտերմայերը տողի դիմաց բացատ է թողել, տե՛ս Mittermayer 2009: 148:

- 615.[.....]「KI[?]」-a a-「ša₃[!]」 nu¹-lam-lam anu-un-de₂
616.「^dEN」-[lil₂ AIA K]UR.KUR-「ra」-ke₄ hu-mu-un-kar₂[?]-re ni₂-ba
617.「eš₂¹」-gar₃ [(x)i]m-ma-an-du₃-a-gen₇
618.「NAM-LU₂-LU₇¹L[U]」ARATTA.「KI」-a-ke₄
619.ku₃「si₂₂ ku₃¹NA⁴」[za-g]in₃[?] BALA AK-「de₃ si bi₂-ni-sa₂¹」
620.LU₂.GURUN ku₃「si₂₂ GURUN ĞEŠ.GUB-bu-ne¹」
621.「^{ĜEŠ}PEŠ₃ ĞEŠTIN-ba NIĜ₂「x x」-ba-gen₇「KURU₁₃ GAL-še₃ u₃[?]」-
mu-un-dub
622.「^{NA⁴}za-gin₃ DURU₅ ur₂-ba mu-un-bur₂-re-ne
623.ge-SI.A pa-ba mu-un-ta-BA[LA[?]].「BALA」-e-ne
624.「^dINANA」NIN「E₂-an-「na-ra」
625.KISAL E₂-an-na.KI-ka kuru₁₃-še₃ mu-「un-dub」-bu-ne
626.LUGAL-ĝu₁₀ ĝa₂-nu na ga-e-de₅ na-de-ĝ[u₁₀ h]e₂-e-dab₅
627.ENIM ga-ra-ab-du₁₁ ĞESSAL^{SAL⁴} he₂「e」-AK
628.「.....」ŠIM KUR.KUR-ra uĝ₃-e u₃「um」-pa₃
629.[.....]「...」ARATTA^{KI}-[ke₄]
630.[NI]N me-še₃ i-im-da「he₂」-em-me-ne
631.「ĝe₂₆¹」-e gu₂-e-ta du-a-ĝu₁₀-ne
632.[L]UGAL-ĝu₁₀ NIN MUL.MUL-e ma-an-šum₂
633.「^dĞEŠTIN-a[n-na ...]」
634.IRI-ba ... 「...」[...]
635.IZIM[?] (ser₃[?]) nu-mu-x-[...]
636.u₄ šu₂-uš「nam-x」-[...]
637.[「^dNISABA[?] za₃-mim[?]」]
638-639. [.....]

Թարգմանություն

- 1-24. Պարունը սկսվում է Ուրուկ և Կուլարա քաղաքների նկարագրությունից⁴⁴:
25. [...] Գունազեղ ծիածանագույն է,

⁴⁴ Տեքստի հայերեն թարգմանությունը համեմատել ենք Ք. Միտտերմայերի գերմաներեն (Mittermayer 2009) և Հ. Վանսթիփուտի անգլերեն (Vanstiphout 2003), թարգմանությունների հետ:

26. [իսկ Գիպա]րը⁴⁵, մաքուր տեղը⁴⁶, բարձր աշտարակներ է [...]⁴⁷:

27. Նրա ներսը կանաչ է մրգերով, ինչպես սպիտակ (ծաղկող) MES-ծառը,

28. քանզի Իննանայի⁴⁸ համար Արատտայի տերը

29. (թեև) ներկայացրեց արքա-քրմի ոսկե խույրը,

30. (այնուամենայնիվ) նա չհաճեցրեց նրան, ինչպես Կուլաբայի տիրակալը:

31-32. (Որովհետև) Արատտան երբևէ կառուցե՞լ է սուրբ Իննանայի համար (այնքան փառահեղ), ինչպես Էաննայի⁴⁹ սրբավայրը, Գիպարի սրբատեղին և ի տարբերություն աղյուսով կառուցված Կուլաբի:

.....
.....
.....

38. «Իմ քույրը, Իննանա՛, Ուրուկի համար,

39. պետք է վարպետորեն մշակել ինձ (համա՛ր) (Արատտայում):

40. [Թո՛ղ կտրեն ինձ համար] հղկված լաջվարդը⁵⁰ բեկորից,

41. [...] հարթ հղկված լաջվարդի փայլը:

⁴⁵ Տե՛ս ծնթ. 13:

⁴⁶ Ամենայն հավանականությամբ պետք է հասկանալ «սրբավայր» իմաստով (հեղ.):

⁴⁷ Հ. Վանսթիփոյթը թարգմանում է՝ «իսկ ..., սրբավայրը հղկված լաջվարդ էր», տե՛ս **Vanstiphout 2003: 57**:

⁴⁸ Տե՛ս ծնթ. 9:

⁴⁹ Էաննա՛ն՝ Իննանայի տաճարը Ուրուկում: Շումերերեն É-AN.NA բառացի նշանակում է «երկնքի տուն»: Այն կոչվել է նաև «Իննանայի տաճար», ինչպես նաև համարվել է որպես «Իննանայի և Անուի» նստավայրը, տե՛ս **Black, Green 2004: 73**:

⁵⁰ Լաջվարդ (լազուրիտ) թանկարժեք քարը խիստ հարզի է եղել շումերների մոտ և լաջվարդե խույր, մորուս, վարսեր կրելը աստվածայնության խորհրդանիշ էր, տե՛ս **Մովսիսյան 2005, 117, ծնթ. 3**:

42. [Թող որ նրանք] կառուցեն [ինձ համար] «Հոյակապ լեռը» Ուրուկում,
 43. տաճարում, որը [հասնում է] դեպի երկինք՝ քո բնակավայրը],
 44. կկառուցվի [...] դրախտը⁵¹:
 45. Քո բնակավայրի՝ Գիպարի ներքին հարդարումը մաքուր ... կառուցված է,
 46. Արատտան հանուն ինձ՝ հմտորեն կզարդարի իր ներքին պալատը:
 47. (Արդյունքում) ես ինքս կկախվեմ նրա մեջ փայլուն հորթի պես⁵²:
 48. Թո՛ղ Արատտան ենթարկվի Ուրուկին,
 49. Թո՛ղ որ Արատտայի մարդիկ
 50. հանուն ինձ իջեցնեն իրենց բլուրների ու լեռների քարերը:
 51. Եվ կառուցեն ինձ համար մեծ սրբավայրը, կանգնեցնեն ինձ համար մեծ բնակավայրը:
 52. Հանուն ինձ թո՛ղ փառավորեն մեծ բնակավայրը, բնակավայրը՝ աստվածների:
 53. Այսպիսով, թո՛ղ իմ զորությունը ակնհայտ դառնա Կուլաբայում,
 54. թո՛ղ Աբգուն⁵³ ծաղկի սուրբ լեռան պես,

⁵¹ Հ. Վանսթիփուֆը թարգմանում է՝ «Էանայի սրբավայրը՝ թո՛ղ [Արատտան] կառուցի դա», տե՛ս **Vansthouth 2003**: 59:

⁵² Հ. Վանսթիփուֆը թարգմանում է՝ «Որպեսզի ես՝ շողացող երիտասարդս, գրկել քեզ այնտեղ», տե՛ս **Vansthouth 2003**: 59:

⁵³ Աբգուն շումերա-աքքադական դիցաբանության մեջ երկիրը շրջապատող ստորգետնյա քաղցրահամ ջրերի համաշխարհային օվկիանոս է: Ասոցացվում է պտղաբերության հետ և համարվում է բոլոր առուների, գետերի, լճերի և քաղցրահամ այլ ջրերի աղբյուր: Ըստ շումերների տիեզերագիտական պատկերացումների՝ Աբգուն գտնվում էր երկրի և ստորգետնյա անդունդի տակ՝ մի թաքնված վայրում, որտեղ նույնիսկ աստվածները չէին կարող նայել: Աբգունների տերը իմաստության աստված Էնկին էր, որն ապրել է ստորգետնյա օվկիանոսում նախքան մարդկանց ստեղծումը: Էրիդու

55. թո՛ղ Էրիդուն⁵⁴ շողշողա լեռնաշղթաների պես:
56. Հանուն ինձ թող Աբգուի սրբավայրը փառավոր դարձնեն, ինչպես արծաթը հանքաշերտի մեջ:
57. Երբ ես այդժամ կինչեցնեմ փառաբանության խոսքեր Աբգուից,
58. երբ ես այդժամ հետ կբերեմ իշխանությունը Էրիդուից,
59. երբ ես զարդարված կլինեմ տերության պսակով՝ ինչպես մաքուր սրբավայրը,
60. երբ ես այդժամ կդնեմ Ուրուկ-Կուլաբայի սուրբ թագը՝
61. թո՛ղ այդժամ մեծ սրբության [մականակիրներն⁵⁵] ինձ ուղեկցեն Գիպար:
62. Եվ թո՛ղ Գիպարի [մականակիրները] ինձ ուղեկցեն դեպի մեծ սրբավայրը:
63. Ժողովուրդը կծափահարի ու կհիանա ինձնով:
64. Եվ Արևը բարերարությամբ կնայի ինձ:
65. Եվ այս ամենից հետո շքեղությունը սուրբ երկնքում՝ Տիկինը, որը դիտում է լեռնաշխարհի վրայով:
66. Աստվածային Տիկինը, որը զարդարում է իրեն Ամա-ուշումգալանայի⁵⁶ համար:
67. Իննանա՛ բոլոր երկրների տիրուհին,

քաղաքի Էնկիի տաճարը կոչվում էր «Աբգու» կամ «Էնգուրայի տուն» և գտնվում էր ճահճի եզրին, տե՛ս **Black, Green 2004**: 27:

⁵⁴ Շումերական քաղաք: Հնավայրը համապատասխանում է ներկայիս Աբու Շահրային բնակավայրին (Իրաքի Հանրապետությունում): Անվանումը շումերերեն տառացի նշանակում է՝ «քարի քաղաք»: Հայտնի է նաև Էրեդու, Էրիդուգ, Ուրուդուգ անվանումներով: Ըստ շումերական դիցաբանության՝ սա աշխարհի ամենաառաջին քաղաքն է, տե՛ս **Bryce 2009**: 233f.:

⁵⁵ Մանրամասն տե՛ս **Vanstiphout 2003**: 93, ծնթ. 15:

⁵⁶ Ամա-ուշումգալանա աստվածը հետագայում նույնացվել է Դումուզիի (հովիվ աստված, պտղաբերության, մեռնող և հարություն առնող աստված) հետ, ի սկզբանե պաշտվել է Լագաշում: Մի պաշտամունքային երգում նա նկարագրված է որպես ռազմիկ հերոս, տե՛ս **Black, Green 2004**: 29, 72f.:

68. այսպես խոսեց Արևի որդի Էնմերքարի հետ.
69. «Արի՛, Էնմերքա՛ր, ես քեզ խորհուրդ կտամ, թող իմ խորհուրդը ուշադրության արժանանա:
70. Ես մի խոսք կասեմ, թող որ դա լսվի:
71. Չորքերից, որը խոսուն է և տոկուն, որպես սուրհանդակ ընտրիր մեկին:
72. Որտե՞ղ և ո՞ւմ պիտի տանի իմաստուն Իննանայի կարևոր պատգամը:
73. Նա կհասցնի այն Ջուբիի լեռնաշղթան⁵⁷:
74. Նա այն կիջեցնի Ջուբի լեռնաշղթայից,
75. Շուշինը⁵⁸ և Անշան երկիրը⁵⁹:
76. կողջունեն նրան խոնարհաբար, ինչպես փոքրիկ մկները:
77. Մեծ լեռնաշղթաներում կուտակվող բազմությունները
78. փոշու մեջ կգլորվեն նրա համար:
79. Արատտան պիտի՛ ենթարկվի Ուրուկին:
80. Երբ Արատտայի ժողովուրդը
81. վայր իջեցնի քարերը իրենց բլուրներից ու լեռներից,
82. և կառուցի քեզ համար մեծ սրբավայրը, կանգնեցնի քեզ համար մեծ բնակավայրը,
83. հանուն քեզ թո՛ղ փառավորեն մեծ բնակավայրը, բնակավայրը՝ աստվածների:
84. Այսպիսով, թո՛ղ քո զորությունը ակնհայտ դառնա Կուլաբայում:
85. Թո՛ղ Աբգուն ծաղկի քեզ համար սուրբ լեռան պես,
86. թո՛ղ Էրիդուն շողշողա լեռնաշղթաների պես:

⁵⁷ Հնարավոր է, որ նկատի է առնվում Ջաբ լեռնաշղթան, տե՛ս **Vanstiphout 2003**: 176:

⁵⁸ Հնարավոր է նկատի է առնվում Էլամի մայրաքաղաք Շոշը, տե՛ս **Vanstiphout 2003**: 176:

⁵⁹ Տարածաշրջան Իրանի հարավ-արևմուտքում, տե՛ս **Vanstiphout 2003**: 173:

87. Հանուն քեզ, թո՛ղ Աբգուի սրբավայրը փառավոր դարձնեն, ինչպես արծաթը հանքաշերտի մեջ:
88. Երբ այդժամ դու հնչեցնես փառաբանության խոսքեր Աբգուին,
89. երբ այդժամ հետ կբերես իշխանությունը Էրիդուից:
90. Երբ զարդարված կլինես տերության պսակով, ինչպես մաքուր սրբավայրը:
91. Երբ այդժամ կդնես Ուրուկ-Կուլաբայի սուրբ թագը՝
92. թո՛ղ այդ ժամանակ մե՞ծ սրբության [մականակիրներն] քեզ ուղեկցեն Գիպար:
93. Եվ թո՛ղ Գիպարի [մականակիրները] քեզ ուղեկցեն դեպի մե՞ծ սրբավայրը:
94. Ժողովուրդը կծափահարի ու կհիանա,
95. և Արևը բարեբարությամբ կնայի քեզ:
96. Արատտայի ժողովուրդը,
97. ամբողջ օրը կրելով իր [բեռները],
98. երբ արդեն զով է երեկոյան,
99. Դումուզին⁶⁰ լի է մաքիներով, ուլերով և գառներով:
100. Այո՛, Աքալագի՛ Դումուզիի մարգագետիններում⁶¹
101. նրանք կգան քեզ մոտ, ինչպես շատ լեռնային ոչխարներ:
102. Արևի պես բարձրացի՛ր իմ սուրբ կրծքի վրա՝
103. դու իմ կրծքավանդակի գոհարն ես
104. Փառք քեզ էնմերքար՝ Արեգակի որդի
-
-
-
108. Դու կհասցնես այն Ջուբիի լեռնաշղթան:
109. Դու այն կիջեցնես Ջուբի լեռնաշղթայից:
110. Շուշ և Անշան երկիրը
111. կողջունեն նրան խոնարհաբար, ինչպես փոքրիկ մկները:

⁶⁰ Տե՛ս ծնթ. 57:

⁶¹ Տեղադրությունը հայտնի չէ, տե՛ս Vanstiphout 2003: 173:

112. Մեծ լեռնաշղթաներում կուտակվող բազմությունները՝
113. փոշու մեջ կգլորվեն նրա համար:
114. Սուրհանդակ, խոսի՛ր Արատտայի տիրոջ հետ և ասա նրան՝
115. զգու՛յշ եղեք, որ ես չստիպեմ (Արատտայի բնակիչներին) փախչել իրենց քաղաքից, ինչպես աղավնին իր ծառից,
116. որ չստիպեմ նրանց թռչել հեռու, ինչպես թռչունը իր մշտական բնից:
117. Որպեսզի նրանց վրա գին չդնեմ, ինչպես ուղղակի ապրանքի,
118. որպեսզի Արատտան փոշի չհավաքի, ինչպես ավերված քաղաքը,
119. Որպեսզի այնպես, ինչպես Էնկին է անիծել բնակավայրը
120. և ամբողջովին ոչնչացրել այն, ես նույնպես կոչնչացնեմ Արատտան:
121. Որպեսզի չլինի այն ավերածությունների պես, որը կործանարար կերպով ավերեց,
122. Եվ որի հետևանքով Իննանան վեր կացավ, ճչաց ու բարձրաձայն բղավեց, ես նույնպես մեծ ավերածություն կպատճառեմ այնտեղ:
123. Հետևաբար Արատտան, կաշվե պարկերի մեջ ոսկյա կտորներ լցրեց:
124. Եվ դրանք ամուր փաթեթավորեց ոսկու փոշիով
125. և թանկարժեք մետաղները փաթաթեց հակերի մեջ
126. և բարձեց լեռնային էշերին արկղերով:
127. Պետք է կառուցի ինձ համար Շումերի երիտասարդ Էնիլը⁶²
128. Նուդիմուդի⁶³ կողմից ընտրված իր սուրբ սրտում:

⁶² Էնիլը շումերական դիցարանի գլխավոր աստվածն էր՝ քամու, օդի, հողի, փոթորկի տարերքը խորհրդանշող աստվածությունը: Էնիլի պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Նիպպուր քաղաքում, տե՛ս **Black, Green 2004: 76:**

- 129. Փայլուն զորությունների լեռ,
- 130. թո՛ղ որ դարձնեն այն շքեղ, ինչպես շիմշատի ծառը,
- 131. թո՛ղ նրա եղջյուրները փայլեն այնպես, ինչպես Արեգակն է դուրս գալիս իր պալատից:

.....

.....

.....

- 156. Բացի այդ՝ տերը այս հրահանգները տվեց սուրհանդակին, որը պետք է գնար
- 157. լեռնաշխարհ՝ Արատտա:

.....

.....

.....

- 160. Սուրհանդակը ականջ դրեց իր արքայի խոսքերին:
- 161. Գիշերը նա ճանապարհորդում էր աստղերի լույսով,
- 162. իսկ ցերեկը՝ արևի հետ:
- 163. Որտե՞ղ և ո՞ւմ պիտի տանի իմաստուն Ինաննայի կարևոր պատգամը:
- 164. Նա հասցրեց այն Զուբիի լեռնաշղթան:
- 165. Նա այն իջեցրեց Զուբի լեռնաշղթայից:
- 166. Շուշի և Անշանի երկիրը
- 167. ողջունեցին նրան խոնարհաբար, ինչպես փոքրիկ մկները:
- 168. Մեծ լեռնաշղթաներում կուտակվող բազմությունները
- 169. փոշու մեջ գլորվեցին նրա համար:
- 170. Նա անցավ հինգ, վեց, յոթ լեռնաշղթա,
- 171. և երբ նա բարձրացրեց աչքերը, նա հասել էր Արատտա:
- 172. Ուրախացած նա մտավ Արատտայի բակ
- 173. և հռչակեց իր արքայի փառքը:
- 174. Նա բացեիբաց ասաց իր սրտում եղած խոսքերը:

⁶³ Էնկիի մակդիրներից մեկը, տե՛ս **Black, Green 2004: 76, Vanstiphout 2003: 175:**

175. Սուրհանդակը այսպես խոսեց Արատտայի տիրոջ հետ:
179. Ահա թե ինչ էլ ասել իմ արքան.
180. «Իմ արքան իր ծնունդից ի վեր նշանակված էր գերիշխանության:
181. Նա Ուրուկի տերն է՝ Շումերում ապրող sagkal-օձը, որը փոշիացնում է լեռնաշխարհը,
182. նա լեռնաշխարհի եղջերուն է՝ մեծ եղջյուրներով:
183. Նա գոմեշն է, եղնիկը սմբակներով տրորում է սուրբ օճառը:
184. Նա այն մեկն է, որին իսկական կովը ծնեց լեռնաշխարհի սրտում:
185. Նա Արևի որդի է՝ մեծերքարն է և ինձ ուղարկել է քեզ մոտ:
185. Ահա թե ինչ ասաց իմ արքան.
186. «Զգո՛ւյ՛շ եղեք, որ ես չստիպեմ (Արատտայի բնակիչներին) փախչել իրենց քաղաքից,
187. ինչպես աղավնին իր ծառից,
188. որ չստիպեմ նրանց թռչել հեռու, ինչպես թռչունը իր մշտական բնից:
189. Որպեսզի նրանց վրա գին չդնեմ, ինչպես ուղղակի ապրանքի,
189. և թանկարժեք մետաղները փաթաթեց հակերի մեջ:
190. Որպեսզի Արատտան փոշի չհավաքի, ինչպես ավերված քաղաք:
191. Որպեսզի, ինչպես երբ էնկին անիծել է բնակավայրը,
192. և ամբողջովին ոչնչացրեց այն, ես նույնպես ոչնչացնեմ Արատտան:
193. Որպեսզի չլինի այն ավերածությունների պես, որը կործանարար կերպով ավերեց,
194. և որի հետևանքով Ինանան վեր կացավ, ճշաց ու բարձրաձայն բղավեց:
195. Ես նույնպես մեծ ավերածություն կպատճառեմ այնտեղ»:
196. Հետևաբար, Արատտան, կաշվե պարկերի մեջ ոսկյա կտորներ լցրեց

197. և դրանք ամուր փաթեթավորեց ոսկու փոշիով,
199. և բարձեց լեռնային էշերին արկղերով:
200. Պետք է կառուցի ինձ համար Շումերի երիտասարդ
Էնիլը,
201. Նուդիմուդի կողմից ընտրված իր սուրբ սրտում:
202. Փայլուն զորությունների լեռը
203. թո՛ղ որ դարձնեն այն շքեղ, ինչպես շիմշատի ծառը,
204. թո՛ղ նրա եղջյուրները փայլեն այնպես, ինչպես
Արեգակն է դուրս գալիս իր պալատից,
205. թո՛ղ նրանց դռան սյուները փայլեն:
206. Նրա պալատում սուրբ երգը՝ կախարդանքը,
207. երգի՛ր նրան ինձ համար Նուդիմուդի կախարդանքը:
208. Հիմա, երբ ինչ որ կամենաս, ինձ կպատասխանես:
209. Փայլուն մորուք ունեցողի ժառանգին՝
210. նրան, ում հզոր կովը ծնեց փայլուն զորության բլրի վրա,
211. նրան, ով մեծացել է Արատտայի հողի վրա,
212. նրան, ով ծծում էր իսկական կովի ծծակը,
213. նրան, որը հարմար է պաշտոնի համար Կուլաբում, մեծ
ուժի սարում,
214. Արեգակի որդի Էնմերքարին
218. Երբ նա այսպես խոսեց նրա հետ (Արատտայի տերը
պատասխանեց)՝
219. «Սուրհանդա՛կ, դիմի՛ր քո արքային՝ Կուլաբայիի տիրոջը,
և ասա նրան.
220. Ես եմ, լինելով մաքրման տերը,
221. Ես եմ երկնքի մեծ պարանոցը, Երկնքի և Երկրի թագու-
հին:
222. Բազմաթիվ զորությունների աստվածուհի Սուրբ Իննա-
նան
223. բերված Արատտա՛ն անձեռնմխելի տերությունների լեռը՝
224. Ես, որին նա կանգնեցրեց, փակեց լեռնաշխարհի մուտ-
քը որպես մեծ դուռ:

225. Այդ դեպքում ինչո՞ւ Արատտան պետք է ենթարկվի Ուրուկին:

226. Չի կարող լինել Արատտայի հանձնում Ուրուկին: Ասա՛ դա նրան»:

227. Սուրհանդակը պատասխանեց Արատտայի տիրոջը՝

228. «Երկնքի այս մեծ թագուհին, ով ունի սարսափելի գորություններ,

229. ով բնակվում է պայծառ լեռների գագաթներին,

230. ով այսպիսով զարդարում է լուսավոր լեռնային շառավիղը՝

231. դա իմ տերն ու թագավորն է, նրա ծառան,

232. ո՞վ է նրան նշանակել որպես Էանայի աստվածային թագուհի

233. ով Տեր, Արատտան կխոնարհվի խորը հնազանդության մեջ:

234. Այս նա խոստացել է աղյուսով կառուցված Կուլաբայում»:

.....
.....
.....

241. Նա ցլի նման բարձր բղավեց սուրհանդակին.

242. «Սուրհանդակ, խոսիր քո արքայի, տեր Կուլաբայի հետ և ասա.

243. Այս մեծ լեռնաշղթան MES-ծառ է, որը բարձրացել է դեպի երկինք:

244. Նրա արմատները ցանց են, նրա ճյուղերը՝ որոգայթ:

245. Դա մի թռչուն է, որի մագիլները նման են Անզու⁶⁴ արծվին,

⁶⁴ Անզուն շումերա-աքքադական դիցաբանության մեջ սովորաբար պատկերվում էր մագիլներով կանգնած երկու առյուծների վրա: Առասպելներում Անզուն հանդես է գալիս նաև որպես միջնորդ երկրային ու երկնային ոլորտների միջև, համապատասխանաբար, աստվածների ու մարդկանց միջև, տե՛ս վերը:

246. Իննանայի այս պատնեշը կատարելապես անթափանց է:
247. Նրա արծվի մագիլները ստիպում են լուսավոր լեռներին լցվել թշնամու արյունով:
248. Արատտայում կարող է լինել ողբ [և սով...],
249. Բայց ջուր են լցնում, ալյուր են ցողում:
250. Լեռնաշխարհում զոհաբերություններ և աղոթքներ են մատուցվում,
251. ընդամենը հինգ կամ տասը տղամարդով:
252. Ինչպե՞ս կարող էր Ուրուկի աշխարհագրորդ շարժվել Զուբի լեռան դեմ:
253. Քո արքան կարող է ցանկանալ զենքով դիմակայել ինձ,
254. բայց ես այլ տեսակի պայքար եմ ցանկանում:
255. Նա, ով չի հասկանում այս պայքարը, չի՛ հաղթի:
256. Ինչպես մի ցուլ, որը չգիտի մյուս ցուլի ուժը,
257. բայց նա, ով հասկանում է այս պայքարը, կհաղթի:
258. Ինչպես ցուլը, որն ընկալում է մյուս ցուլի ուժը՝
259. Հանդգնում է հրաժարվել այս պայքարից:
260. Ինչպես [...], մի բան, որին ոչ ոք չի կարող համընկնել՝
261. հանդգնում է նա հրաժարվել այս պայքարից:
262. Ուրիշ բան էլ կասեմ քեզ, ո՛վ սուրհանդակ
263. [Ես] կասեմ այն պարզ բառերով ... որպեսզի դուք կարողանաք հասկանալ այն
264. Էանայում՝ իր թաթերի վրա կռացած առյուծին,
265. այնտեղ բղավող ցուլին
266. Գիպարում՝ երիտասարդ MES-ծառի պես պտուղ տվող
267. քո արքային՝ Կուլաբայի տիրոջը, կրկնիր սա՛
268. այս լեռնաշղթան ռազմիկ է, բարձրահասակ և կատաղի՝
269. ինչպես Արևը, որը երեկոյան մայր է մտնում:
270. Նրա դեմքից կարծես արյուն է կաթում

271. Նաննայի⁶⁵ պես՝ վեհ երկնքում,
 272. կարծես նրա հոնքը ահավոր փայլ է կրում:
 273. Դա նման է անթափանց փայտի լեռներում:
 274. Քանի որ նա Արատտայի թագից է՝
 275. անխախտ տերությունների լեռան բարերար
 պահապանը՝
 276. Արատտային կպարտադրի երկնքի սուրբ պսակը:
 277. Ես անպայման կհայտարարեմ իմ գերակայությունը:
 278. Այժմ նա չի կարող հացահատիկ լցնել պարկերի մեջ,
 կամ սայլերի մեջ:
 279. Նա կարող է չունենալ այդ ցորենը որ տեղափոխի
 լեռներով,
 280. ոչ էլ ունենա աշխատողներ:
 281. Եթե նա կարողանար ցորենը լցնել ցանցերի մեջ
 282. և բեռներ այս ցանցերը բեռնարկղերի վրա՝
 283. իրենց կողքին պահեստաձիեր ունենալով,
 284. և եթե նա կարողանար այն կուտակել Արատտայի
 բակում:
 285. Իսկապես, եթե նա կարողանար այն դիզել այս կերպ,
 ապա հացահատիկի կույտի ուրախությունը,
 286. լեռների ջահը, բնակավայրերի խորհրդանիշը,
 287. յոթ պատերի զարդը՝
 288. Հերոս Տիրուհին, որը հարմար է մարտի համար:
 289. Ինաննան՝ մարտադաշտի հերոսուհին, ով ստիպում է
 զորքին պարել նրա պարը:
 290. Այդ դեպքում իսկապես Արատտային դուրս կհանեմ
 որպես դիակ ուտող շան:

⁶⁵ Նաննան շումերական դիցաբանության մեջ Լուսնի աստվածն է: Նա էնլիլի և Նինլիլի որդին է, որը նույնացվում է սեմական Սին աստվածության հետ: Կենտրոնական պաշտամունքի վայրերը Միջագետքի հարավում գտնվող Ուր քաղաքում էր, իսկ հյուսիսում՝ Խարրան քաղաքում, տե՛ս **Black, Green 2004**: 135:

291. Միայն այդ դեպքում ես ծնկի կիջնեմ նրա առաջ:
292. Միայն այդ ժամանակ նա կապացուցի իր գերակայությունը:
293. Եվ, ինչպես քաղաքը, միայն այդ դեպքում ես կընդունեմ իմ թերարժեքությունը, - ասա նրան դա՛»:
294. Երբ նա խոսեց նրա հետ այս ձևով,
295. Արատտայի տերը սուրհանդակին ստիպեց
296. կրկնել պատգամը այնպես, ինչպես ինքն է ասել:
298. Ինչպես ավազի ճանճը, նա սլացավ առաջ գով առավոտյան:
297. Սուրհանդակը շրջվեց, ինչպես վայրի կովն է անում իր ոտքերի վրա,
299. Ուրախությամբ նա մտավ Կուլաբա:
300. Սուրհանդակը արագ գնաց դեպի մեծ բակը, գահասենյակի բակը՝
301. դեպի իր արքան՝ Կուլաբայի տիրակալին
302. նա բառ առ բառ կրկնեց (պատգամը)՝
303. նա բղավեց ցլի պես:
304. Եվ էնմերքարը նրան լսում էր եզների առաջնորդողի պես:
305. Արքան նրան հրամայեց նստել իր աջ կողմում ...,
306. և ձախ կողմը դարձրեց դեպի իրեն:
307. «Արատտան իրո՞ք հասկանում է իր արած այս առաջարկը, - ասաց նա»:
308. Երբ օրը բացվեց, դեպի ծագող Արևը,
309. երկրի Արևը բարձրացրեց գլուխը՝
310. արքան միացրեց Տիգրիսը Եփրատի հետ,
311. և Եփրատը Տիգրիսի հետ:
312. Խոշոր սափորները դրվեցին բաց,
313. և նրանց կողքերին դրված էին փոքրիկ ծաղկամաններ, ինչպես գառները պառկած խոտերի մեջ:
314. Դրանց կողքին բացօթյա փայլուն կարասներ էին դրված:

315. Արքան ինքը դրեց ոսկե անոթները:
316. Ինքը՝ Էնմերքարը՝ Արևի որդի, դրանք իրարից հեռու տեղավորեց,
317. այնուհետև կավե փայլուն տախտակը, ժողովի սրած եղեգը:
318. Ոսկե արծանը, որը ձևավորվել է երանելի օրը:
319. Արդար Նանիբգալ⁶⁶, մեծացած փայլուն շքեղությամբ:
320. Նիսաբա, լայն հասկացողությամբ տիկին:
321. Նրա համար բացեց իր սուրբ իմաստության տունը,
322. մտնելով դրախտային պալատ՝ ուշադրություն դարձրեց,
323. Տերը բացեց իր վեհ շտեմարանը
324. և ամրացրեց իր չափը երկրի վրա:
325. Արքան առանձնացրեց հին հացահատիկը (մյուս) հացահատիկից:
326. Նա թրջում է ամբողջ կանաչ ածիկը,
327. նրա բողբոջները ... երկարացան, ինչպես իրին-բույսը:
328. Եվ այսպես, նա նեղացրեց ցանցերի անցքերը:
329. Նա ցանցերը լցրեց ցորենի կույտերի համար, և ավելացրեց որոշները մորեխի ատամի համար:
330. Նա բեռնեց այն բեռնարկղերի վրա
331. և իրենց կողքին պահեստաձիեր տեղավորեց:
332. Արքան, լայն հասկացողության տեր,
333. Ուրուկի տերը, Կուլաբայի տերը՝
334. նրանց անմիջապես ուղարկեց Արատտա:
335. Նա ստիպեց մարդկանց ինքնուրույն գնալ Արատտա, ինչպես մրջյունները իրենց ճեղքերից:

⁶⁶ Նանիբգալ (նաև Նիսաբան) շումերական աստվածուհի է, գրի և գիտության հովանավորը՝ աստվածների գրագիրը: Ժամանակի ընթացքում աստվածուհու պարտականությունները ընդլայնվեցին. բացի գրելուց և գիտությունից, Նիսաբան դարձավ նաև իմաստության ու ճարտարապետության աստվածուհին: Նրա պաշտամունքի կենտրոնը գտնվում էր Ումմա քաղաքում, տե՛ս **Black, Green 2004**: 143:

336. Տերը դարձյալ հրահանգներ ավելացրեց Արատտա գնացող սուրհանդակին ...

.....
.....
.....
.....

339. Սուրհանդակ, խոսիր Արատտայի տիրոջ հետ և ասա.

340. «Իմ գավազանի հիմքը գերիշխանության զորությունն է,

341. նրա թագը պաշտպանիչ ստվեր է ապահովում Կուլաբայի համար,

342. նրա աստղանման ճյուղերի տակ էանա սրբավայրում

343. Սուրբ Իննանան գտնում է իր զովացուցիչ թարմությունը:

344. Եթե նա կարող է գավազան կտրել դրանից, թող բռնի այն իր ձեռքում.

345. թո՛ղ բռնի այն իր ձեռքում, ինչպես կարնելիի և լաջ-վարդի ուլունքների շարանը,

346. թո՛ղ Արատտայի տերը դա ինձ մոտ բերի, – ասա նրան դա»:

347. Այն բանից հետո, երբ էնմերքարը խոսեց նրա հետ այս ձևով,

348. սուրհանդակը Արատտա գնալիս,

349. ոտքերը մտցրեց ճանապարհի փոշու մեջ:

350. Նա ստիպեց, որ բլուրների խճաքարերը դղրդան,

351. կարծես վիշապ լինեք, որը շրջում էր անապատով, և նրան կանգնեցնող չկար:

352. Երբ սուրհանդակը հասավ Արատտա,

353. արատտացիները

354. վազելով եկան զարմանալու բեռնարկղերով:

355. Արատտայի բակում

356. սուրհանդակը դիզեց ցորենի կույտերը՝ ավելացնելով որոշները մորեխի ատամի համար,

357. ասես դրախտի անձրևներից ու արևից՝

358. Արատտան լցվեց առատությամբ:
359. Ինչպես, երբ աստվածները վերադառնում են իրենց կացարանները՝
360. Արատտայի քաղցը հագեցվեց:
361. Արատտացիներն իրենց արտերը ծածկել են ջրով թրջված կանաչ ածիկով:
362. Դրանից հետո սուրհանդակները ու վաճառականները
....
366. Արատտայի քաղաքացիները ուշադրություն են դարձրել
[...]
367. Նա տվեց (բացահայտեց) հարցը Արատտային:
368. Այսպես, Արատտայում նրա ձեռքից [...]
369. Ուրուկի տիրոջը նա [...] իր ձեռքը:
.....
.....
.....
412. Երբ նա խոսեց այս ձևով՝
413. սուրհանդակը ցատկեց կառքի կապանքից արձակված քուռակի պես
414. նա վազում էր ցամաքած հողի վրա վազող անագերի պես,
415. նրա բերանը քամով լցնելով:
416. Նա ուղիղ շավիղ արեց, ինչպես երկարավուն ոչխարները կատաղած հարվածում են
417. (այլ) ոչխարների ուրախությամբ նա մտավ Կուլաբա՝ աղյուսով պատրաստված:
418. Իր արքային՝ Կուլաբի տիրակալին,
419. նա բառ առ բառ կրկնեց պատգամը:
420. Էնկին այժմ պատկերացում է տվել Էնմերքարին:
421. Տերը հրամայեց իր գլխավոր տնտեսին:
422. [Իր տանը]
423. Արքան վերցրեց մագոտ կաշվի [...],

424. կարծես փաթաթելով (դրա մեջ ինչ-որ բան) փաթաթեց
 ու նայեց:
425. Նա խոտաբույսերի պես խփեց մի թփով,
426. և լցրեց (զանգվածը) շողշողացող եղեգի մեջ:
427. Արևի լուսից նա այն բերեց ստվերի մեջ,
428. և ստվերից նա բերեց այն արևի լուսի ներքո:
429. Անցավ հինգ, գուցե տասը տարի,
430. և հետո նա կացնով ճեղքեց շողացող եղեգը:
431. Տերը հաճույքով նայեց դրան
432. և նրա զանգվածի վրա լցրեց նուրբ յուղ, յուղ լուսավոր
 լեռներից:
433. Սուրհանդակի ձեռքում, որը պետք է ճամփորդեր դեպի
 լեռները,
434. այնուհետև Տերը դրեց գավազանը:
435. Սուրհանդակի վագքը դեպի Արատտա
436. նման էր Ա-թոչունի բլուրների վրայով, ինչպես ճանճը (ի
 թռիչքը) փոշու վրայով:
437. Նա լողացող ծածանի պես թռավ լեռնաշխարհի վրայով
 և հասավ Արատտա:
438. Նա ուրախությամբ մտավ Արատտայի բակ
439. և գավազանը դրեց նրա մեջ...
440. Նա փայլեցրեց գավազանն ու լվաց:
441. Արատտայի տիրակալը կուրացավ գավազանից:
442. Նրա խցիկում, իր սուրբ սենյակում՝ վախից տապալված:
443. Տերը բացականչեց իր šatam⁶⁷ պաշտոնյային.
444. «Իսկապես, Արատտան նման է ցրված մաքիների, նրա
 ճանապարհն այժմ ապստամբների ճանապարհն է:
445. Սուրբ Իննանան հիմա հանձնել է՝
446. հզոր Արատտան Կուլաբայի տիրոջը:

⁶⁷ Աքքադերենից թարգմանաբար նշանակում է «գլխավոր հաշվապահ»,
 շումերերենից՝ «վարչակազմի պաշտոնյա»:

447. Այդ մարդու վրա, որն ուղարկեց իր սուրհանդակին կրկնել այն՝

448. պատգամը արևի լույսի պես պարզ դարձնելու համար:

449. Սուրբ Ինանան հիմա կարծես բարեհաճությամբ է նայում՝

450. Արատտայի այս թշվառությունը ո՞ր կտանի մեզ:

451. Մինչև ե՞րբ այս լուծը տանելի կդառնա,

452. պե՞տք է մենք այս սարսափելի սովի պատճառով

453. սողանք Կուլաբայի տիրոջ առաջ:

454. Արատտայի տերը վստահեց սուրհանդակին

455. մի պատգամ, կարևոր ինչպես հուշատախտակը:

.....
.....
.....

500. Նրա խոսքը բովանդակալից էր, իսկ իմաստը՝ շատ խորը:

501. Սուրհանդակի բերանը ծանրացել էր, և չկարողացավ կրկնել դա:

502. Քանի որ սուրհանդակի բերանը չափազանց ծանրացել էր, և նա չէր կարող,

503. Կուլաբայի տերը մի կավ շոյեց և գրեց պատգամը հուշատախտակի վրա:

504. Մինչև այդ օրը կավի վրա ոչ մի բառ չէր գրվում,

505. բայց հիմա, երբ արևը ծագեց այդ օրը, այդպես եղավ.

506. Կուլաբի տերը հուշատախտակի նման մակագրել է պատգամը, դա հենց այդպես էր.

507. Սուրհանդակը նման էր թևերը թափահարող թռչունի,

508. կատաղած, ինչպես գայլը հետապնդում է ուլիկին,

509. անցավ հինգ, վեց, յոթ լեռնաշղթաներ:

510. Գլուխը բարձրացնելով՝ հասել էր Արատտա:

511. Նա ուրախությամբ մտավ Արատտայի բակ

512. և հռչակեց իր թագավորի գերակայությունը:

513. Նա խոսեց այն, ինչ կար իր սրտում,
514. և փոխանցեց Արատտայի տիրոջը:
518. Ահա թե ինչ է ասել իմ տերը, սա է ասել:
519. Իմ թագավորը նման է բարձրահասակ MES-ճառի, Էնլիլի որդին:
520. Այս ծառն այնքան է բարձրացել, որ կապում է երկինքն ու երկիրը,
521. նրա պսակը հասնում է երկինք,
522. նրա արմատները՝ երկրի վրա:
523. Նա, ով ցույց է տվել տերություն և թագավորություն,
524. Արևի որդի Էնմերքարը ինձ տվեց այս հուշատախտակը:
525. Ով Արատտայի տեր, երբ կարդացիր այս հուշատախտակը, իմացար պատգամի էությունը,
526. հիմա, երբ ինչ որ կամենաս, ինձ կպատասխանես՝
527. փայլուն մորուք ունեցողի ժառանգին:
528. Նրան, ում հզոր կովը ծնեց փայլուն զորության բլրի վրա,
529. նրան, ով մեծացել է Արատտայի հողի վրա,
530. նրան, ում ծծում էր իսկական կովի ծծակը,
531. նրան, ում հարմար է պաշտոնի համար Կուլաբում, մեծ ուժի սարում,
532. Արեգակի որդի Էնմերքարին
533. այդ բառը որպես ուրախ լուր կասեմ Էանա սրբավայրում:
534. Գիպարում, երիտասարդ MES-ճառի պես պտուղ տալով,
535. ես դա կկրկնեմ իմ թագավորին՝ Կուլաբայի տիրոջը՝
536. սա ասելով:
537. Արրատտայի տերը սուրհանդակից վերցրեց
538. հուշատախտակը (և պահեց այն) կրակարանի կողքին:
539. Արատտայի տերը ստուգեց հուշատախտակը:
540. Ասված խոսքերը սոսկ սեպ էին. նրա ունքը արտահայտեց զայրույթ:

541. Արատտայի տերը շարունակում էր նայել հուշատախտակին ... (լույսի տակ) կրակարանի:
542. Այդ պահին սուրբ թագին արժանի տերը՝ էնլիլի որդին՝
543. Իշկուրը⁶⁸, որոտաց երկնքում և երկրի վրա:
544. Փոթորիկ, որը նա առաջացրեց՝ մոլեգնելով մեծ առյուծի պես:
545. Նա ստիպեց լեռնաշխարհը ցնցվել,
546. նա ցնցեց սարալանջերը:
547. Հիասքանչ փայլը ... նրա կրծքի ...
548. Նա ստեղծեց լեռնաշխարհը:
549. Արատտայի ցամաքած թևը սարերի մեջ, բարձրացրո՛ւ իր ձայնը ուրախությամբ:
550. Յորենը սկսեց ինքնուրույն աճել, և սիսեռը նույնպես:
551. Ինքնուրույն աճեցրած ցորենը՝ ամբարի մեջ ...
552. Նրանք բերեցին Արատտայի տիրոջ համար,
553. և նրա առաջ նրանք կուտակեցին այն Արատտայի բակում:
554. Արատտայի տերը նայեց ցորենին.
555. Սուրհանդակը զարմացած նայեց, նա ...
556. Արատտայի տերը աղաղակեց սուրհանդակին:
557. Իր մեծության մեջ է Իննանան՝ բոլոր երկրների տիկինը,
558. դեռևս չի լքել Արատտան՝ այն Ուրուկին հանձնելու համար:
559. Նա ոչ էլ լքեց իր էզագինան, որպեսզի այն հանձնի էանային:
560. Նա ոչ էլ լքեց փայլուն տերությունների լեռը, որպեսզի այն հանձնի Կուլաբային,
561. ոչ էլ նա լքեց իր քաղցր մահճակալը, որպեսզի այն հանձնի ծաղկավոր մահճակալին:

⁶⁸ Փոթորիկների ուժը մարմնավորող աստվածություն, համարժեք էր սեմական Ադադին, տե՛ս **Black, Green 2004**: 110f.:

562. Ոչ էլ նա քեց իր տիրոջ մաքրությունը՝ այն հանձնելու Ուրուկի և Կուլաբայի տիրոջը:
563. (Ընդհակառակը) Արատտայի աջ և ձախ եզրերը,
564. Իննանա, բոլոր երկրների տիկին,
565. պաշտպանում է նրանց, երբ հզոր ջրհեղեղ է բարձրանում:
566. Նրա ժողովուրդը տարբերվում է այլ մարդկանցից:
567. Նրանք Դումուզի ազգ են, որոնք ընտրվել են մյուս ազգերի մեջ,
568. Իննանայի սուրբ խոսքը հաստատող մեկը:
569. Ուրեմն թող հիմա Իմաստուն շունը և ... Դումուզին ... կողպվեն միմյանց հետ:
570. Արագ, արի, [իմ] երիտասարդ ...
571. Նրանք հաստատուն էին ջրհեղեղից առաջ:
572. Ջրհեղեղն անցնելուց հետո,
573. Իննանա, բոլոր երկրների տիկին,
574. Դումուզի հանդեպ ունեցած մեծ սիրուց ելնելով,
575. Կենաց ջուրը ցողեց նրանց վրա,
576. և երկիրը հնազանդեցրեց նրանց:
-
-
-
588. Իմաստուն կինը, երբ նա եկավ փայլող ուժերի լեռը,
589. նրա մոտ գնաց, ինչպես մի օրիորդ, որի ժամանակաշրջանը վերջացել է:
590. Նա աչքերը ներկեց կոլով,
591. նա հագավ շլացուցիչ սպիտակ խալաթ,
592. նա իրական թագը լուսնի լույսի պես փայլեցրեց,
593. նա դասավորել է [իր հյուսերը] նրա գլխին,
594. նա իր [ամուսնուն] էմերքարին նստեցրեց իր հետ գահին (և խոսեց).
595. «Երբ դու բարձրացնես...

596. [իսկապես,] Արատտայի համար մաքիներն ու նրանց գառները պիտի շատանան:
597. [Իսկապես,] Արատտայի համար այծերն ու նրանց ուլերը պիտի շատանան,
598. [իսկապես, Արատտայի համար] կովերն ու նրանց հորթերը պիտի շատանան:
599. [Իրոք, Արատտայի համար] ավանակի ծագերը և քուռակները պիտի շատանան:
600. Քանի որ Արատտայում հիմա կհամաձայնվեն,
601. նրանք կկուտակվեն ... կույտերով:
602. Այն առատությունը, որն իսկապես քոնն է,
603. երբ դուք [առևտուր] հիմնեք Արատտայի տիրոջ հետ,
604. նա կ[...]
605. նա արեց [...]
606. նա դուրս եկավ [...]
607. նա ճիշտ դրեց [...]
- 608 -610. [...]
611. Ինչն է հարմար [...]
612. [...] սրտի ilu-երգը⁶⁹ [...]
613. [...] ձեր առատությունը նրա [...] է անագ [...]
614. [...] Էնիլը ձեզ է շնորհել իմ [շքեղությունը] հայտնի:
615. [...] նրա հայրը պտղաբեր չէր, սերմ չէր արտադրում:
616. Էնիլ, բոլոր երկրների արքան,
617. այժմ սահմանել է առաջադրանքների այս կատարումը.
618. արատտացիները
619. իրենց խնդիրն է ոսկու և լաջվարդի առևտուրը,
620. և ոսկե մրգերի և պտղատու թփերի ձևավորումը:
621. Թզով ու խաղողով բեռնված... նրանք կդիզեն այս պտուղները մեծ կույտերի:
622. Նրանք պետք է փորեն անթերի լաջվարդի կտորներով,

⁶⁹ Միգուցե նկատի է առնվում աստվածային երգը (հեղ.):

623. քաղցր եղեգի պսակները պիտի հանեն,
624. իսկ Իննանայի՛ Էանայի տիկնոջ համար
625. դրանց կույտեր կդնեն Էանայի բակում:
626. Հիմա, իմ թագավոր՛, ես քեզ խորհուրդ կտամ, լսի՛ր իմ
խորհուրդը,
627. մի բառ կասեմ՝ լսի՛ր:
628. Օտար երկրից մարդ ընտրելով՝
629. Արատտայի ժողովուրդը
630. պիտի ասի՛ [...],
631. երբ ես գնամ այստեղից [այնտեղ]
632. իմ թագավորությունը աստղային տիկինը տվեց ինձ,
633. Գեստինանա⁷⁰ [...]
634. այդ քաղաքում [...]
635. փառատոնները չէին [...]
636. ամենօրյա [...]
637-639. [...] [...]

⁷⁰ Գեշտինանա, Նգեշտինանա, Գեշտինին – շումերական դիցաբանության աստվածուհի, Էնկիի և Նինհուրսագի դուստրը: Գեշտինանա նշանակում է «երկնքի որթափունկ» կամ «տերևավոր որթափունկ»: Հայտնի էր նաև «անապատի տիկին», «անդրաշխարհի տիկին» անուններով, տե՛ս Black, Green 2004: 88:

ԼՈՒԳԱԼԲԱՆԴԱՆ ԼԵՌՆԵՐԻ ԽԱՎԱՐՈՒՄ

«Լուգալբանդան լեռների խավարում» պատումը հայտնի է նաև «Լուգալբանդան և Խուռում լեռը» անվամբ: Պատումում նկարագրվում է, որ շումերական զորքի գլուխ անցած էնմերքարն արշավում է դեպի Արատտա: Արշավանքի մասնակիցների մեջ էր նաև Լուգալբանդան: Ճանապարհին, երբ զորքը հասնում է Զամուա (Լուլլուբի) երկիր, Լուգալբանդան մահացու հիվանդանում է: Թողնելով նրան այնտեղ՝ զորքը շարունակում է արշավանքը պայմանով, որ վերադարձին վերցնեն Լուգալբանդայի մարմինը և տանեն հայրենի երկիր: Այնուհետև պատմվում է, թե ինչպես է աստվածների ու գերբնական ուժերի օգնությամբ նա առողջանում և հասնում բանակին: Շումերական բանակը պաշարում է Արատտայի համանուն մայրաքաղաքը, սակայն մեկ տարի պաշարելով՝ չի կարողանում գրավել այն: Շումերական բանակը, չկարողանալով գրավել Արատտան, ի վերջո, պարտություն է կրում: Հավանաբար Արատտայի բանակը, հակահարձակման անցնելով, հասել է Շումեր:

Vanstiphout 2003: 99ff.

Գիտական տառադարձումը

1-19. Պատումի մուտքը: Նկարագրվում են Կուլաբա և Ուրուկ քաղաքներն ու աստվածների փառաբանումը:

20. ud-ba LUGAL-e IRI.KI-še₃ ^{gi^s}mi-tum na-ĝa₂-ĝa₂

21. EN-me-er-kar₂ DUMU ^dUTU-ra

22. ARATTA.KI KUR ME SIKIL-la-še₃ ĥar-ra-an zu na-an-ĝa₂-ĝa₂

23. ki-bal GUL.GUL-de₃ na-an-ĝin

24. EN-^re IRI-^la-ni zig₃-ga₁₄ ba-ni-ĝar

25. NIGIR KUR.KUR-ra si gu₃ ba-ni-ra

26. UNU.[KI] zig₃-ga LUGAL zu ba-ra-ed₂-e

27. KUL.ABA₄.KI zig₃-ga EN-me-kar₂-ra ĥe₂-us₂-e

28. UNU.KI zig₃-ga-bi a-ma-<ru>-kam
 29. KUL.ABA₄.KI zig₃-ga-bi AN DUNĜU ĝar-ra
 30. MURU₉-gin₇ KI ĥe₂-us₂-sa-ba
 31. 「SAHAR」[?] PEŠ.PEŠ-bi AN-e mu-un-ši-ib-us₂
 32. BURU₄.DUGUD^{MUŠEN} NUMUN saĝ-še₃ zi-zi-i-gin₇
 33. LU₂-ulu₃ zu-ne na-an-ni-pad₃-de₃
 34. ŠEŠ ŠEŠ-a-ne ĜIŠKIM na-an-ĝa₂-ĝa₂

-

 128. 「u₃」 TUKUM-bi ^dUTU ŠEŠ-me
 129. KI KUG KI KAL.KAL-la-aš gu₃ im-ma-an-de₂
 130. ĝiš-gen₆-ge-en-na-ka-na ki-us₂¹ ĥe₂-en-da-dah
 131. ud me-en-de₃ ARATTA.KI-ta i₃-re₇-a-me-en-de₃-en
 132. ad₆ ŠEŠ-me šeg₁₂ KUL.ABA₄.KI-še₃ ga-ba-ni-ib-kur₉-re-en-de₃-en

-

 251. ud-ba UNU.KI-ga LU₂ DILI-gin₇ EĜAR-bi-ir bi₂-ib-us₂
 252. muž zar-ra-gin₇ ĤUR.SAĜ-ta im-me-re-BAL.BAL
 253. IRI DANNA 1-am₃ am₃-da-ĝal₂-la-ba
 254. DIM.DIM-e ARATTA.KI-ka
 255. UNU.KI KUL.ABA₄.KI-bi ur₂ ba-an-dun-dun
 256. IRI-ta gi-BAR.BAR-re im-gin₇ im-šeĝ₃
 257. im-dug-ge im mu-a ĝin-na-gin₇
 258. BAD₃ ARATTA.KI-ka gu₃ nun-bi im-me
 259. ud ba-ZAL.ZAL ITI ba-sud-sud mu AMA-bi-ir ba-gi₄
 260. BURU₁₄ sig₇-ga an-na ba-e-a-ed₃-de₃
 261. a-šag₄-ga IGI ba-ab-ĥul ni₂ su-e bi₂-ib-us₂
 262. im-dug-ge im mu-a ĝan-na-gin₇
 263. KASKAL-la KI ba-ni-ib₂-u₂-us₂
 264. ^{ĜIŠ}U₂ĜIR₂ KUR-ra-ke₄ ka ba-ni-ib₂-KEŠ₂
 265. UŠUMGAL teš₂-bi mu-un-TAG.TAG-ge
 266. LU₂ IRI-še₃ du-u₃ nu-um-zu
 267. KUL.ABA₄.KI-še₃ du-u₃ saĝ nu-mu-da-ab-šum₂-mu
 268. šag₄-ba EN-me-er-kar₂ DUMU ^dUTU-ke₄
 269. ni₂ ba-ni-in-te zi ba-ni-in-ir za-pa-aĝ₂-bi ba-ni-in-BAD

270. LU₂ IRI-še₃ mu-un-gi₄-gi₄-a KI mu-ši-ki-ĝ₂-ki-ĝ₂
 271. KUL.ABA₄.KI-še₃ mu-un-gi₄-gi₄-a ki mu-ši-ki-ĝ₂-ki-ĝ₂
 272. LU₂ IRI-še₃ ĝa₂₆-e ga-ĝan nu-mu-un-na-ab-be₂
 273. KUL.ABA₄.KI-še₃ ĝa₂₆-e ga-ĝan nu-[┌]mu[└]-[un-na-ab]-[┌]be₂[└]
 274. UGNIM KUR.KUR-ra-ka[┌]mu[└]-[un-ed₂]
 275. LU₂ IRI-še₃ ĝa₂-e ga-ĝan nu-mu-[┌]na[└]-[ab-be₂]
 276. KUL.ABA₄.KI-še₃ ĝa₂-e ga-ĝan nu-mu-na-[┌]ab[└]-[be₂]
 277. ka-KEŠ₂ IGI bar-ra-ka mu-un-ed₂
 278. LU₂ IRI-še₃ ĝa₂-e ga-ĝan nu-mu-na-ab-be₂
 279. KUL.ABA₄.KI-še₃ ĝa₂-e ga-ĝan[┌]nu[└]-[mu-na-ab-be₂]
 280. 2.KAM-ma-še₃ UGNIM KUR.KUR-ra-ka mu-un- ed₂
 281. LU₂ IRI-še₃ ĝa₂-e ga-ĝan nu-mu-na-ab-be₂
 282. KUL.ABA₄.KI-še₃ ĝa₂-e ga-ĝan nu-[┌]mu[└]-[na-ab-be₂]
 283. ka-KEŠ₂ IGI bar-ra-ka mu-un- ed₂
 284. LUGAL-ban₃-da DILI-ni un-ĝa₂ mu-na-an-zig₃ gu₃ mu-na-de₂-e
 285. LUGAL-ĝa₂-e IRI-še₃ ga-ĝan LU₂ nam-mu-da-an-du
 286. KUL.ABA₄.KI-še₃ DILI-mu-ne ga-ĝin LU₂ nam-mu-da-an-du
 287. ud-da IRI-še₃ i₃-du-un LU₂ nu-mu-e-da-du-u₃
 289. ZI an-na ZI KI-a i₃-pad₃ me GAL.GAL KUL.ABA₄.KI-a šu-
 zu ba-ra-ba-ra-ed₂

-

 345. ĝi₆ sa₉-a ^{ĝi₃}BANŠUR KUG ^dINNANA-ke₄ nu-um-ma-teĝ-a-aš
 346. šig₄ KUL.ABA₄.KI-še₃ ĝiri₃ ħul₂-la mi-ni-in-gub
 347. NIN-a-ni KUG ^dINNANA-ke₄
 348. ša₃-da-ga-na mu-na-an-tuš
 349. i₃-gur₂ KI-a mu-na-ab-za
 350. su₈-ba ^dAMA.UŠUMGAL-an-na mu-na-ši-bar-gin₇
 351. KUG LUGAL-ban₃-da IGI mu-na-ši-bar-re
 352. DUMU-na EN ^dŠARA mu-na-de₂-a-gin₇
 353. KUG LUGAL-ban₃-da gu₃ mu-un-na-da-de₂-e
 354. ĝa₂-nu LUGAL-ban₃-da-mu
 355. IRI-ta a₂ aĝ₂-ĝa₂ a-na-aš mu-e-de₆
 356. ARATTA.KI DILI-zu-ne a-gin₇ im-da-ĝan-ne-en
 357. KUG LUGAL-ban₃-da mu-na-ni-ib-gi₄-gi₄
 358. ŠEŠ-zu a-na bi₂-in-dug₄ a-na bi₂-in-tah
 359. En-me-er-kar₂ DUMU ^dUTU-ke₄ a-na bi₂-in-dug₄ a-na bi₂-in-tah

360. KI ud-ba NIN₉ e₅-mu KUG ^dINNANA-ke₄
 361. KUR ŠUBA[?]-ta ŠAG₄ KUG-ga-ni-a ħe₂-em-ma-ni-pad₃-de₃
 362. ŠEG₁₂ KUL.ABA₄.KI-še₃ he₂-em-ma-ni-in-kur₉-re-en
 363. UNU.KI-e SUG ħe₂-me-am₃ a ħe₂-em-de₂-a
 364. BAR-rim₄ ħe₂-me-am₃ ^{ĠIŠ}ASAL ħe₂-mu₂-a
 365. ĠIŠ.GI ħe₂-me-am₃ GI SUMUN GI ĤENBUR ħe₂-mu₂-a
 366. ^dEN.KI LUGAL ERIDU.KI-ga-ke₄
 367. gi uš bi ha-ma-an-ze₂ a-bi ha-ma-an-uš₂
 368. mu NINNU-uš ħu-mu-du₃ mu NINNU-uš ħu-mu-di
 369. KI.EN.GI KI.URI NIĠIN₂-na-a-ba
 370. MAR.TU LU₂ še nu-zu ħu-mu-zig₃
 371. BAD₃ UNU.KI-ga GU MUŠEN-na-gin₇ EDIN-na ħe₂-ni-la₂-la₂
 372. i-da-la-ba ki-ġal₂-la-ba ħi-li-ġu₁₀ ba-til
 373. ab₂-ŠILAM AMAR-bi LA₂-a-gin₇ ERIN₂-mu mu-da-la₂
 374. DUMU AMA-ni-[ir] ĤUL GIG-ga IRI-ta ed₂-a-gin₇
 375. NIN₉ e₅-mu KUG ^dINNANA-ke₄
 376. šeg₁₂ KUL.ABA₄.KI-še₃ šu ma-ra-an-dag
 377. ud-da IRI-ni KI ħa-ba-an-aġ₂ ġa₂-a-ra ĤUL ħa-ba-an-GIG
 378. IRI ġa₂-da a-na-aš am₃-da-la₂-e
 379. ud-da IRI-ni ĤUL ħa-ba-an-GIG ġa₂-a-ra KI ħa-ba-an-aġ₂
 380. ġa₂-a IRI-da a-na-aš am₃-da-la₂-e-en
 381. NU.GIG-ge ANZU^{MUŠEN} AMAR-ra-gin₇
 382. ni₂-te-a-ni sag₂ um-ma-an-di¹
 383. BAR KUG-ga-ni-a um-ma-an-šub-be₂-en
 384. šig₄ KUL.ABA₄.KI-še₃ ħe₂-em-ma-ni-in-kur₉-re-en
 385. ġiš-gid₂-da-ġu₁₀ ud ne ba-an-de₆
 386. ^{kuš}E.IB₂.UR₂-mu ud ne e-ne ba-an-ZUR.ZUR-re
 387. NIN₉ e₅-ġu₁₀ KUG ^dINNANA-ra ur₅-gin₇ dug₄-mu-na-ab
 388. KUG ^dINNANA-ke₄ mu-na-ni-ib-gi₄-gi₄
 389. i₃-ne-eš₂ id₂ šen-na id₂ a šen-na-ka
 390. id₂ ^{KUŠ}UMMUD za-gin₃ ^dINNANA-ke₄
 391. KUN-ba PEŠ₁₀.PEŠ₁₀-ba u₂-sal-u₂-sal-ba
 392. SUĤUR.MAŠ.KU₆-e u₂-lal₃ i₃-gu₇-e
 393. KIĠ₂.TUR.KU₆-e ^{U2}I-li-a-nu-um KUR-ra i₃-gu₇-e
 394. ĠIŠ.ŠEŠ.KU₆ DIĠIR SUĤUR.MAŠ₂.KU₆-a-ke₄
 395. šag₄-ba a-ne ħul₂-la mu-un-e kun-bi mu-un-sud-e
 396. KUN ŠIKA ri-ba uš₂ KI KUG-ga im-mi-ib₂-us₂-e
 397. ĠIŠ.ŠINIG ma-da a-na me-a-bi

398. AMBAR-bi-a A ib₂-na₈-na₈
 399. DILI-bi i₃-du₃ DILI-bi i₃-du₃
 400. ĠIŠ.ŠINIG-e BAR-ta DILI-bi i₃-du₃
 401. EN-me-<er>-kar₂ DUMU^dUTU-ke₄
 402. ĠIŠ.ŠINIG-bi un-sag₃ ĠIŠ.BUNIĠ(SUG)-še₃ un-dim₂
 403. gi-uš KI KUG-ga ur₂-ba mi-ni-bu šu im-ma-an-ti
 404. ĠIŠ.ĠEŠ.KU₆ DIGĠIR SUĤUR.MAŠ₂.KU₆-a-ke₄ šag₄-ba u₃-ba-
 ra-ed₂-a
 405. ku₆-bi un-dab₅ un-šeġ₆ un-sud
 406. a₂-an-kar₂ a₂ me₃ ^dINNANA-ka u₃-bi₂-in-gu₇
 407. ERIN₂-na-ni šu-bi ħe₂-en-di-ni-ib-sud-sud
 408. zi ARATTA-ka ENGUR-ra ħe₂-ni-in-til
 409. IRI KUG DIM₂-bi KUG.DIM₂ u₃-bi₂-in-dab₅
 410. za DIM₂-ma-bi za-DIM₂ u₃-bi₂-in-dab₅
 411. IRI-da u₃-GIBIL-la₂ um-ma-an-di-ni-ib-ġar-ġar
 412. ARATTA.KI AGARIN₄.AGARIN₄-ba šu ħu-mu-na-NIĠIN
 413. ARATTA.KI ZAG-ed₂-bi ^{NA4}ZA-gin₃ DUR₅-ru-am₃
 414. BAD₃-bi SIG₄ SAĠ zi-bi ħuš-am₃
 415. im-bi im NAGGA
 416. KUR ħa-šu-ur₂-ra-ta im-kid₂-a
 417. KUG LUGAL-ban₃-da za₃-mi₂

Թարգմանություն

- 1-19. Պարտումի մուտքը: Նկարագրվում են Կուլաբա և Ուրուկ քաղաքներն ու աստվածների փառաբանումը:
 20. Այդ օրերին արքան մի քաղաք նվաճելու մտադրություն ուներ,
 21. Արևի որդի էնմերքարը
 22. արշավեց Արատտայի՝ անմատչելի լեռնային երկրի դեմ:
 23. Նա կգնար և կկործաներ ապստամբների երկիրը:
 24. Տերը կանչեց իր քաղաքացիներին,
 25. սուրհանդակը բոլոր երկրներում շշակ հնչեցրեց:
 26. Ուրուկի աշխարհագրը դուրս եկավ ամենախմաստուն արքայի հետ:
 27. Կուլաբայի աշխարհագրը հետևեց էնմերքարին:

- 28. Ուրուկի աշխարհագրորդ ամպրոպաբեր ամպ էր:
- 29. Կուլաբայի աշխարհագրորդ ամպրոպաբեր ամպ էր,
- 30. որը թանձր մառախուղի պես գրկել էր Երկիրը,
- 31. նրանց թանձր փոշին հասավ Երկինք,
- 32. ինչպես մորեխը լավագույն սերմին:
- 33. Նա կանչեց իր ժողովրդին,
- 34. որ յուրաքանչյուրը նշան տա իր ընկերոջը:

.....

- 128. «Բայց եթե Արևը կանչի մեր եղբորը
- 129. սուրբ թանկագին վայր,
- 130. նրա վերջույթների ամբողջ ուժը կմնա այստեղ:
- 131. Երբ մենք հետո վերադառնանք Արատտայից,
- 132. մենք պետք է մեր եղբոր դիակը ետ բերենք աղյուսաշեն Կուլաբա»:

.....

- 251. Այնուհետև նրանք նորից հետևեցին (տանտիրոջը) Ունուգին որպես մեկ մարդ:
- 252. Նրանք իրենց ճանապարհը շրջում են բլրի վրայով, ինչպես օձը՝ հացահատիկի կույտի վրայով:
- 253. Երբ քաղաքը (Արատտան) ընդամենը մեկ լիգա⁷¹ էր հեռու
- 254. Արատտայի դիտաշտարակներից՝
- 255. Ուրուկը և Կուլաբան ճամբարեցին:
- 256. Քաղաքից տեղում էր նետեր, ինչպես անձրևն ամպերից:
- 257. Պարսատիկների քարերն անձրևի կաթիլների պես թափվում էին ամբողջ տարին,

⁷¹ Երկարության միավոր, մոտավորապես այն հեռավորությունը, որը մարդը կարող էր քայլել մեկ ժամում:

258. սուլում էին Արատտայի պարիսպներից:
259. Օրերն անցնում էին, ամիսները երկարում, տարին բոլորեց մի ամբողջ շրջան,
260. բերքը դեղնացավ երկնքի տակ:
261. Նրանք հուզված նայեցին դաշտերին, նրանք անհանգստացան:
262. Պարսատիկ բազմաթիվ քարեր, ինչպես անձրևի կաթիլները, թափվում էին ամբողջ տարվա ընթացքում,
263. շարունակվում էին ընկնել ճանապարհներին:
264. Լեռան փշերը պատել են նրանց,
265. վիշապները շրջապատել են նրանց:
266. Ոչ ոք չգիտեր, թե ինչպես վերադառնալ քաղաք,
267. ոչ ոք չէր կարող շտապ վերադառնալ Կուլաբա:
268. Նրանց մեջ Արևի որդի էնմերքարը
269. անդադար աղմուկից անհանգստացավ և հուսահատվեց:
270. Նա փնտրում էր ինչ-որ մեկին, ով կվերադառնա քաղաք,
271. նա փնտրում էր մեկին, ով կվերադառնա Կուլաբա,
272. բայց ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ քաղաք»,
273. ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ Կուլաբա»:
274. Նա գնաց օտար զորքերի մոտ,
275. բայց ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ քաղաք»,
276. ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ Կուլաբա»:
277. Նա գնաց գիդերի⁷² զորագնդի մոտ,
278. բայց ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ քաղաք»,
279. ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ Կուլաբա»:
280. Նա նորից գնաց օտար զորքերի մոտ,
281. բայց ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ քաղաք»,
282. ոչ ոք չասաց. «Ես կվերադառնամ Կուլաբա»:

⁷² Բառացիորեն «բաց աչքերի գունդը»: Տեքմինը նշանակում է «էլիտար զորքեր», տե՛ս **Vanstiphout 2003**: 164, ծնթ. 98:

283. Երբ նա նորից գնաց դեպի ուղեկցորդների գունդը,
284. Ամբոխի մեջ միայն Լուգալբանդան ոտքի կանգնեց և ասաց.
285. «Իմ արքա, ես կգնամ քաղաք, բայց ոչ ոք չի կարող ինձ հետ գալ:
286. Ես մենակ կգնամ Կուլաբա, ոչ ոք չի կարող ինձ հետ գալ»:
287. «Երբ դու գնաս քաղաք, ոչ ոք քեզ հետ չի գա⁷³:
288. «Երբ դու գնում ես Կուլաբ, ոչ ոք քեզ հետ չի գա»:
289. Նա (*Լուգալբանդան*) երդվեց երկնքի և երկրի կյանքով. «Իշխանությունը Կուլաբա՛, քեզնից չի փախչի»:
-
-
-
345. Նույն գիշերը, դեռևս երեկոյան ընթրիք չէին բերել Սուրբ Իննանայի համար,
346. նա ուրախությամբ ոտք դրեց աղյուսաշեն Կուլաբա:
347. Նրա տիկին Սուրբ Իննանան,
348. այնտեղ նստած էր իր բարձի վրա:
349. Նա կռացավ և խոնարհվեց նրա առաջ:
350. Ինչպես նա նայում էր հովիվ Ամառշումգալանային՝
351. նա նայեց Սուրբ Լուգալբանդային,
- 352 Ինչպես նա խոսում է իր որդու՝ Սառայի հետ,
353. նա խոսեց Սուրբ Լուգալբանդայի հետ.
354. «դե հիմա, իմ Լուգալբանդա,
355. ինչո՞ւ եք դուք քաղաքից լուրեր բերում,
356. ինչո՞ւ ես եկել Արատտայից միայնակ»:
357. Սուրբ Լուգալբանդան պատասխանեց.
358. «քո եղբայրը, ահա ինչ նա ասաց, ինչ նա խոսեց.
359. այսպես ասաց Արևի որդի Էնմերքարը, ինչ խոսեց.

⁷³ Պատասխանում է Էնմերքարը (հեղ.):

360. մի ժամանակ իմ ազնվական քույրը՝ Սուրբ Իննանան,
 361. իր լուսավոր լեռանից ընտրեց ինձ իր սուրբ սրտում,
 362. և ստիպեց ինձ մտնել Կուլաբա՝ աղյուսաշեն:
 363. Ուրուկն այն ժամանակ պարզապես ճահճոտ հոսող ջուր
 էր:
 364. Այնտեղ, որտեղ ցամաքը կար, Եփրատի բարդիները
 աճեցին,
 365. այնտեղ, որտեղ եղեգնուտ կար, հին ու երիտասարդ
 եղեգներ էին աճում:
 366. Էնկին՝ Էրիդուի արքան,
 367. ստիպեց ինձ պոկել հին եղեգները և ստիպեց ինձ
 ցամաքեցնել ջուրը:
 368. Հիսուն տարի կառուցում էի, հիսուն տարի աշխատում
 էի:
 369. Այսպիսով, հիմա, եթե ի վերջո ամբողջ Շումերում և
 Աքքադում՝
 370. Մարտուն⁷⁴, որ հաց չգիտի, պետք է վեր կենա:
 371. Այնտեղ կանգնած է Ուրուկի պարիսպը, որը տարածվում
 է անապատի վրայով, ինչպես թռչունների ցանցը,
 372. բայց այստեղ՝ այս վայրում, իմ իշխանությունը կարծես
 ավարտված է:
 373. Իմ զորքերը կապված են ինձ հետ, ինչպես հորթն իր
 մոր հետ:
 374. Այնուամենայնիվ, ինչպես մի երեխա, որն ատում է իր
 մորը և հեռանում քաղաքից:
 375. Իմ ազնվական քույր, սուրբ Իննանա,
 376. վազեցի դեպի Կուլաբա՝ աղյուսաշեն:
 377. Կարո՞ղ է նա սիրել իր քաղաքը, բայց ատել ինձ:
 378. Նա պետք է քաղաքը կապի ինձ հետ:
 379. Կարո՞ղ է նա ատել իր քաղաքը, բայց սիրել ինձ:

⁷⁴ Ամորեացիները (հեղ.):

380. Նա պետք է քաղաքը կապի ինձ հետ:
381. Եթե NU.GIG⁷⁵, ինչպես պատահեց Անզուի ճտի հետ,
382. մերժիր ինձ անձամբ,
383. և թո՛ւյլ տուր ինձ պահել նրա սուրբ սենյակը:
384. Թող նա գոնե ինձ վերադարձնի Կուլաբա՝ աղյուսաշեն:
385. Միայն այդ օրը իմ նիզակը մի կողմ կդրվի,
- 386 այդ օրը իմ վահանը կկոտրվի:
387. Այսպես խոսիր իմ ազնվական քրոջ՝ սուրբ Իննանայի հետ»:
388. Սուրբ Իննանան նրան պատասխանեց.
389. «Այսպիսով, մաքուր գետի վերջում, մաքուր ջրիոս,
390. գետը, որը Իննանայի փայլուն ջրային կաշին է,
391. որտեղ ափերում և ջրային մարգագետիններում
392. «SUHUR.MAŠ⁷⁶-ձուկն ուտում է մեղրախոտը,
393. KIN.TUR-ձուկը⁷⁷ վայրի կաղին է ուտում,
394. այնտեղ ĠIŠ.ĠEŠ⁷⁸-ձուկը՝ բոլոր SUHUR.MAŠ.-ձկների աստվածը,
395. ուրախ խաղում և ցատկում է՝
396. իր թեփուկավոր պոչով շոշափելով այդ սուրբ վայրի հին եղեգները:
397. Կարմրան⁷⁹ շատերը
398. ջուր էին քաշում այս լողավազանից:
399. Մեկը կանգնած է միայնակ, մեկը կանգնած է միայնակ:

⁷⁵ NU.GIG – սրբազան պոռնիկ, մարմնավաճառ, տե՛ս **Vanstiphout 2003:** 175:

⁷⁶ SUHUR.MAŠ – կենդանակերպի Այծեղջյուրի համաստեղության բաբելոնյան անվանումն է: Բառն աքքադերեն «այծ ձուկ», տե՛ս **Vanstiphout 2003:** 175:

⁷⁷ Անհայտ ձկան տեսակ, տե՛ս **Vanstiphout 2003:** 175:

⁷⁸ ĠIŠ.ĠEŠ – ըստ երևույթին առասպելական ձկան տեսակ, տե՛ս **Vanstiphout 2003:** 174:

⁷⁹ Կարմրան (Tamarix) – կարմրանզգիների տեսակին պատկանող ծառատեսակ՝ մոշա, մոշավայրի, տե՛ս **Ղազարյան 1981,** 48:

400. Մի կարմրան կանգնած է այնտեղ բոլորովին մենակ, կողքին (ավազանը):
401. Այժմ, երբ Արևի որդի էնմերքարը,
402. կտրել է այդ կարմրանը և դրանից դույլ է պատրաստել,
403. նա պետք է պոկի այդ սուրբ վայրի հին եղեգները և տանի դրանք հեռու:
404. Այսպիսով, երբ նա հետապնդում էր ĞİŞ.ĞEŞ-ձկանը՝ բոլոր SUHUR.MAŞ-ձկների աստծուն (այդ լողավազանից),
405. բռնեց, եփեց ու մատուցեց:
406. Եվ այսպես կերակրեց A.ANKARA⁸⁰, Իննանայի մարտական զորությանը,
407. այն ժամանակ նրա բանակը կհաջողի,
408. այդ դեպքում նա կկարողանա վերջ տալ կյանքի ուժին, որը Արատտան վերցնում է ստորգետնյա ջրերից:
409. Եթե նա քաղաքից տանի նրաց մշակած մետաղն ու դարբիններին,
410. եթե նա հանի մշակված քարերն ու ոսկերիչներին,
411. եթե նա վերանորոգի և վերաբնակեցնի քաղաքը,
412. Արատտայի բոլոր կաղապարները հավիտյան նրանը կլինեն:
413. Արատտայի ատամնավոր պարիսպները պատրաստված են կանաչավուն լաջվարդից,
414. նրա պարիսպն ու բարձրադիր աղյուսը վառ կարմիր են,
415. նրա աղյուսները թիթեղից են,
416. փորված են բլուրներում, որտեղ աճում են նոճիներ:
417. Փառք Սուրբ Լուգալբանդային:

⁸⁰ A.ANKARA – Իննանայի չնույնականացված զենքը, տե՛ս **Vanstiphout 2003: 173:**

ԳԻԼԳԱՄԵՇԸ ԵՎ ԽՈՒՎԱՎԱՆ

Շումերական հերոս-աստված Գիլգամեշին ծննված վիպերգերից «Գիլգամեշը և Խուվավան»⁸¹ կամ «Գիլգամեշը և անմահության երկիրը» միակ պատումն է⁸², որում հիշատակվում է Արատտա երկիրը: Բնագրի համաձայն՝ Գիլգամեշին «անմահության երկիր» հասնելու համար տրվում են «*դեպի Արատտա ճանապարհը ցույց տվող*» 7 ուղեցույց: Դրանից հետևում է, որ «անմահության երկիր» և Արատտա գնում են նույն ճանապարհով: Արատտային բազմիցս տրվում է «*սուրբ օրենքների երկիր*» պատվանուն-մակդիրը: Հայտնի են վիպերգի շուրջ մեկ տասնյակ տարբերակ ու պատճեններ:

Չնայած այն հանգամանքին, որ վիպերգի ամբողջական ու համահավաք տարբերակը պատումի «A տարբերակն» է՝ իր պատճեններով հանդերձ, որը կազմում է 202 տող⁸³: Ստորև մենք կներկայացնենք «Գիլգամեշը և Խուվավան» պատումի մոտ 174 տողից բաղկացած «B տարբերակը»՝ իր պատճեններով հանդերձ⁸⁴: Հենց այս վերջին տարբերակում է, որ առաջին անգամ հանդիպում է Արատտա անունը⁸⁵:

«Գիլգամեշ» էպոսի խթական տարբերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման Եփրատի հոսանքն ի վեր: Իսկ էպոսի բաբելոնյան (աքքադական) տարբերակում «անմահության ծաղկին» հասնելու ճանապարհին Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռները, որոնք վաղուց նույնացվել են Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիուս/Մասիոն լեռների հետ: Այսինքն՝ Արատտան գտնվել է Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ Մասիուս/Մասիոն լեռներից հյուսիս⁸⁶:

⁸¹ Վիպերգի աքքադական տարբերակում Խում/բաբա, տե՛ս **Hansman 1976, Edzard 1993: 8ff., George 1999: 144f.**:

⁸² Մանրամասն տե՛ս **Մովսիսյան 2005, 8, ծնթ. 3, 19-20:**

⁸³ Տե՛ս **Edzard 1991:**

⁸⁴ Տե՛ս **Edzard 1993:**

⁸⁵ Տե՛ս **Edzard 1993: 21:**

⁸⁶ Տե՛ս **Մովսիսյան 2005, 19-20:**

George 1999: 161-166, **Steiner 1996:** 187-215, **Edzard 1993:** 16-45, **Edzard 1991:** 165-233, **Kramer 1947:** 3-46, **Մովսիսյան 2005, № 2** (*հայերեն թարգմանությունը*):

Գիտական տառադարձումը

1. ì-a lum-lum ù-luh-ĥa-sù-sù
2. DUMU-gi₇ GIRI₁₁-zal-DIĜIR-re-e-n[e]
3. gu₄ LIPIS.TUKU mè-a gub-ba
4. EN.TUR^dGIŠ.BÍL-ga-mes UNU.KI-ta mí-du₁₁-g[a]
5. UNU.KI-ga lú ba-úš ur₅ ba-[s]àg
6. lú ú-gu ba-an-dé sà-ĥu[l i-gâ-g]á(?)
7. BÀD-da¹su²-ĝu₁₀ im-ma-an-[lá]
8. lú A.A ĩb-DIRI-ge₄ IGI im-mi-[(in-)sè-g]a-àm
9. ur₅ im-ma-úš šà im-m[a]-sàg
10. zà-nam-til-la saĝ im-gi₄-a
11. IRIGAL KUR-nam-gú-ga!? lú la-ba-an-TAG₄.TAG₄-a
12. sù-da KUR-ra la-ba-an g[ib-bé]-a
13. DAGAL-la KUR-ra la-ba-an-[šú-š]ú-a
14. zà ĜURUŠ til-la saĝ-til-la-bi-šè la-b[a-x-DUL.]DU-a
15. zi-AMA-UGU-ĝu₁₀^dNIN-sún-ka A.A-ĝ[u₁₀ kù^dL]UGAL-bàn-da
16. DIĜIR-ĝu₁₀^dEn! -ki! (ZU¹x x¹) EN^dN[u-dím]-mud-e
17. [.....] me [.....]-ta
18. [.....]
19. [..... š]ub?
20. [..] dù[?]-dù PA-bi-šè ga-àm-til
21. [... š]ub-ba [ga]-àm-mi-ib-ku₄
22. [IR₁₁ -da-ni En-ki-du₁₀-e g]ù mu-na-dé-e
23. [LUGAL-ĝu₁₁ TUKUMBI KUR-š]è i-in-ku₄-ku₄-dè-en
24. [^dUTU] ĥé-da-¹[an-zu]
25. [KUR] GLŠ.EREN! -ku₅!-šè i-in-ku₄-ku₄-dè-[en]
26. ^dUTU ĥé-da-an-zu
27. KUR-ra dím-ma-bi ^dUTU-kam
28. KU[R GLŠ.]eren-ku₅ dím-ma-bi šul dUTU-kam
29. ^dUTU-an-na-ke₄ mùš-za-gìn mu-un-kéš
30. saĝ-íl-la mu-un-du
31. ^dGIŠ.BÍL-ga-mes EN-Kul-ABA.KI-ke₄ šu-ni ĜIDRI-kù KÌRI-na ba-an-tab

32. ^dUTU KUR-šè i-in-ku₄-ku₄-dè-en h́e-me-en á-daḫ-ḡu₁₀
33. KUR-¹EREN-ku₅ i-in-ku₄-ku₄-dè-en ¹h́e¹-m[e-en] ¹á-daḫ-ḡu₁₀¹
34-37. [. . .]
38. [DIŠ-àm . . .]
39. [MIN-kam-ma . . .]
40. [EŠ₅-kam-ma . . .]
41. [LIMMU₅-kam-ma . . .]
42. [IÁ-kam-ma] [.] [. . . mu-u]n-tab-tab-e
43. [ÁŠ-kam-ma] e₄-ḡi₆-du₇-du₇-gim [KUR-r]a GABA ra-ra
44. ¹IMIN -kam¹-ma nim-gim ì-gír-gír-re ¹á¹-bi-¹šè¹ lú nu-ub-gur-e
45. e-ne-ne an-na mul-la-me-eš [k]i-a har-ra-an zu-me-eš
46. [a]n-na mul [.] íl-la-me-[eš]
47. ki-a KASKAL-ARATTA.K[I zu-me-eš]
48. DAM-GÀR-ra-[gim] ĜÌRI.BAL zu-me-eš
49. tu-MUŠEN-gim AB-[lál]-KUR-ra zu-[me-eš]
50. [má-ùr]-má-ùr-ḫur-saḡ-ḡá-ka h́e-mu-e-ni-túm-túm-mu-ne
51. [^dGIŠ.B]ÍL-ga-mes IRI-ni-a zi-ga [b]a-ni-ib-ḡar
52. [.] Kul-aba.KI-a si gù ba-ni-in-ra
53. IR[I D]AM-TUKU DAM zu!-šè DUMU-TUKU -zu-šè
54. ur-s[aḡ] zu ur-¹saḡ¹ nu-zu
55. DAM-nu-[T]UKU DUMU nu-TUKU
56. lú-r ur₅²-a lú ^dGIŠ.BÍL-ga-mes-da á-ḡu₁₀-šè ḫu-mu-un-ak-eš
57. LUGAL I[RI]-ta ba-ra-è
58. ^dGIŠ.BÍL-ga-mes Kul-aba.KI-ta ba-ra-è
59. KUR.GIŠ.EREN-ku₅-da ĜÌRI im-ma-ab-dab₅-bé
60. ḫur-saḡ-diš-e⁸⁷ in-TI-in-bal GIŠ.EREN šà-ga-ni nu-[mu-ni-i]n-pà
61. ḫur-saḡ-imin-kam-ma bal-e-da-ni GIŠ.EREN šà-ga-ni mu-ni-in-pà
62. ^dBÍL-ga-mes GIŠ.EREN-na al-sàg-ge
63. IR₁₁-da-ni En-ki-du₁₀-e PA mu-un-šì-ak-e
64. DUMU-IRI.KI-na mu-un-dè-re₇-eš-a
65. [g]u-ru-ma mu-ni-ib-gub-bu-ne
66. [U]D-bi-a ur-saḡ ur-saḡ-ra [ù-m]u-un-na-te
67. me-l[ám- . . .] šu-gur-gim i-im-t[e⁷]

⁸⁷ Տողի այլ տարբերակներում առկա վերականգնումների համար մանրամասն տե՛ս՝ Edzard 1993: 23:

103. [zi-AM]A-UGU-na(!) [^dNI]N-sún-ka ¹A¹.A-UGU-ĝá [k]ù
^dLUGAL-bàn-da
104. [DIĜIR-z]a ^dEn-ki [^dN]u-dím-mud-e [KA-za m]u-ni-in-[UD].DU
105. [u]r-saĝ KUR-ra tuš-a-z[u] ħé-zu-àm
106. [Ĝ]ĪRI.TUR.TUR-zu-us [KU]Š.e-sír-TUR.TUR [ħé-m]a-dím-
dím-ma-àm
107. [ĜĪRI.GAL].GAL-zu-uš [KUŠ.e-sí]r-GAL.GAL [ħé-m]a-dím-
dím-ma-àm
108. [.] KUR [. . .]-ku₄-ra
- 109-113. [. . .] [. . .]
114. [me-lám-diš-àm]
115. [mu-un-na-x]
116. [DUMU-IRI.KI-na] [mu-un-dè-re₇-eš-a]
117. [gu-ru-ma mu-ni-ib-gub-bu-ne]
118. [me-lám-MIN-kam-ma]
119. [me-lám-EŠ₅-kam-ma]
120. [me-lám-LIMMU₅-kam-ma]
121. [me-lám-ÍA-kam-ma]
122. [me-lám-ÀŠ-kam-ma]
- 122a. [gu-r]u-um-gu-ru-um hur-saĝ-ĝá m[u[?] -...-n]e[?]
123. [me-lám-IMIN-kam-ma] mu-un-na-[til-la-t]a da-ga-na ba-t[e]
124. da-ga-na ba-te ĜEŠTUG₁-a-ni ¹TIBIR¹ [b]í-in-ra
125. saĝ-ki mu-un-da-an-gur₅-uš su₁₁ mu-un-da-an-UD.UD
126. am-dab₅-ba-gim TÚG.BU.TÚG.NUN.TÚG.TU mu-ni-in-šub
127. ur-saĝ-dab₅-ba-gim á-mùš mu-ni-in-lá
128. ur-saĝ-e é[r i]m-ma-an-pà SIG₇.SIG₇ ì-ĝá-ĝá
129. Ĥu-wa-wa ér [im]-ma-an-pà SIG₇.SIG₇ ì-ĝá-ĝá
130. ur-saĝ-e lul [x x] [x] šu SI mu-ni-in-sá nam-ÉRIM mu-e-ni-ku₅
131. zi-AMA-[UGU-zu ^d]NIN-sún-ka A.A-zu kù ^dLugal-bàn-da
132. DIĜIR-[x ^dEn-ki dNu-d]ím-mud KA-za mu-e-ni-è
133. [am-dab₅-ba-gim] TÚG¹.BU.NUN.TÚG.TU mu-ni-sub
134. ur-saĝ-dab₅-ba-gim] á-mùš ba-ni-[. .]
135. [u₄-ba ^dGIŠ.BÍL-g]a-mes DUMU-gi₇-ra šà-ga-ni ARĤUŠ b[a-...]
136. ¹IR₁₁-da-na E¹n-ki-du₁₀-ra] gù mu-un-na-dé-¹e¹
137. ĝá-nam-ma ur-saĝ-ra šu ga-àm-bar-re-en-dèn
138. lú-zu-me ħé-a DÚR KASKAL-la IGI me-eb-du₈-dè-a lú-zu-me
ħé-a

- 138a. [...].-ba-ĝu₁₀ ĥé-a kilib-ĝu₁₀ ĥé-em-mi-íl-le
 139. IR₁₁-da-a-ni En-ki-du₁₀-e mu-un-na-ni-ib-g[i₄-g]i₄ [^dGIŠ.BÍ]L-ga-
 mes-e INIM m[u-u]n-na-ni-ib-gi₄-gi₄
 139a. [SUKUD.DU] DÍM-ma nu-TUKU
 140. ur-saĝ-dab₅-ba šu bar-ra-àm
 141. en-dab₅-ba ĝi₆-pàr-šè gur-ra-àm
 142. GUDU₄-dab₅-ba ĥi-li-šè gur-ra-àm
 143. u₄-ul-lí-a-ta a-ba-a IGI im-mi-in-du₈
 144. KASKAL-KUR-ra mu-e-dè-eb-x la x e
 145. ĜÌRI-KUR-ra mu-e-dè-eb-sùĥ-sùĥ-e
 146. ([IRI]-AMA-¹ù-tu)-da [nu-u]b-si-[.....]-dè-en-dè-en
 147-150. [.]
 151. [Ĥu-wa-wa] [...] -ra [mu-u]n-na-ni-i[b-gi₄-g]i₄
 152. AMA-tu-da-ĝu₁₀ ĥur-ru-um-KUR-ra
 153. A.A.-tu-da-ĝu₁₀ ĥur-ru-um-ĥur-saĝ-ĝá
 154. ^dUTU DILI-ĝu₁₀-ne KUR-ra mu-un-dè-en-tuš-en
 155. ^dBÍL₄-ga-mes ^dĤu-wa-wa-ra gù mu-un-na-dé-e
 156. [ĝá-n]am-ma [.....]-GÁ [.....]
 157. ĜÌRI KUR-ra mu-e-dé-eb-sùĥ-sùĥ-e
 158. [IRI] AMA [ù]-tud-da [nu]-[ub]-š¹-[x(x)]-dè-en-dè-en
 159-162. [.]
 163. [Ĥu-wa-wa ...]-ra [mu]-[un]-na-ni-[ib]-[gi₄]-[gi₄]
 164. AMA tud-da-ĝu₁₀ ĥur-ru-um KUR-ra
 165. A.A tud-da-ĝu₁₀ ĥur-ru-um ĥur-saĝ-ĝá
 166. ^dUTU DILI-ĝu₁₀-ne KUR-ra mu-un-dè-en-tuš-en
 167. ^dBÍL₄-ga-mes Ĥu-wa-wa-ra gù mu-un-na-dé-e
 168. [ĝá]-[nam]-ma [.....] GÁ [...]
 169-174. [.]

Թարգմանություն

1. Հեյ, դե ուրեմն եկ (դու) ամենագոր գորության գավազանի հերոսակիր,
2. աստվածների ազնիվ փառք:
3. Ջայրացած հզոր ցուլը կռվին պատրաստ կանգնած է մարտում,

4. Ուրուկի սիրելին՝ երիտասարդ տեր Գիլգամեշը,
5. Ուրուկում մարդիկ մահանում են, և հոգիները լի են տազնապով,
6. Մարդիկ կորել են, (և) դա սարսափեցնում է (ինձ):
7. Ես կռացա քաղաքի պատի վրա:
8. Մարդկային մարմինները լողում են ջրում. ես դա տեսա:
9. Որ մարդիկ այդպես են մահանում, ինձ հուսահատությամբ է լցնում:
10. Որ կյանքի վերջն անխուսափելի է,
11. որ գերեզմանը, բռնություն գործադրող «սարը» ոչ մեկին չի խնայի,
12. որ (անկախ նրանից, թե որքան) բարձրահասակ մարդը չի կարող պառկել «սարից» անդին,
13. որ (անկախ նրանից, թե որքան) գեր մարդը չի կարող պառկել «սարից» անդին,
14. այն սահմանը, որը մարդը մինչև իր կյանքի վերջը չի կարող գերազանցել՝
15. (ըստ) մորս՝ Նինսունայի, հորս՝ լուսավոր Լուգալբանդայի կյանքով⁸⁹,
16. իմ (սեփական) աստված Էնկին, տեր՝ Նուդիմուդը⁹⁰,
- 17-19. [. . .] [. . .]
20. [. . .] ես ուզում եմ ավարտել այնտեղ,
21. [. . .] [ուզում եմ] բերել այնտեղ»:
22. [Նրա ստրուկ Էնկիդուն⁹¹] ասաց նրան:

⁸⁹ Լուգալբանդան ու Նինսունը այս երգում Գիլգամեշի հայրն ու մայրն են, իսկ «Շումերական արքայացանկի» համաձայն՝ Լուգալբանդան և Գիլգամեշը Ուրուկի I հարստության երրորդ և հինգերորդ արքաներն են, տե՛ս **Մովսիսյան 2005**, 121, ծնթ. 2:

⁹⁰ Էնկիի մակդիրներից մեկը, տե՛ս **Black, Green 2004**: 75, **Vanstiphout 2003**: 175:

⁹¹ Աքքադական դյուցազնավեպում Էնկիդուն Գիլգամեշի ընկերն է և ոչ ստրուկը, տե՛ս **Մովսիսյան 2005**, 117, ծնթ. 1:

23. «[Տե՛ր իմ, եթե] ցանկանում ես ներխուժել [Լեռնային երկիր] (Անմահության երկիր),
24. թող որ [Ութուն] իմանա քեզնից,
25. (եթե) [դուք] ցանկանում եք մտնել [Լեռնային երկիր] «մայրիների» հատման անտառ,
26. թող որ Ութուն ձեզանից իմանա:
27. Լեռնային երկրի վերաբերյալ որոշումը Ութուի գործն է:
28. Լեռնայի երկիրը, ուր մայրիներ են հատում. երիտասարդ Ութուի որոշումն է»:
29. Ութուն երկնքում պսակել է իրեն լաջվարդե խույրով,
30. այսպիսով, նա եկավ գլուխը բարձր պահած:
31. Գիլգամեշը՝ Կուլաբայի տիրակալը, շողշողացող գավազան էր պահում քթի առաջ,
32. «Ով Ութու, ցանկանում եմ Լեռնային երկիր մեկնել, դու ինձ օգնական եղի՛ր,
33. ես ցանկանում եմ ներխուժել Լեռնային երկիր՝ մայրիների պուրակները, եղի՛ր իմ օգնականը»:
- 34-42. [. . .]
43. [Վեցերորդ] առաջ է մղում [Լեռները] գարնան մակընթացության պես, ինչպես Կրծքագեղձը,
44. Յոթերորդը կայծակի պես փայլում է, նրա բռնությունից ոչ մեկը չի կարող փախչել:
45. Սրանք այնտեղ՝ երկնքում, փայլում են, նրանք գիտեն երկրի ճանապարհը,
46. նա . . . երկնքում բարձրանում են:
47. Երկրի վրա [նրանք գիտեն] ուր գնալ Արատտայից⁹² հետո,
48. [ինչպես] վաճառականները, նրանք գիտեն անցուղիները,

⁹² Տեղորոշման համար տե՛ս Մովսիսյան 2005, 16-29, Մովսիսյան 1992:

49. աղավնիների նման նրանք գիտեն լեռների քարանձավները,
50. նրանք մեզ կուղեկցեն (°) լեռների կիրճերով:
51. Գիլգամեշն իր քաղաքում խռովություն կազմակերպեց,
52. [(...)]-ում... Կուլաբայում նա փող փչեց.
53. «(Դու) քաղաք, ով կին ունի՝ իր կնոջը, ով որդի ունի՝ որդուն,
54. ով որ ռազմիկ է, ով որ մարտիկ չէ,
55. ով կին չունի, չունի որդի:
56. Այսպիսի(°) մարդիկ իմ կողքին են կանգնել (արդեն այստեղ), որպեսզի Գիլգամեշին ուղեկցեն:
57. Արքան մեկնեց քաղաքից,
58. Գիլգամեշը մեկնեց Կուլաբայից,
59. որպեսզի լեռնային ճանապարհների տարածքներով ճանապարհեն դեպի մայրու անտառների երկիր:
60. Նա անցավ առաջին լեռնաշղթան⁹³. միտքը թույլ չէր տալիս, որ այնտեղ կգտնեն մայրիներ,
61. (բայց) հենց նա անցավ յոթերորդ լեռնաշղթան, հեռացավ նաև նրա միտքը, և նա գտավ «մայրիները»:
62. Գիլգամեշը հատում է «մայրին»:
63. Նրա ստրուկ էնկիդուն նրա համար ճյուղեր է կտրում:
64. Իր քաղաքի որդիները, որ գնացել էին նրա հետ՝
65. դասավորում էին դրանք (*մայրիները – հեղ.*):
66. Հետո, երբ մի մարտիկ մոտեցավ մյուսին,
67. Խուվավայի փայլը նիզակի պես եկավ (թռավ):
68. [. . .] . . . Նա հանգչում է խաղաղությամբ (°):
69. [Նա] քնում է, չի բարձրանում (°):
- 70-72. [. . .]
73. [. . .] խոսում է [նրա հետ (°)]:
74. «Դու պառկած ես այնտեղ], դու պառկած ես այնտեղ],

⁹³ Եվ այդպես յոթ լեռնաշղթա, տե՛ս **Edzard 1993**: 23:

75. Երիտասարդ տեր Գիլգամեշ, մինչև ե՞րբ եք պառկելու (որովհետև դեռ այնտեղ եք):
76. Լեռները շղարշվել են, ստվերը [իջել է նրանց վրա],
77. [Մթնշաղի] մթնշաղը նստել է նրա վրա(°)»:
78. Գիլգամեշը (Տեքստում՝ [Է]նկի[դուն]) արթնացավ երազից,
79. նա սարսափում էր քնից,
80. նա սրբեց աչքերը - լուռություն էր շուրջբոլորը:
81. «(Ըստ) մորս՝ Նինսունայի, հորս՝ լուսավոր Լուգալբանդայի կյանքով,
82. [իմ] (սեփական) աստված [Էնկի, Նուդիմմուդ . . .],
83. [. . .]
84. «Ես տեսա նրան (°), նա հանգստացնում է (ինձ)]:
85. Ռազմիկը, որի դեմքը կարծես առյուծի ծամածռություն լինի,
86. որի կուրծքը նման է սրընթաց ալիքի,
87. որիճակատին, նա եղեգ է ուտում, (և) ոչ ոք չի կարող մոտենալ,
88. որի լեզուն նման է մարդակեր առյուծի չի դադարում (լիզել (°)) մահացածներին.
89. ռազմիկի համեմատ՝ քեզ պակասում է (բավականին) ուժ, ո՞վ կարող է կանգնել նրա կողքին:
90. Նրա ստրուկ Էնկիդուն ասաց նրան.
- 91-92. [. . .]
93. «Մորս՝ Նինսունայի, հորս՝ լուսավոր Լուգալբանդայի կյանքով,
94. [իմ] (սեփական) աստված [Էնկի, Նուդիմմուդ . . .]:
95. Ռազմի՛կ, կցանկանայի իմանալ [որտե՞ղ ես ապրում] լեռներո՞ւմ:
96. Քո փոքրիկ ոտքերի համար նրանք իսկապես մեծ կոշիկ են պատրաստել,

97. [ծեր] մեծ ոտքերի համար [նրանք իսկապես ձեզ մեծ կոշիկներ են պատրաստել:
- 98-101. [. . .]
102. [. . .] խնդրում եմ, ես կցանկանայի ներս բերել (°):
103. Մորս՝ Նինսունայի, հորս՝ լուսավոր Լուգալբանդայի կյանքով,
104. իմ (սեփական) աստված [Էնկի, Նուդիմմուդ . . .]:
105. Ռազմի՛կ, կցանկանայի իմանալ որտեղ ես ապրում՝ լեռներո՞ւմ:
106. Ձեր փոքրիկ ոտքերի համար, [իսկապես] փոքր կոշիկներ ունի պատրաստած,
107. Ձեր մեծ [ոտքերի] համար նրանք [իսկապես] մեծ կոշիկներ ունեն պատրաստված:
- 108-114. [. . .]
115. [Տվեց (Խուվավային) նրան այնտեղ]:
116. [Նրա քաղաքի որդիները, որոնք գնացել էին նրա հետ],
117. [Դարսե՛ք դրանք (°)]:
118. [Երկրորդ փառքը],
119. [Երրորդ փառքը],
120. [չորրորդ փառքը],
121. [հինգերորդ փառքը],
122. [վեցերորդ փառքը],
- 122a. Շատ կույտեր լեռներում [. . .] դուք,
123. Երբ (Խուվավան) նրան տվեց յոթերորդ և [վերջին] շքեղությունը (Գիլգամեշը) գտնվում էր հենց (Խուվավա) կացարանի դիմաց:
124. Նա բռունցքով հարվածեց ականջին:
125. (Խուվավան) խոժոռվեց նրա վրա, մերկացրեց ատամները նրա դեմ:
126. (Գիլգամեշ) ինչպես դատապարտված վայրի ցուլ, պարան նետեց նրա վրա:

127. Նա արմունկները, ինչպես գերեվարված մարտիկի, կապեց:
128. Ռազմիկը սկսեց լաց լինել, մոխիր դարձավ,
129. Խուվավան սկսեց լաց լինել, մոխիր դարձավ.
130. «Ռազմի՛կ, դու ստեցիր, դու «խռովություն» արեցիր. դու (դեռ) երգվել էիր,
131. մորս՝ Նինսունայի, հորս՝ լուսավոր Լուգալբանդայի կյանքով,
132. իմ (սեփական) աստված [Էնկի, Նուդիմմուդ . . .]:
133. (Եվ հիմա) դու [ինչպես բռնված վայրի ցուլը] կապարե պարան գցեցիր ինձ (*տեքստում՝ նրա*) վրա,
134. [կապված] իմ (*տեքստում՝ նրան*) [ինչպես գերի ռազմիկ] արմունկները»:
135. [Այնուհետև Գիլգամեշի սիրտը խղճաց ազնվականին,
136. Նա ասաց իր ստրուկ Էնկիդուին.
137. «Դե՛, Ե՛կ ազատենք մարտիկին,
138. Թո՛ղ նա լինի մեր վստահելի անձը, լինի մեր վստահելի անձը ճանապարհների վրա եղող կողոպտիչներ համար, որոնք կարող են նկատել մեզ:
- 138a. Նա իմ [. . .] պետք է կրի իմ «կապոցները»:
139. Նրա ստրուկ Էնկիդուն պատասխանեց նրան. (ապա պատասխանեց [Գիլգամեշը])
- 139a. «[Այնքան] բարձր, ով որ հասկացողություն չունի,
140. Գերի ընկած ռազմիկը ազատվե՛լ է:
141. Գերի քրմուհին նոր վերադարձե՛լ է Գիպար:
142. Գերի «օծյալ քուրմը» վերադարձե՛լ է դեպի իր փառքը,
143. ո՛վ կտեսներ դա հին ժամանակներից:
144. Նա մեզ համար կփակի լեռների ճանապարհները (՞),
145. Լեռնաշխարհի արահետները մեզ կշփոթեցնե՛ն:
146. Մոր [քաղաք], ով ծնեց (մեզ) մենք [չենք վերադառնա]»:
- 147-150. [. . .]
151. [խուվավա]-ն պատասխանեց [.. .]-ին.

152. «Իմ մայրը, որը ծնեց (ինձ)՝ ամենախոր լեռն է,
153. իմ հայրը, որը ծնեց (ինձ)՝ լեռան հեռավոր անկյունն է,
154. Ութո՞ւ, թոյլ տուր, որ ես նրա հետ միայնակ «նստեմ»
սարերում»:
155. Գիլգամեշը խոսեց Խուվավայի հետ.
156. «Արի՛.....»:
Հաջորդիվ գողերը վնասված են և վերականգնելի չեն:

ԳԼՈՒԽ 2

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

Սուբուր երկրի առաջին հիշատակություններից է շումերական առաջին տիրակալներից Ադաբ քաղաքի հարստության արքա Լուգալ-Աննե-մունդուի (Lugal-an-ne₂ (կամ na)-mu-un-du₃ (կամ du) արձանագրության մեջ⁹⁴, որը հայագիտության մեջ առաջին անգամ է հատվածաբար և իր գիտական տառադարձմամբ հանդերձ թարգմանվել հայերեն:

Ըստ արձանագրության՝ Լուգալ-Աննե-մունդուն ջախջախում է 13 ապստամբ տիրակալներին ու նրանց առաջնորդ Մարխաշի էնսի⁹⁵ Միգիր-էնլիլին, ինչից հետո նա իր իշխանությունը հաստատում է Ջագրոսյան լեռներից մինչև Միջերկրական ծով ընկած տարածքում: Նրա ռազմարշավի ընթացքում նվաճվում և թալանվում, միգուցե նաև հարկատու է դառնում նաև Սուբարտու երկիրը: Արձանագրությունը հիմնականում վերաբերում է Մարխաշի գրավման, տաճարական համալիրի կառուցման ու բնակչության տեղահանությունների ու վերաբնակեցումների պատմությանը: Արձանագրության համատեքստից ակնհայտ է դառնում, որ վերոհիշյալ բոլոր երկրների՝ Մայրիների լեռների, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, Սուբարտուի, Սուտիումի, Էաննա լեռան տիրակալներն Ադաբի դեմ ռազմական խմբավորում են ստեղծել և եղել

⁹⁴ Տե՛ս **Ղազարյան, Ցականյան 2021a**: Հարկ է նշել նաև, որ Լուգալ-Աննե-մունդուի արձանագրությունը հայտնի է երկու պատճենների միջոցով, որոնք թվագրվում են հին բաբելական (Ք.ա. 1894-1595 թթ.) ժամանակաշրջանով (Աբի-էս/շուլի (Ք.ա. 1711-1684 թթ.) և մեզ են հասել Ամմիծադուկայի (Ք.ա. 1646-1626 թթ.) ժամանակներից: Տե՛ս նաև **Frayne 1998**: 31, **Jacobson 1939**: 102, ծնթ. 182, **Liverani 2014**: 112, **Gadd 1971**: 115, **Hallo, Simpson 1998**: 48ff.:

⁹⁵ Տիտղոսի վերաբերյալ տե՛ս **Ցականյան 2019**, 116-118:

նախահարձակ կողմը: Լուգալ-Աննե-մունդուն դաշնակիցներին դիմավորել է Ադաբի պատերի տակ և հաղթանակ տոնել, ինչից հետո, Ադաբի արքան ամենայն հավանականությամբ ազատ է արձակել դաշնակից տիրակալներին ու այլ գերիններին ամենամյա հարկ վճարելու պայմանով:

Հաջորդ հիշատակությունը պատկանում է շումերական Լագաշ քաղաք-պետության տիրակալ Էաննատումի ժամանակաշրջանին: Նրա կառավարման ժամանակահատվածում՝ Լագաշը տարածաշրջանում մղվող գերիշխանության համար պայքարում կարողացավ հաղթանակներ տանել Ուրուկի, Ուրի, Ումմայի, Քիշի, Ակշակի և շումերական այլ քաղաք-պետությունների նկատմամբ և իր գերիշխանությունը հաստատել ամբողջ Շումերում⁹⁶: Նա հաջող ռազմական գործողություններ է ձեռնարկում նաև Էլամի, Ակշակի, Մարիի ու Սուբարտուի դեմ⁹⁷:

Էաննատումն իր երեք արձանագրություններում հիշատակում է նաև դեպի Հայկական լեռնաշխարհի մատույցներ կատարած արշավանքի ու Սուբուր/Սուբարտու երկրի մասին⁹⁸:

⁹⁶ Տե՛ս **Gadd 1971**: 117-118:

⁹⁷ Տե՛ս **Frayne 1998**: E1.9.3.1.

⁹⁸ Տե՛ս **Ղազարյան, Ցականյան 2021b, Մովսիսյան 2005**, 32:

ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿԻՐԸ ԱԴԱԲԻ ԼՈՒԳԱԼ-ԱՆՆԵ-ՄՈՒՆԴՈՒԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ադաբի արքա Լուգալ-Աննե-մունդուի (Ք.ա. XXIV դար) արձանագրությունն ամենայն հավանականությամբ վերաբերում է կեղծ ինքնակենսագրական գրականության ժանրին: Լուգալ-Աննե-մունդուի արձանագրությունները հայտնի են երեք պատճենների միջոցով և պահպանվում են ԱՄՆ Ֆիլադելֆիա քաղաքի համալսարանի թանգարանում՝ Բաբելոնյան թանգարանի կատալոգում/բաժնում (*Catalogue of the Babylonian Museum/Section*)՝ **CBM/CBS** № 342, №474 (PBS 5, 75), և № 1217 (BE 6/2, 130).

Frayne 1998: E1.1.8, **Michalowski 1986:** 143f
f., **Civil 1979:** 93, **Ungnad 1936:** 31ff., **Poebel 1906:** 130, **Poebel 1909:** N 130, 123f., **Poebel 1914:** 75, **Ղազարյան, Ցականյան 2021a:**

Գիտական տառադարձումը

Դկ

Սյունակ I

1. ^dNIN.TU AMA KALAM-*ma* NIN E₂-*e* DAM GAL ^dEN.ILI₂.LA₂
NIN KI.AG₂.GA₂-*ni-ir*
2. LUGAL-*An-na-mu-un-du*₃ NITA KAL-GA
3. [u₂]-*a* NIBRU.KI LUGAL ADAB.KI-*a-me-en*
4. [LUGAL AN] UB.DA [...] LIMMU₂-*ba x?-x?-me-en*
5. SIPA? [...] *le-um-ma* GUR.GUR-*ru-dam*
6. GU₂ UG₃ KUR.KUR-*ra-ke*₄ *mi-ni-in-gi-na*
7. UG₃-*e* KUR.KUR-*ra u*₂-*sal-la mi-ni-in-nu*₂-*a*
8. E₂ DINGIR GAL.GAL-*e-ne mu-un-du*₃-*a*
9. KALAM.KI-*bi-še*₃ *mu-un-gi*₄-*a*
10. NAM.LUGAL KI-*šar*₂-*ra mu-un-ak-a*
11. u₄-*ba Mi-gir-^dEn-lil*₂ ENSI₂ Mar-□*a-ši.KI*
12. ^{D1S^d}En-lil₂-*ez-zu* ENSI₂ Ub?.KI

13. ^{DIŠ^d}Šeš-ke-e-el ENSI₂ Ke-e-el.KI
14. ^{DIŠ}Šu-^dA-nu-um ENSI₂ Ka₂-gal-la.KI
15. ^{DIŠ}[.....]-e-lum ENSI₂ Am-da-ma.KI
16. ^{DIŠ}I-bi-ma-ma ENSI₂ Ar-da-ma.KI
17. ^{DIŠ}Nu-ur₂-šu-E-li ENSI₂ A-[.....].KI
18. ^{DIŠ^d}IŠKUR-šar-rum ENSI₂ Na?-[.....].KI
19. ^{DIŠ}Ba-ad-ga-nu-um ENSI₂ Zi?-[.....].KI
20. ^{DIŠ}Zu-mur-ta-nu ENSI₂ [...].KI
21. ^{DIŠ}Ri-im-šu-nu ENSI₂ [...].KI
22. ^{DIŠ}A-bi-ḥa-ni-iš? ENSI₂ [...].KI
23. ^{DIŠ}X-bi-ma-ra-ad-[da] ENSI₂ [...] x.KI
24. 1.U 3.GIŠ ENSI₂-me-eš mu-x-[...]
25. [...] UD [.....] .
26. [...] Um x MU-il₂?
27. [...] x KI a₂ [.....]-eš-a
28. [.....]-ge?-eš-am₃
29. [.....]-NE
30. [.....]-bi mu-NE
31. [.....] ḥe₂-bi₂-du₃
32. [...] ḥe₂-em-mi-de₂?
33. [...] -em-[.....]
34. [...] x-ni-ba-ba
35. [.....] Gu-ti-um DAGAL-la-ke₄?
36. [.....] ZU₂.LUM.KI i-ni-DAB₅
37. [...] bi₂-tuš
38. [...] x i-ni-DAB₅.DAB₅
39. [...] mu-un-da-BALA-eš-am₃
40. [...] SU.BIR₄.KI-ke₄-ne
41. [...] -GUL.GUL
42. [...] -DAB₅
43. [...]

Անհայտ քանակի փողեր կորսված են:

ՀԿ.

Սյունակ I

28. IGI ^[d]NIN.TU-*ra-še*₃ [...]

29. SUKKAL.MAḪ KUR ^[GIŠ]ERIN-na ELAM.KI Mar-[ḫa-ši.KI] Gu-ti-um.KI [...] SU-BIR₄.[KI]
 30. Mar-tu Su-ti-um.[KI] [...] ⁹⁹
 31. LU₂ 1(GIŠ₂)-am₃ [...]
 32. 1(GIŠ₂) GU₄ NIGA-am₃ 7(DIŠ)? [...]
 33. ša₃ E₂.NAM.ZU-še₃ x [...]
 34. ZI.ŠA₃.GAL₂-la x [...]

Այրուհակ II

2. [...] LUGAL ADAB.[KI] xx
 3. [...] NAM.LUGAL AK.A.ME.EN
 4. [...] 6(ŠAR₂) GAN₂-am₃
 5. [...] bi₂-dab₅ ki-tuš i-bi₂-si
 6. [...] KI-e bi₂-sa₂ u₄ mi-ni-ib₂-zal-zal-e
 7. [...] e₂-eš₂-dam ba-ra-bi₂-in-gal₂-la
 8. [...] 3(BUR₃) GAN₂-am₃
 9. [...] x za u₂ giri₁₇-zal ba-u₃-nam
 10. [...] KUR ^[GIŠ]ERIN-na ELAM.KI Mar-[ḫa-ši.KI] Gu-ti-um.KI
 11. [...] x SU.BIR₄.KI Mar-tu Su-ti-um.KI. KUR E₂-an-na-bi
 12. [...] -da-ne-ne-a ^{GIŠ}GU.ZA KU₃.SIG₁₇.GA i₃-dur₂-dur₂-ru-ne-eš
 13. [...] KU₃.SIG₁₇.GA šu-ne-ne-a i-ni-in-gal₂
 14. [...] KU₃.SIG₁₇.GA dub₃-ne-ne-a i-ni-in-gal₂
 15. [...] x-a-bi ša₃ ADAB.KI ša₃ KA-mu-še₃ ḫu-mu-ni-in-DU-a
 16. [...] igi-mu-še₃ ḫu-mu-ni-in-DU-a
 17. [...] GISSU šar₂-ra ḫe₂?-bi₂-x
 18. [.]-la [.] x-bi x-zal-zal-la?
 19. x DU U₄ ul du₃-a-še₃
 20. x ^dEN.LIL₂-la₂ mu-un-zi-zi-a
 21. [...] x-la₂-bi ga₂-e a-gin₇-nam LUGAL si-sa₂-me-en
 22. [...] ki-šar₂-ra u₃ ma-da-bi mi-ni-in-gur-eš-am₃
 23. [...] ma-tum? xx ADAB.KI u₃ ma-da-bi iri-ni-še₃
 24. [...] mi-in-in-il₂-il₂
 25. [...] nam-bi₂-ib₂-tur-re
 26. [...] nam-ba-ab-gul-gul-e

⁹⁹ Ելնելով արձանագրության համատեքստից՝ վնասված տողում վստահաբար կարելի է վերականգնել «KUR E₂AN.NA.KI-bi» – «Հաննա լեռների», տե՛ս **Ղազարյան, Ցակախյան 2021a:**

27. EGIR?-bi ENSI₂ KUR^{GiS} ERIN-na ELAM.KI Mar-ḫa-ši.KI Gu-ti-um.KI SU.BIR3.KI Mar-tu Su-ti-um KUR E₂-an-na-bi-da
 28. gu₄ UDU! SISKUR₂ ga₂-ga₂-ra nu-ub-ku₅-da
 29. sa₂-du₁₁-bi ka-ka-na nu-ub-ku₅-da
 30. DINGIR.MAḪ NIN E₂.NAM.ZU.KE₄ NAM.TI.LA SAG.E.EŠ RIG₇.GA

Թարգմանություն

ԴԿ

Սյունակ I

1. Նինտի¹⁰⁰, ազգի մոր, տաճարի թագուհու, մեծ կնոջ՝
 Էնլիլիայի¹⁰¹, նրա սիրելի տիկնոջ համար
2. Ես՝ Լուգալաննմունդուս, ուժեղ մարդ,
3. որն ապահովում է Նիպպուրը, Ադաբի արքա
4. և աշխարհի չորս կողմերի արքա,
5. հովիվ (*), որը, որպեսզի ... վերադարձվեն տուրքի
 փաթեթները,
6. տուրք մատուցեց բոլոր երկրների ժողովուրդներին,
7. որը բոլոր երկրների բնակիչներին ստիպեց (գոհունակու-
 թյամբ) պառկել գետափնյա մարգագետիններում,
8. որը կառուցեց մեծ աստվածների տաճարները,
9. որն վերականգնեց երկիրը իր օրինական տեղում,
10. որն իր իշխանությունը տարածեց ամբողջ երկրի վրա:
11. Այդ ժամանակ Մարխաշի էնսի Միգիր-Էնլիլը,
12. Ուբի (*) էնսի Էնլիլ-էզզուն,
13. Կելի էնսի Շեշ-կելը,

¹⁰⁰ Շումերական մայր աստվածուհին՝ աստվածուհիներ ծնողը, տե՛ս **Black, Green 2004**: 142:

¹⁰¹ Էնլիլը միջագետքյան պանթեոնի ամենակարևոր աստվածներից մեկն է: Ըստ ավանդույթի՝ այլ աստվածներ նույնիսկ չէին կարողանում նայել նրան իր շքեղության ու փայլի պատճառով: Ըստ երևույթին, Ան աստծո սերունդն էր և Արուրու աստվածուհու եղբայրը: Էնլիլի պաշտամունքի մեծ կենտրոնը Նիպպուրում գտնվող E.KUR-ն («Լեռնային տուն») էր: Էնլիլը հաճախ կոչվում է «Մեծ լեռ» և «Օտար երկրների արքա», տե՛ս **Black, Green 2004**: 76:

14. Կագալլայի էնսի Շու-Անումը,
15. Ամդամայի էնսի ...-էլումը,
16. Արդամայի էնսի Իբբի-Մաման,
17. Ա-... (°) էնսի Նուրշու-էլին,
18. Նա-... (°) էնսի Իշկուր-շարրումը,
19. Ջի-... (°) էնսի Բադգանումը,
20. (°) էնսի Ջամուրտանուն
21. (°) էնսի Ռիմշունուն,
22. (°) էնսի Աբի-Խանիշը,
23. (°) էնսի X-բի-Մառադդան,
24. 13 էնսի էին, որոնք արեցին
25. xxxxxxxxxxxx
26. ... բարձրացել (°) ...
27. ... նրանք, ովքեր արեցին ...
28. Նրանք էին, որ արեցին...
29.
30.
31. ... Ես կառուցեցի այնտեղ,
32. և ... ես թափեցի (°) այնտեղ:
33.
34.
35. Ապա ... այն (ընդարձակ) Գուտիում
36. Ես վերցրի (գրավեցի°) ... Ջուլումում,
37. և ես բնակվեցի այնտեղ:
38. Շատ ... ես գրավեցի այնտեղ,
39. բայց (°) նրանք կարողացան անցնել ... նրա հետ:
40. Սուբիր
41. նրանք ոչնչացրին բոլոր ...
42. և գրավեցին ...
43. [...]

Անհայտ քանակի տողեր կորսված են:

ՀԿ

Սյունակ I

28. Նինտուից առաջ ...
29. Մայրու լեռան սուկկալմախները, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, Սուբարտուի,
30. Ամուրրուի, Սուտիումի և ...
31. 60 մարդ էին ...
32. դրանք հացահատիկով սնված 60 խոշոր եղջերավոր անասուններ էին, 7 ...
33. Էնամզուի կենտրոնում ...
34. աստվածային հովանավորությամբ ...

Սյունակ II

2. [...] Ադաբի արքան ...
3. ... Ես, ով իրականացնում է արքայական իշխանությունը:
4. [...] դա 360 BUR₃ դաշտ էր,
5. Ես նստեցի այնտեղ ..., և այնտեղ նստավայր դնելով,
6. Ես ամեն ինչ դրեցի իր տեղում ... այնտեղ և շատ ժամանակ էի անցկացնում այնտեղ:
7. Ես թույլ չտվեցի ... մնալ պանդոկներում:
8. ... դաշտի 3 BUR₃ տարածք
9. [...] փարթամ խոտաբույսեր ...
10. [...] Մայրու լեռան, Էլամի, Մարխաշի, Գուտիումի,
11. [...] Սուբարտուի, Ամուրրուի, Սուտիումի, և Էաննա լեռան (°),
12. իրենց ... նրանք նստել էին ոսկե գահերի վրա:
13. Ոսկի ... ես դրեցի նրանց ձեռքերում,
14. և ոսկե ... ես դրեցի նրանց ծնկներին:
15. Նրանց ... Ադաբում, իմ ... ես եկել էի,
16. և ... ես եկել էի ինձնից/իմ առաջ,
17. [...] շատ ստվերներ եմ ... այնտեղ:

18. Հետո (°) ... անցնելուց ...,
19. դեպի ... կառուցված բոլոր ապագա օրերի համար,
20. շատերը ... Էնիլից ես բարձրացա,
21. նրանց ..., որքա՞ն արդար արքա եմ ես,
22. [...] ամենուր, և իրենց երկիր ես վերադարձրի:
23. [...] երկիր (°) Ադաբի և նրա հողի վրա իր քաղաքը
24. [...] ես նպաստեցի/(ներս տարա):
25. [...] թո՛ղ նա չնվազեցնի/չկրճատի նրանց այնտեղ:
26. [...] թո՛ղ որ նա չոչնչացնի նրանց այնտեղ:
27. Հետագայում (°) Մայրու լեռան տիրակալներին, Էլամի, Մարխաշի, Գուտիումի, *Սուքարպուի*, Ամուրրուի, կամ Էաննա լեռան,
28. ով չի կտրում անասունների և ոչխարների հաստատված SISKUR₂-ընծաները,
29. ով իր բերանում չի կտրատում այդ սովորական դրույթները,
30. թո՛ղ Էնամզուի տաճարի տիրուհին՝ Դինգիրմախը¹⁰², կյանք պարգևի:

¹⁰² Շումերական մայր աստվածուհին՝ աստվածուհիներ ծնողը, տե՛ս **Black, Green 2004**: 66:

ՍՈՒԲՈՒՐ ԵՐԿԻՐԸ ԼԱԳԱՇԻ ԷԱՆԱՏՈՒՄ ԱՐՔԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սուբուր երկիրը առաջին անգամ հանդիպում է Լագաշի արքա Էաննատումի (Ք.ա. մոտ XXIV դար) արձանագրություններում, մասնավորապես հայտնի «*Անգղների կոթող*» արձանագրության մեջ: Այդտեղ արքան նկարագրում է իր կողմից կատարած ռազմաքաղաքական ու տնտեսական գործերի մասին: Նա նշում է նաև, որ նվաճել է բոլոր երկրները Էլամից մինչև Սուբուր¹⁰³:

Frayne 1998: E1.9.3.1, **Cooper 1983:** 13-14, 25-27, 45-47, **Cooper 1986:** 33-39, **Sollberger, Kupper 1971:** IC5a, **Barton 1929:** 22-33, **Ղազարյան, Ցականյան 2021b:** 97:

Գիտական տառադարձում

ՀԿ

Սյունակ V

42. É-an-na-túm

43. LUGAL-

44. LAGAŠ.KI

Սյունակ VI

10. NIM.KI ŠUBUR.^[K1]

11. kur GIŠ. NIG.GA

12. [GIN.ŠÈ bi-sè]

բացակայող հատված

¹⁰³ Այստեղ հետաքրքիր է, որ «Մինչ Սարգոնյան ժամանակահատվածի» արձանագրությունների իր հայտնի դիվանում Դ. Ռ. Ֆոայնը «ŠUBUR.^{K1}»-ին անդլերեն թարգմանում է Subartu՝ E1.9.3.1., p. 139:

ՀԿ

Սյունակ VII

1. [...]
2. G[IN.ŠÈ bi-sè]
3. Su-sín.^{KI}-na
4. GIN.ŠÈ bi-sè
5. šu-nir-URUxA.^{KI}-ka
6. énsi-bi
7. SAG mu-gub-ba»

Թարգմանություն

ՀԿ

Սյունակ V

42. Է-ան-նա-տում
43. արքան
44. Լագաշ երկրի

Սյունակ VI

10. Էլամն ու Սուբուրը՝
11. փայտանյութի ու գանձերի երկիրը,
12. նվաճեցի:

բացակայող հատված

Սյունակ VII

1. [...]
2. Նվաճեցի
3. Սուգան,
4. [ջախջախեցի]
- 5-6. Արավայի¹⁰⁴ տիրակալին, որը զինանշանի (քաղաքի) հետ
7. կանգնած էր առաջապահ դիրքերում....:

¹⁰⁴ Արձանագրության մեջ նշված է՝ «URUxA.^{KI}-ka»: Arawa-Արավա վերականգնումը՝ ըստ Դ. Ռ. Ֆռայնի:

Էաննատումի երկրորդ արձանագրության մեջ նշված է, որ նա ետ է մղել և դեպի իրենց երկրները հետ շարտել էլամցիներին ու Ակշակի տիրակալին:

Frayne 1998: E1.9.3.5, **Cooper 1983:** 25, **Cooper 1986:** 41-42, **Sollberger, Kupper 1971:** IC5b, **Barton 1929:** 33-35, **Ղազարյան, Յականյան 2021b:** 97-98:

Գիտական տառադարձում

Սյունակ VI

12. É-an-na-túm
13. ÈNSI-
14. LAGAŠ.^{KI}-ke₄
15. kur-gú-gar-gar-
16. ^dNin-gír-su!-ka-ke₄
17. NIM SUBUR.^{KI}
18. URUxA.^{KI}
19. A-suḫur-ta
20. GIN.ŠÈ bi-sè
21. KIŠ.^{KI} AKŠAK.^{KI}
22. Ma-rí!.^{KI}
23. An-ta-sur-ra- ...

Թարգմանություն

Սյունակ VI

12. Է-ան-նա-տումը՝
13. տիրակալը
14. Լագաշ երկրի
15. որը ենթարկեց օտար երկրները
16. Նինգիրսու աստծու համար
17. Էլամին, Շուբուրին
18. (և) Արավային
19. Ասուխուրում
20. ջախջախեց

21. Քիշին, Ակշակին
22. (և) Մարիին
23. Անտասուրայի մոտ ջախջախեց ...

Էաննատումի երրորդ արձանագրության մեջ հիշատակված են Լագաշի տիրակալի նվաճումները և Նինգիրսու աստծո համար Է-Տիրաշ տաճարի կառուցումը:

Frayne 1998: E1.9.3.7a, **Cooper 1986:** 43, **Barton 1929:** 36-39, **Ղազարյան, Ցականյան 2021b:** 98:

Գիտական տառադարձումը

Սյունակ I

1. [^dNin-gír-su-ra]
2. [É-an-na-tú]m
3. [ÈN]SI (PA.TE).SI-
4. [LAG]AŠ^{KI}] ([NU₁₁.BUR].LA).^[KI]-ke₄
5. [kur-gú-gar]-gar-

Սյունակ II

1. [^dNin-[gí]r-sú-ke₄
2. [NIM] ŠUBUR
3. [g]ú mu-na-gar

Թարգմանություն

Սյունակ I

1. [Նին-գիր-սուի պատվին]
2. [Է-ան-նա-տու]մը
3. [էն]սին
4. [Լագ]աշ [երկր]ի
5. [ով նվաճեց բոլոր օտ]ար երկրները:

Սյունակ II

1. Նին-[գի]ր-սուի

2. Էլամը և Սուբուրը
3. Ենթարկեց իրեն:

**ՈՒՐՈՒԿԻ ԱՐՔԱ ԼՈՒԳԱԼՉԱԳԵՍԻԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ուրուկի III հարստության արքա Լուգալզագեսին (Ք.ա. մոտ 2358-2334 թթ.) Աքքադի արքա Սարգոնից (Ք.ա. 2334-2279 թթ.) պարտություն կրելուց առաջ կարողացել էր իր իշխանության տակ միավորել շումերական քաղաք-պետությունները: Իր գործերի փառաբանության ընթացքում նա նշում է, որ հասել է մինչև Վերին ծով՝ Վանա լիճ:

Maeda 2005: 3ff., **Frayne 1998:** E1.14.20.1, **Cooper 1986:** 94f., **Sollberger, Kupper 1971:** 1H2b, **Barton 1929:** 96ff., **Մովսիսյան 2005,** № 3 (հայերեն թարգմանությունը):

Գիտական տառադարձումը

Սյունակ I

1. ^d*En-líl*
2. LUGAL-KUR-KUR-RA
3. LUGAL-*zà-ge-si*
4. LUGAL-UNU.KI-*ga*
5. LUGAL-KALAM-*ma*
-
36. *u₄ En-líl*
37. LUGAL-KUR-KUR-*ra-ke₄*
38. LUGAL-*zà-ge-si*
39. NAM-LUGAL-
40. KALAM-*ma*
41. *e-na-sum-ma-a*
42. IGI-KALAM-*ma-ke₄*
43. SÍ *e-na-sá-a*
44. KUR-KUR GÌR-*na*
45. *e-ni-sè-ga-a*
46. UTU-*è-ta*

Սյունակ II

1. ^dUTU-šú-šè
2. GÚ *e-na-gar-ra-a*
3. *u₄-ba*
4. A-AB-BA-
5. SIG.TA-*ta*
6. IDIGNA-
7. BURANUN (U₄.KIB.NUN.KI)-*bi*
8. A-AB-BA-
9. IGI.NIM-*ma-šè*
10. GÌR-*bi*
11. SI *e-na-sá*
12. UTU-*è-ta*
13. UTU-šú-šè
14. [^dE]n-*líl-le*
15. [GABA-Š]U-GAR
16. [*n*]u-*mu-ni-tu-ku*

Թարգմանություն

Սյունակ I

1. Ի պատիվ Էնլիլի՝
2. բոլոր երկրների արքայի,
3. Լուգալզագեսին՝
4. Ուրուկի արքան
5. (և) Երկրի արքան ...
.....
36. Երբ Էնլիլ աստվածը՝
37. բոլոր երկրների արքան
38. Լուգալզագեսիին
39. արքայություն (*իշխանություն*)
40. երկրի վրա
41. շնորհեց (*տվեց*):
- 42-43. (*հնազանդորեն*) դեպի իրեն ուղղված (*բոլոր*) երկրի
(*ժողովուրդների*) աչքերը
- 44-45. բոլոր հողերը նրա ոտքերի տակ դրեց,
46. (և) Արևելքից

Սյունակ II

1. (մինչև) Արևմուտք
2. հպատակեցրեց նրանց:
3. Այնուիետև
4. ծովից
5. Ստորին
6. Տիգրիսով (ով)
7. Եփրատով (Տիգրիսի և Եփրատի երկայնքով)
8. (մինչև) ծովը
9. Վերին՝
- 10-11. նրա համար նա (Էնլիլը) կարգի բերեց նրանց ճանապարհները:
12. Արևելքից
13. Արևմուտք
14. Էնլիլը
- 15-16. նրան մրցակից չթողեց:

ԳԼՈՒԽ 3
ԱՔՔԱԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ
ՄԱՍԻՆ

ՍԱՐԳՈՆ ԱՔՔԱԴԱՑՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աքքադի պետության և արքայատոհմի հիմնադիր Սարգոն (Շար-րու-կին) Աքքադացու (Ք.ա. 2334-2279 թթ.) ներքոշարադրյալ արձանագրությունը պահպանվել է երկու լեզվով՝ շումերերեն ու արքադերեն: Արձանագրության երկու տարբերակներն էլ նույնական են: Սույն տառադարձման մեջ կներկայացնենք արքադական տեքստը: Արձանագրության մեջ նկարագրված են Աքքադի արքայի հաղթական գործողությունները Ուրուկի, Ուրի, Է-Նիմարի, Լագաշի և շումերական այլ քաղաք-պետությունների նկատմամբ: Բավականին մեծ տեղ է հատկացված Ուրուկի արքա Լուգալզագեսիի նկատմամբ տարած հաղթանակին ու Ուրի գրավմանը:

Արձանագրությունն ու արձանագրությունից ներկայացված ներքոշարադրյալ տողերը նույնական են նաև Դ. Ֆրայնի դիվանի E2.1.1.2 արձանագրության 71-91-րդ տողերին:

